9423

Օձար Իսայան

Քաջա Թանէր և Ձանեայան

1927

891.5
О-47

Երևան 1923թ.

391.5
0-47

29 JUN 2006

19 NOV 2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՄԱՐԹԻՆԻ

ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ

ԲԱԲԱ ԹԱՀԷՐ ԵՒ ՋԱՆԱՋԱՆ

Նա որ տէր դարձաւ գիտութեանց ամեն,
Դարձաւ աշխարհում մի լոյս մարդագրաւ,
Այս մութից դէպ դուրս ճամբայ չը ճարեց,
Պատմեց մի հէքեաթ եւ 'ի քուն մտաւ:

ԹԱՐԳՄ. ԲՆԱԳՐԻՑ

ՅՈՎՍԷՓ Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆՑ

Տպ. Ընկ. «ՄՈԴԵՐՆ» Թէհրան.

0 2 .09. 2013
9423

ՁՕՆ

ՊԱՐՍԿԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Սիրելի հայրենակիցներ

Իմ անկեղծ ափսոսանքը միշտ եղել է այն՝ որ պարսկահայութիւնը—ընդհանրապէս առած—դարեր շարունակ ապրած լինելով այս երկրում՝ դեռ չէ կարողացել խորապէս ճանաչել եւ ըստ արժանւոյն գնահատել այս մեծ ժողովրդի, մանաւանդ, մտաւոր առաւելութիւնները։

Որպէս զի մասամբ հասած լինիմ իմ նպատակիս եւ ծանօթացնեմ ձեզ պարսկական խորաթափանց մտքի արտադրած բազմաթ[illegible]ծարժէք մարգարիտներից մի քանիսի հետ, որպէս զի ա[illegible] եւ աւելի մերձեցման առիթներ ու հակումներ առեղծեմ հա[illegible] ու պարսիկ ժողովուրդների մէջ, որպէս զի ցոյց տուած լինիմ իմ հիացմունքը դէպի մեր պարսիկ հայրենակիցների գրական—գեղարուեստական բարձր արժանիքները, եւ վերջապէս, որպէս զի յայտնած լինիմ իմ սէրն ու յարգանքը դէպի երկու ժողովուրդներն էլ, պարսկական բանաստեղծութեան աննման ու մեծաճոխ բուրաստանից քաղած մի վարդ նուիրում եմ ձեզ։

Յ. Զ. Միրզայեանց

Թէհրան, Նոյեմբեր 1923

3508-71

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Խայյամի քառեակներն ընտրելիս թարգմանութեան համար՝ ես չեմ գործադրել հնագիտական հետախուզութիւններ ստուգելու, թէ որոնք են իսկապէս պատկանում նրան։ Չեմ վարանում ասելու, որ ով էլ պարապել է այդպիսի արուեստով, չէ կարողացել հանել փաստացի տուեալների, այլ կանգ է առել միայն ենթադրութիւնների առաջ, մեծապէս հիմնուած ճաշակի և իրեւոյթների վրայ։

Ես էլ, թէև հաճութեամբ ու հետաքրքրութեամբ լսել եմ պարսիկ նշանաւոր գրագէտների գաղափարը այդ մասին, բայց առաւելապէս առաջնորդուել եմ իմ ճաշակով և աւանդութիւնների ցուցմունքներով։

Ես աշխատել եմ նաև բաց չթողնել որևէ քառեակ, որը կարող էր լոյս սփռել մեծանուն բանաստեղծի գաղափարներից մէկն ու մէկի վրայ, բայց խոյս եմ տուել ձանձրացուցիչ կրկնութիւններից, որոնք շատ են գտնւում Խայյամի անուամբ հրատարակուած գրքում։

Ուր թեթև փոփոխութիւններով նոյն միտքը անընդհատ կրկնւում է բազմաթիւ քառեակների մէջ, ես դրանցից ընտրել եմ միայն մի քանի հատ ամենից գեղեցիկը և ամենից օրիգինալը, և մնացածը բաց եմ թողել, որովհետև նախ՝ եթէ բոլորը թարգմանէի, տպաւորութիւնը կը թուլանար, և ապա ես չեմ կարողացել համոզել ինձ որ այդ բոլորը բղխում է Խայյամի գրչից։ Խայյամի պէս հազուագիւտ գիտնական մարդը չէր կարող բանաստեղծութեան

մէջ գործել ձանձրացուցիչ՝ նոյն իսկ դայրացուցիչ կրկնութիւնների յանցանքը։ Գլխաւորապէս այս պատճառով է որ հասկացող մարդիկ աւելի սակաւաթիւ քառեակներ են վերագրում Խայյամին քան տպագրւում է նրա գրքում։ Բացի սրանից, գրական հոտառութիւն ունեցող մարդը հազար ու մի անբացատրելի մանրամասնութիւններից կարողանում է զգալ ու գնահատել առաջնակարգ վարպետի և երկրորդական երգիչների մտքի ու գրչի արտադրութեան տարբերութիւնը—այս հոտառութիւնը՝ որ անուանեցի ճաշակ, եղել է իմ գլխաւոր նեցուկը, և ապագան ու անաչառ բննադատութիւնը ցոյց կը տան թէ ես ո՛ր աստիճան իրաւացի եմ եղել։

Քառեակը անպատճառ չորս շարքի վերածելու՝ կամ սկզբից մինչև վերջ նոյնանման չափ պահպանելու ցուցամոլութիւնը երբէք չէ գրաւել ինձ։ Իմ մտահոգութիւնը եղել է հարազատութիւն պահպանելով հանդերձ՝ տալ գեղեցիկ, և հռչակաւոր հեղինակին ոչ շատ անարժան, հայերէն ոտանաւորներ, և հետևաբար ուր նիւթը պահանջել է, ես առանց տատանուելու, պարսկերէն մէկ շարքը մէկ ու կէս և նոյն իսկ երկու շարքի եմ վերածել, և չափն էլ փոփոխել եմ ըստ հայերէնի և նիւթի տրամադրութեան։ Թէ լաւ եմ արել կամ վատ, դա էլ կը պարզուի ընթերցող հասարակութեան դատավճռից։

Գալով նիւթի դասաւորութեանը՝ պէտք է ասեմ որ պարսկերէնում քառեակ կամ որև է այլ բանաստեղծութիւն ընդհանրապէս դասաւորւում է յանգերի վերջին տառի այբբենական, բառգրքային կարգով։ Բայց ես հետևելով իմ մի բարեկամի խորհրդին հայերէնում դասաւորել եմ ըստ նիւթի՝ առաջնութիւն

տալով կարճ չափերին։ Յոյս ունիմ որ այդ ձևով ընթերցողը աւելի դիւրութիւն կունենայ իր ուզած ոտանաւորը գտնելու գրքի մէջ։

Խայյամի մասին հոգեբանական մի աշխատասիրութիւն գրելու և մանաւանդ հրատարակելու դիտաւորութիւնը ես բնաւ չունէի։ Չորս տարի առաջ ներկայ ուսումնասիրութիւնը կազմեցի գրական շրջանում իբրև դասախօսութիւն կարդալու նպատակով, իսկ դրանից յետոյ իմ ընկերների և բարեկամների ճնշման տակ ստիպուած եղայ կցել այս թարգմանութեանը։ Համարձակուելով այդ աշխատանքը դնել հասարակութեան առաջ, այս քան միայն կարող եմ աւելացնել որ դրա մէջ ամփոփուած են միայն ու միայն իմ գաղափարները Խայյամ-մարդու մասին։ Ես չեմ ուրանել տեսնելու թէ ուրիշներն ինչ են կարծում նրա վերաբերմամբ. ո՛չ, նոյն իսկ, ուր կարելի էր օգտուել, ես խոյս եմ տուել այդպիսի աղբիւրներից մի գուցէ ընկնեմ մի՝այլ մտածողի ազդեցութեան տակ։ Ինչու հաւակնութիւն չունիմ կարծելու որ ես սխալուած չեմ Խայյամի իմ գնահատութեան մէջ, բայց դրականապէս կարող եմ ասել որ ինչ դրել եմ՝ դա իմ խորին համոզումն է, և ներողութիւն եմ խնդրում հասարակութիւնից որ այդպէս երկարօրէն ՚ի չարն եմ գործ դրել նրա համբերութեան վրայ ինքս ինձ սեփականացրած իրաւունքը։

Նոյն սկզբունքը, որով մօտեցել եմ Խայյամի թարգմանութեան, ես գործադրել եմ նաև Բաբա—Թահէրի քառեակները հայերէնի վերածելիս։ Նրա մօտաւորապէս երեսուն տուն բանաստեղծութիւնից ընտրել եմ տասնվեցը միայն։ Թէ Խայյամի և թէ Բաբա—Թահէրի դէպքում, կարծում եմ ես տուել եմ այնքան՝ որքան բաւական է մի ընդարձակապէս զարգացած հայի համար լիուլի գաղափար կազ-

մելու այդ երկու բանաստեղծի մասին։

Ինչ վերաբերում է «Ջանազաններին», դրանք ժամանակի ընթացքում հաւաքուած ու թարգմանուած բանաստեղծութիւններ են տարբեր հեղինակների, որ կցել եմ Խայյամի և Բաբա—Թահէրի հրատարակութեան՝ հայ ընթերցողների համար իբրև նմոյշ ծառայելու պարսկական մտքի արտադրած գոհարների։

Սաադուց և Հաֆէզից ունիմ մեծածաւալ թարգմանութիւններ, որոնցից ոչ մէկը չեմ մտցրել այս գրքի մէջ, որովհետև մտադիր եմ լրացնել և նոյն ձևով ինչպէս Խայյամն է, առանձին գրքերով ՚ի լոյս ընծայել։

Ես կատարած չեմ լինի իմ պարտականութիւնը, եթէ այստեղ հրապարակաւ չը յայտնեմ իմ շնորհակալութիւնը Պրն. Մանուկ Մարթինին՝ առանց որի օգնութեան լոյս չէր տեսնի այս գիրքը, ինչպէս արդէն տասը տարուանից ի վեր պատրաստ է տպագրութեան համար և միջոցների սղութեան պատճառով մնացել էր ձեռագիր։

Ցովսէփ Միրզայեան

ԽԱՅՅԱՄԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Խայյամի մասին շատ տեղեկութիւններ չունինք։ Ինչ որ ստոյգ գիտենք այն է, որ նրա անունը Օմար՝ և հօր անունը Իբրահիմ (Աբրահամ) էր։ Նա Նշաբուր քաղաքի բնակիչ՝ և Հէջրի 5-րդ դարի ամենանշանաւոր փիլիսոփաներից մէկն է եղել։ Ժամանակի գիտութիւններից մեծ մասին տիրապետած լինելով՝ մաթեմաթիքայի և տիեզերագիտութեան մէջ յայտնի էր որպէս առաջնակարգ մասնագէտ:

Նրա մի աշխատութիւնը Ալջէբրայի մասին, որ տպագրուել է Եւրոպայում, պարզ ալացոյց է թէ այդ ճիւղի մէջ որքան գերազանց հմտութիւն է ունեցել նա։

Խայյամ մէկն էր այն գիտնականներից, որոնք Մալէք Շահի օրով—467 Հէջրի—կազմեցին Ջալալի կոչուած թուականը, որը ցարդ կազմուած ամենաճիշդ թուականներից է արևելքում։

Բանաստեղծի կենսապատմութեան* մասին գրեթէ ոչ մի հաւաստի բան չգիտենք, բացի այն յայտնի պատմութիւնից, որ վերջին պատմաբաններն են գրել թէ Խաջէ Նըզամ—օլ—Մօլքի և Հասան Սաբբահի հետ, (որ հիմնադիրն էր խորհրդաւոր կազ-

---

*Խայյամի կենսագրութեան վերաբերմամբ տեղեկութիւններ հաւաքելիս օգտուել եմ Ն. Վ. Զօքա-օլ-Մօլքի աշխատութիւններից, որին յայտնում եմ իմ շնորհակալութիւնը։

Ց. Զ. Միրզայեանց

մակերպութեան-Assassin-ների) պատանութեան ժամանակ դասակից լինելով՝ երեք երիտասարդները ուսումնարանում իրար հետ պայմանաւորւում են թէ նրանցից որ մէկը կեանքում բարձր դիրքի հասնէ, միւս երկսին էլ իր հետ բախտակից դարձնէ։ Հանգամանքի բերմամբ Խաջէ Նզամ—օլ—Մօլքը Սելջուկ Թագաւորների անուանի նախարարը դարձաւ, և կատարեց իր խոստումը։ Խայյամին, որ մեծ պաշտօնների և դիրքի փափագ չունէր, պարգևեց կեանքի ապահովութիւն, իսկ Հասան Սաբբահին, որ փառասէր մարդ էր, Ջալալ-օդ-դին Մալէք Շահի ծառայութեան մէջ ընդունեց։ Հասան Սաբբահի և Խաջէ Նզամ-օլ-Մօլքի յետագայ յարաբերութիւններին, թէև վերջին քննադատները մեծ պատմական արժէք չեն տալիս, բայց որովհետև խիստ գեղեցիկ են, մենք համառօտակի տալիս ենք ի գիտութիւն ընթերցողների։

Սաբբահը, ինչպէս ասուեցաւ, խիստ փառատենչ մարդ լինելով՝ առանց նկատի ունենալու որևէ երախտագիտական զգացմունք ղէպի իր բարերար ընկերը, անմիջապէս ծրագրեց նրա տեղն անցնել և դառնալ նախարարապետ։ Նա պատեհութիւնը երբէք չէր փախցնում ցոյց տալու Շահին, որ ինքը աւելի կարող և աւելի պիտանի մարդ է քան Նզամ-օլ-Մօլքը։ Չնայելով որ նրա բարեկամը նրան մի երկու անգամ յանդիմանեց նրա այդպիսի դաւաճան վարմունքի պատճառով, և սակայն խրատները նշանակութիւն չունեցան փառամոլութիւնից կուրացած մարդու համար։

Մի օր Շահը Նզամ-օլ-Մօլքից պահանջում է պետութեան եկամուտքի հաշիւը, և նախարարը վեց ամիս ժամանակ է խնդրում տոմարը պատրաստելու։ Հասան Սաբբահը, որ առաջին կարգի հաշուագէտ էր առիթը ներկայացած է համարում, մէկ հարուածով թէ իր արտակարգ արժանիքները երևան հանելու և թէ տապալելու Սաղրազամին։ Նա անմիջապէս առաջարկում է Շահին որ ինքը քառասուն օրում կը վերջացնէ պահանջուած

* Ի մէջի այլոց անտեղի չէ յիշել, թէ պարսկական Սեաղ կոչուած հաշւապահութիւնը, որ մինչև այսօր էլ գործ է ածւում Պարսկաստանում, նրա ստեղծագործութիւնն է։

հաշիւները։ Շահը ուրախութեամբ ընդունում է նրա առաջարկը և նրան է յանձնում այդ գործը։

Նզամ-օլ-Մօլքը նկատելով, որ այս անգամ ինքն անշուշտ պիտի վարկաբեկուի եթէ իր ընկերը յաջողութիւն ունենայ, դիմում է խորամանկութեան։ Նա լրտեսների միջոցով շարունակ տեղեկութիւններ ստանալով համոզւում է որ իրօք Սաբբահը քառասուն օրում կանոնաւորում և աւարտում է հաշիւները։ Վերջին օրը, նախ քան ներկայանալը Շահին, Սաբբահը գնում է բաղնիք, և հաշիւների կապոցը յանձնում է ծառային պահելու մինչև ինքը բաղնիքից դուրս գայ։ Ծառան կաշառուած լինելով Նզամ-յօ-Մօլքի կողմից, հաշուի թերթիկների կարգը խանգարում է, (Մինչև այսօր Սեաղ հաշիւը մանր թերթիկների վրայ է արձանագրւում) և կապոցը նորից յանձնում իր տիրոջը երբ որ նա դուրս է գալիս բաղնիքից։

Սաբբահը, ոչինչ չը կասկածելով՝ առնում է կապոցը և ուղղակի դիմում է պալատ, ուր ներկայանալով Թագաւորին սկսում է հաշիւների ընթերցումը, բայց կարգը խանգարուած գտնելով շփոթւում է, այն ինչ Նզամ-օլ-Մօլքը, որ ներկայ էր, խօսքն վրայ է բերում. ,,Այս մարդը յանդգնում է խաբել ձերդ մեծութեանը։ Ես ասացի որ չէ կարելի քառասուն օրում պատրաստել այսպիսի բարդ հաշիւներ։‘‘

Շահը, խիստ բարկացած՝ արտաքսում է Սաբբահին պալատից։

Սաբբահը, տեսնելով որ Նզամ-օլ-Մօլքի մահացու ատելութեան պատճառով՝ իր կեանքը չէր կարող ապահով համարուել մայրաքաղաքում, ծպտեալ փախչում է այնտեղից և այցելում է Եգիպտոսի Իսմայիլեանների ժամանակաւոր համալսարանը, ուր, շնորհիւ իր աշխարհածաւալ հռչակին, ընդունում է մեծ պատիւներով։ Շատ չանցած, նա Խալիֆէ Մոսթանսէրի արքունիքում այնպիսի բարձր դիրք գրաւեց, որ շարժեց բոլոր աւագանու նախանձը։ Պալատական ինտրիգների պատճառով նա ստիպուած եղաւ հեռանալ նաև Եգիպտոսից, և վերջապէս շատ արկածներից յետոյ 1080 թուականին, նա հաստատուեցաւ Ղազվինի մօտ Ալամութ լեռներում, որպէս պատմական յայտնի Assassin-ների գերագոյն իշխանը, կամ «Լեռների նահապետը»։ Քիչ յետոյ նա իր մարդասպանների ձեռքով սպանել տուեց Նզամ-օլ Մօլքին։

Դառնալով Խայյամին՝ պէտք է յիշատակել, որ նա եւրոպացիների և ամերիկացիների մօտ աւելի պատիւ է վայելում քան իր հայրենակիցների։ Դրա պատճառը նրա գիտութիւնը չէ, որովհետև նրա գիտական աշխատանքներից մեծ բան չէ մնացել, այլ նրան սիրելի և հռչակաւոր են դարձրել նրա բանաստեղծութիւնները, որոնք քառեակների ձևով թանկագին աւանդ են մնացել մեզ։ Եւ իրօք նրա թողած երկերը, պարսկական ամբողջ բանաստեղծութեան մէջ մի ինքնուրոյն կերպով են համեմուած։

Տասնիններորդ դարի կիսին, անգլիացի Ֆիտզջէրալտ, Խայյեամի քառեակները իր ազգային լեզուով ոտանաւորի վերածեց, կամ աւելի ճիշդն ասած, որոշ թւով անգլիերէն ոտանաւորներ գրեց, որոնց նիւթը քաղուած էր Խայյեամի մտքերից։

Այս բանաստեղծութիւնները մեծ ընդունելութիւն գտան եւրոպացիների, մանաւանդ անգլիացիների և ամերիկացիների մէջ, այնպէս որ առիթ դարձան զանազան ձևի գնահատութիւնների և յարգանքների արտայայտութեան դէպի բանաստեղծը և նրա աշխատութիւնները։ Մի խումբ եւրոպական գրողներ նոյն իսկ սկսեցին Խայյամի հետևողութեամբ երկեր արտադրել և նրանց պատճառով գեղարուեստական մի նոր հոսանք առաջ եկաւ, որի անունը ի պատիւ պարսիկ բանաստեղծի ,,Օմարիզմ‘‘ դրուեցաւ։ Այս ձևով մի պարսկաստանցու գաղափարները և զգացումները այն աստիճան ազդեցութիւն գործեցին 19-րդ և 20-րդ դարի եւրոպական մտքի վրայ, որ այդ երևոյթը խիստ պատուաբեր է արևելեան ցեղերին ընդհանրապէս և Պարսկաստանին մասնաւորապէս։

Խայյամի բանաստեղծութիւնները պերճաբանութեան տեսակէտից կատարելութեան են հասնում, և ինչ որ աւելի թանգ արժէ, բոլորովին ազատ են արուեստակեալ և կեղծ հանգամանքներից, որ այլ պարսիկ բանաստեղծների մէջ շատ են աչքի ընկնում։

Դժուարութիւնը ընդհանրապէս կայանում է նրանում, որ Խայյամի իսկական քառեակները տարբերուին այլ քառեակներից, որ նրա անունով լոյս են տեսել և իրօք նրան չեն պատկանում։

Դրա պատճառը այսպէս կարելի է բացատրել։ Մինչև Խայյամի երևան գալը, «ռօբայիներ» գրել ընդունուած չէր պարսիկ բանաստեղծների մէջ, և շատ փոքրաթիւ հեղինակներ քառեակներ էին թողել յիշատակ, և այն էլ աննշան՝ թէ որակի և թէ քանակի կողմից։

Երբ որ Նշաբուրցի գիտնականի երկերը երևացին հրապարակի վրայ, այնքան ուշադրութեան արժանացան, որ մի յեղաշրջում առաջ բերին ի նպաստ քառեակների, և հետագայ հեղինակներից շատերը սկսեցին գրել նոյն ուղղութեամբ։ Ներշնչուած լինելով Խայյամից իրենց ոտանաւորների ձևի նկատմամբ՝ նրանք մասամբ էլ ներշնչուեցան մեծ բանաստեղծի երգած նիւթից, և այսպիսով մեծ նմանութիւն գոյացաւ հետևողների և առաջնորդի արտադրած քերթուածների մէջ։ Սկզբնական շրջանում այդ նիւթերը հաւաքող և պահպանողներն էլ, չունենալով հարկ եղած քննադատական հմտութիւնը և հօտառութիւնը մէկը միւսից տարբերելու համար, բոլոր այդ գրուածները համախմբել են Խայյամի անուան տակ, այնպէս որ այժմ խիստ դժուար է այդ շփոթութեան մէջ Խայյամի իսկական ոտանաւորները զատել միւսներից։

Այն քառեակները, որոնք այսօր տպագրւում են Խայյամի անունով, ութ հարիւրից աւելի են թւով։ Զանազան քննադատներ, զանազան ժամանակներում, աշխատելով իսկականները զատել կեղծերից, խիստ տարբեր գաղափարներ են յայտնել։

Չուզելով այս մասին խօսքը երկարացնել, այսքանը այստեղ սակայն հարկ է յիշատակել, որ ոմանք միայն յիսուն կամ վաթսուն տուն են համարում իսկական, ոմանք երկու կամ երեք հարիւր, իսկ ոմանք էլ մինչև հինգ հարիւր։

Յամենայն դէպս ի նկատի ունենալով, որ Խայյամի մասնագիտութիւնը բանաստեղծութիւն չէր, և նա չէ պարապել բանահիւսութեամբ թէ ու ժամանցի կամ զուարճութեան համար, կարծեմ պէտք է համաձայնուել նրանց հետ, որոնք հակամէտ են աւելի փոքրաթիւ ռօբայիներ վերագրել գիտնականին։

Չնայելով որ կան պարսիկ յայտնի գրագէտներ որոնք գերազանց ար-

ժէք չեն տալիս Խայյամի երկերին, և սակայն չէ կարելի ուրանալ որ նրա թա-ղած քերթուածը պարսկական լեզուի ամենախոշոր երևոյթներից է, և իր տեսակի մէջ անզուգական բնաւորութիւն ունի:

Ճշմարիտ է որ նրա շօշափած փիլիսոփայութիւնը նորութիւն չունի: Նրա-նից առաջ, և մանաւանդ նրանից յետոյ, աշխարհային հանգամանքների անկայուն բնաւորութիւնը, կեանքի անարժէք և վաղանց յատկութիւնը պարսիկ հեղինակները բազմապիսի ձևերով ու ոճերով երգել են, բայց նրանց մեծ մասը, եթէ չասեմ ամբողջը, այդ մասին խօսել են որպէս գիտնականներ կամ քննադատներ, սակայն Խայյամ՝ այդ նիւթի համար մի ինքնայատուկ, զգածուած, մելամաղձոտ և պատ-կերաւոր լեզու ունի: Նա մի քանի կարճ բառով այնպէս տիրապետում է ընթերցողին, որ նրան կատարելապէս համոզելով՝ իր տրամաբանութեան իշխանութեան տակ է առնում: Ցաճախ նրա տրամախոհութեան ձևը այնքան գողտրիկ, և այդ քննաբանութիւնից առաջ բերած եզրափակումը այնքան հաճելիօրէն անա-կնկալ է, որ, որպէս թէ յայտնութեան առաջ՝ մարդ անձնատուր է լինում, և եթէ կարողանայ էլ՝ չէ ցանկանում հակառել—մի զոյգ գրանով բերանէ այն դուրեկան հմայքը որ բնափոխել է ընթերցողի զգացմունքը ընտիր բառերի վար-պետ հիւսուածքի ազդեցութեան տակ:

Խայյամ յաճախ է պատճառաբանում, և տրամաբանութիւնը, թէև զուտ մտքի ծնունդ է, և խօսում է մտքի հետ, բայց այս հազուագիւտ տաղանդի գրչի տակ կարծես հրաշքով դարձել է զգացումներ յեղաշրջելու մի գործիք, և ընթերցողը փոխանակ մտաւոր յագուրդ ստանալու, համակւում է կարծես ինչ որ արբեցուցիչ նիւթի ազդեցութեամբ:

Խայյամի միտքը վերին աստիճանի ազատ է և յանդուգն: Նա իր փիլիսո-փայութեան ճշմարտութիւնը ապացուցելու համար մի քանի բառով փշրում է կրօնական շատ ուսուցմունքներ և սրբագրացած աւանդութիւններ:

Կրօնապետները նրա համար վարձկան կեղծաւորներ են և արհեստաւոր մարդահալածներ:

Մի կրօնապետ մի բոզի
Ասաց, ,,Հարբած ես, ո՜վ կին‘‘,
Ամեն րոպէ, դու անարգ
Հիւր ես մէկի հաճոյքին,
Իսկ կինն ասաց, «ո՜վ սուրբ մարդ,
Ինչ ասացիր, այդ կամ ես.
Բայց ինչ որ ցոյց ես տալիս,
Արդեօք դու էլ կա՞ս այնպէս‘‘:

Ո՜վ մեր քաղաքի սրբազան մօֆտին,
Չես կարող լինել դու մեր չափ աննենգ,
Եւ մենք այս բոլոր հարբելով հանդերձ,
Քեզնից աւելի բգգաստ ու լուրջ ենք:
Խմում ենք մենք միշտ արիւնը որթի
Եւ մարդկանց արիւն խմում ես միշտ դու,
Անաչառ դատիր, արդեօք մեզանից
Ո՞րն է աւելի վատ արիւնարբու:

Իսկ կրօնքի արտաքինը ուրիշ բան չէ եթէ ոչ մի սանձ յիմարների և վայ-րենիների համար:—

Տօնն եկաւ և այժմ մեր բանը լաւ է,
Սաղին հին գինով կուժը կը լեցնի.
Ծոմը—ցոկակապ և նամազը—սանձ՝
Տօնն այս էշերի գլխից կը հանի:

Նա նոյն իսկ չէ քաշւում բանակռուի և վիճաբանութեան մէջ մտնել գե-րագոյն Էակի հետ, և աւանդութիւնն ասում է, որ մինչև անգամ Աստուած ընդունեց նրա տրամաբանութեան ճշմարտութիւնը և նրա այն երեսը որ սևացրել էր, նը-

րան, հայհոյանքի պատճառով, պատժելու համար, նորից սպիտակացրեց։

Ահա այդ նշանաւոր քառեակը, որի պատճառով Խայյամի մէկ երեսը սևացաւ։

Անօթն իմ գինու, Տէր իմ, կոտրեցիր,
Դուռը ցնծութեան գոցեցիր առ էս
Թափեցիր գինիս վարդի պէս կարմիր,
Հարբած ես, Տէր իմ, հո՞ղը գայ բերնիս։

Եւ ահա այն տողերը որոնցով որպէս թէ նա ներում է խնդրում Աստուածանից, և որոնց պատճառով դարձեալ նրա երեսը սպիտակում է և դառնում առաջուայ նման։

Ասա ինձ խնդրեմ, ո՞վ է աշխարհում
Որ մեղք չունենայ.
Այն մահկանացուն որ մեղք չը գործեց,
Ինչպէս ապրեց նա։
Ես վատ եմ անում և Դու ինձ վատով
Պատժում ես, ո՞վ Տէր,
Ասա ինձ խնդրեմ, ապա ես և Դու
Ի՞նչով ենք տարբեր։

Այս բառերով, ինչպէս տեսնում էք, Խայյամ ստորաքարշ ներողութիւն չէ խնդրում Աստուածանից, այլ հանդէս է գալիս ընդդիմախօսութեան հզօրութեամբ և արդարադատութեան պահանջի համարձակութեամբ։

Եւ սակայն չէ կարելի ասել որ Խայյամի անվախ վերաբերմունքը դէպի գերագոյն էակը առաջ է գալիս նրանից, որ նա անհաւատ է կամ թերահաւատ։ Խայյամ անպայման նրանցից է, որ մեծ արժէք չեն տալիս կրօնական կեղևային ուսուցմունքներին և ծէսերին, բայց ինչ վերաբերում է Աստծուն, նա խորապէս երկիւղած է, և վստահօրէն կարելի է ասել, որ նրա յանդուգն ոճը Աստուծոյ հետ խօսելիս աւելի շատ հիմնուած է անխախտ հաւատքի վրայ քան անհաւա-

տութեան։

Նա Աստուծոյ առաջ ներկայանում և իր դատը փաստաբանում է ինչպէս սահմանադրական մի երկրի քաղաքացին կը ներկայանար իր վճռաբեկի առաջ, իր իրաւունքներին գիտակից մարդու նման, որ պաշտպանուած է անսասան օրէնքների անխորտակելի պատնէշներով։

Նա չէ հպատակը մի ինքնակալ բռնապետի, որ չը գիտէ որտեղից քմահաճ և անակնկալ պատիժների կարող է դատապարտուիլ թագաւորի կողմից։

Ուրիշ ինչ ձևով կարելի է ըմբռնել այս տողերը։

Եթէ ես մեղք չը գործեմ,
Աստծոյ գութին ինչ կարիք.
Շնորհիւ մեղքիս է միայն
Որ գութն ունի արժանիք.

Աստուած որպէս մի վարդի,
Պճնեց ու մեզ հող տարաւ,
Գիտէր թէ մեր գործերից
Ինչ դուրս կը գայ—վատ կամ լաւ։
Չէ, ինչ յանցանք որ գործենք,
Առանց Նորա հրամանի,
Ո՞ւրկից ապա դուրս եկաւ
Հուրն ու տանջանք գեհենի։

Հարիւր տարի թէրև փորձ
Մեղք կը գործեմ ես ազատ,
Կամ գութդ է շատ իմ մեղքից,
Կամ Քո գութից մեղքս է շատ։

Ինչպէս պարզ երևում է այս տողերից նա մի անդրդուելի հաւատք ունի դէպի Աստուծոյ ամենողորմութիւնը, և հենց այդ պատճառով նա չէ կարողանում մի րոպէ ենթադրել, որ այդ անհուն գութը կարող է ընկճուել կամ պարտուել բանաստեղծի հարիւր տարուայ սահմանափակ մեղսագործութիւնից, Թէկուզ դիտմամբ էլ արուած լինին նրա յանցանքները, և նրան յանձնել յաւիտենական գեհենի հուրին: Մանաւանդ, որ Ամենիմաստութիւնը—որին նա դարձեալ խորապէս հաւատացած է—գիտէր Թէ բանաստեղծը մեղք է գործելու:

Ամենիմաստունն սկզբից գիտէր
Կը խմեմ գինի,
Եթէ չը խմեմ Նորա գիտութիւնն
Անճիշտ կը լինի:

Նա աւելի առաջ է գնում ընդունելով Աստծուն իբրև իր Արարիչը, և ասում է—

Ե՛ս ինչ անեմ, շաղախելիս Դու կաւն իմ,
Ե՛ս ինչ անեմ, Դու ես գործել կտաւն իմ.
Ինչ լաւ ու վատ որ ինձանից է գալիս,
Ե՛ս ինչ անեմ, Դու ես գրել ճակատիս:

Պաշտպանելով իր իրաւունքը գթառատութեան գահի առաջ պատժազերծ մնալու համար, նրա մտքի տրամադրութիւնը դէպի այդ յաւիտենական Ողորմածութիւնը, և սակայն, չէ անպատկառ կամ ըմբոստ: Ո՛չ, նրա մտքի գերազանց ճկունութիւնը կայանում է նրա մէջ, որ իր տկարութիւնը հզօր զէնք դարձրած՝ դատավարութեան մէջ է մտնում իր Ստեղծողի հետ:

Նա Թէև ինքն իրան արդարացնում է, բայց և այնպէս նրա յաղթութիւնը, զուրկ է փառքից և պարծանքից: Ընթերցողը գուցէ կարող է սքանչանալ նրա հանճարի վրայ, որ նա ինչպէս մեղքը և Թուլութիւնը—երկուսն էլ դատապարտելի և պարտելի Թերութիւններ—միջոց է դարձնում իր ձեռքում փայլուն կերպով իր իրաւացիութիւնը ապացուցելու համար, երբ ներկայանում է հաշւետուութեան օրը, բայց ինքը, բանաստեղծը ամաչում է իր տարած յաղթանակից:

Ասենք, որ Դու ներեցիր
Արածս ամեն Քեզ ընդդէմ,
Այն ամօթից, որ գիտես
Ինչ եմ արել, ինչ անեմ:

Թէև ինչպէս վերն ասացինք Խայյամ Թերահաւատութեամբ է վերաբերւում դէպի մահմեդականութեան ուղղափառ դոգմաները և ոչ մի յարգանք չունի դէպի կրօնքի ընչաքաղց ու մարդահալած վարդապետները, բայց ինքն ունի մի հաւատատուն դաւանանք և ահա նրա հաւատամքը:

Աստուած է հոգին համայն տիեզերքի,
Տիեզերքն ամեն՝ մարմինը Նորա:
Դասերն ու կարգերն հրեշտակների
Են ըզգայարանքն այդ կազմի հսկայ:
Երկինքը՝ տարերք, և անդամներն էլ
Թագաւորութիւնն՝ են այդ բնութեան:
Միաստուածութիւնն հէնց այս է որ կայ,
Եւ խաբէութիւն՝ ամեն ուրիշ բան:

Այստեղ Թէև Խայյամ դաւանում է, որ Աստուած հոգին է համայն տիեզերքի, և տիեզերքը Նրա մարմինն է, բայց չպէտք շփոթուել ու կարծել Թէ Նա ընդունում է մի բնութիւն, որի մէջ կայ ինչ որ մի անորոշ, անանձնաւոր գուցէ աննպատակ զօրութիւն, կամ ինչպէս փիլիսոփաներն են ասում «Կեանքի սկզբունք»: Ո՛չ, Նա ընդունում է որ մի խիստ ճշտուած անձնաւորութեան Տէր Ամենատեղծ, Ամենակարող, Ամենիմաստուն, Ամենողորմ Աստուած գոյութիւն ունի, այլապէս Նա յաճախ չէր դառնայ դէպի այդ Էակը իր գանգատներով, իր փառաբանութեամբ իր աղերսներով և վերջապէս իր պաղատանքով:

Որպիսի սէր է արտայայտում Նա դէպի Անիմանալին հենց այս տողերի մէջ, որով Նա միաժամանակ ճարպիկ ռազմավարի պէս մէկ հարուածով Թէ փըշ-

րում է խօսքի հաւատալիքը, այսինքն մարդ պատժապարտ է, թէ փրկում է իր հոգին որևէ ապագայ պատժի հաւանականութիւնից, և թէ յայտնում իր կատարեալ նուիրուածութիւնը դէպի Արարիչը և Նրա կամքը։

Ասացիր թէ ինձ պիտի պատժես Դու.
Զարմանք է թէ այդ ո՞ւր է լինելու։
Այնտեղ, ուր կաս Դու, չըկայ պատուհաս,
Իսկ ո՞րն է այնտեղ, ուրտեղ Դու չըկաս։

Այս գերազանցապէս հանճարեղ տողերի մէջ Նա իր մի քանի սկզբունքը մէկ անգամից է երևան բերում։ Նախ ընդունում է որ Աստուած ամեն տեղ կայ և ոչ մի տեղ չէ կարելի գտնել անհունների անհունութեան մէջ, ուր Նա ներկայ չը լինի։ Եւ ապա Նա յայտնում է իր անսահման սէրը դէպի աստուածային էակը։ Ընդունելով Աստծուն որպէս իր Սիրեցեալը միայն, կարող էր Նա և կը յանդգնէր ասել «այնտեղ ուր կաս Դու, չկայ պատուհաս»։

Այլ խօսքերով Նա պարզապէս Աստծուն ասպարէզ է հրաւիրում, որ իր ամենակարողութեամբ հանդերձ, չէ կարող պատժել բանաստեղծին, որովհետև ամբողջ անհունութիւնների մէջ մի պատժավայր չէ կարող գտնել, այն պարզ պատճառով որ ուր Աստուած կայ այնտեղ բանաստեղծը—իր Սիրեցեալի ներկայութեամբ—իրեն կատարելապէս երջանիկ կզգայ, և Աստուծոյ ներկայութեան բարօրանքը իբրև կը հանէ աստուածային պատժաբարութեան ամեն փորձ։ Խայյամ պաշտամունք մատուցանում է առ Աստուած, և ահա Նրա աղօթքը,

Դու ես տալիս ինձ բարին,
Դու ես առնում չարն իսպառ.
Ողորմութեամբդ անմեկին,
Ո՛վ Աստուած իմ, տո՛ւր և ա՛ռ։

Խայյամ ոչ միայն ունի Աստուած, ամուր հաւատք առ անքննելի Էակը և կըրօնք, այլ ունի նաև կրօնական բարոյագիտութիւն։ Նրա վարդապետութեան մէջ առաջին և ամենածանրակշիռ տեղը բռնում է Սէրը։

Ինչ սիրտ որի մէջ կայ լոյսը Սիրոյ
Լինի նա իսլամ, լինի անհաւատ,
Թէ անունը կայ սիրոյ տոմարում
Անկախ է դրախտից, դժոխքից՝ ազատ։

Արդեօք այս տողերը չեն յիշեցնում մեզ Պօղոս առաքեալի նամակը կորնթացիներին, ուրտեղ ասում է, որ եթէ մարգարէութիւններ ունենամ, ամբողջ ունեցածս աղքատներին, և մարմինս էլ նոյն իսկ այրելու տամ և սէր չունենամ, ոչինչ եմ։

Թէև Պօղոս առաքեալի գրածը Սիրոյ արժանիքի մասին, ցարդ համարում է ամենից պերճ ներբողը, որ մարդկային միտքը կարողացել է չարադրել ի դրուատանք սիրոյ, և սակայն Խայյամ չորս տողով աւելի բան է ասում։ Պօղոս Առաքեալի զեղուն արտայայտութիւնից այնպէս է երևում, որ եթէ սէր չունենաս Երկնից Թագաւորութիւնը չես կարող մտնել, բայց Խայյամ այնքան բարձր տեղ է յատկացնում սիրոյ համար, որ ասում է թէ ով սէր ունի—լինի նա նոյն իսկ անհաւատ—ոչ միայն ազատ է դժոխքից, այլ կարիքը չունի նաև դրախտի, որը մուսուլմանական լեզուով կարող է Երկնից Թագաւորութիւն նշանակել։

Նա ով սէր ունի դրախտ է ինքնին և պէտք չունի նոյն իսկ Աստուծոյ խոստացած այդ երանաւէտ բնակավայրին։

Խայյամ այստեղ քարոզում է ինչ որ Աւետարանի վարդապետութեան գերագոյն խորհուրդ, խորինն ու գիտենալիքն է—այն է ,,Աստուած Սէր է՚՚։ Ուրեմն ով սէր ունի, ունի և՝ Աստծուն իրան, և ով ունի Արարչին, գիտութեամբ կարող է արհամարհել արարածին, եթէ նոյն իսկ դրախտը լինի դա, որը անշուշտ ստեղծուած է հոգևպէս պակաս զարգացած էակների համար։

Մենք տեսանք ինչ է Խայյամի կրօնքի հոգևոր խորհուրդը։ Նա ունի նաև աշխարհային բարոյագիտական կաս և դա կատարելապէս համապատասխանում է Նրա դաւանանքի հոգևոր մասին։

Հոգևորապէս Նա գերագոյն տեղը յատկացնում է Սիրոյ։ Մարմնաւորապէս

Նա ուրիշ բան չէր կարող ասել, եթէ ոչ հրահանգել այդ սիրոյ կիրառումը ամենօրեայ կեանքի մէջ և այդպէս էլ անում է նա։

Բիւր հողի Քաաբա մէկ սրտի չարժէ,
Քաաբան քեզ ինչ պէտք, գընա սիրտ շահիր։

Երկիւղածութեամբ թէ օր ու գիշեր
Կըրես դու տանջանք,
Լաւ չէ նորանից, որ մէկ հատ սրտի
Բաշխես ըսփոփանք։
Մէկ ազատ մարդու թէ գերի շինես
Քո սրտով բարի,
Լաւ է նորանից, որ ազատ թողնես
Հազար հատ գերի։

Ուշադրութեան արժանի են այս վերջին տողերը, որոնցով Խայյամ բացարձակ կերպով գերադասում է մարդասիրութիւնը բարեգործութիւնից։ Շատ ճիշդ է նըկատում Խայյամ, որ բարիք գործելը միշտ բարի սրտի նշան չէ։ Ինչ որ Խայյամի համար կարևոր է, ոչ թէ արուած գործն է կամ դրա արդիւնքը, այլ այդ գործի դրդապատճառը։

Եթէ քո բարերարութեանդ առիթը բարի սիրտդ է, որքան էլ քիչ արդիւնք ցոյց տաս, դա գնահատելի է նրա համար շատ աւելի քան մի այլ երախտագործութիւն որի մղիչ ոյժը սրտի գթառատութիւնը չէ։ Որքան էլ մեծ լինի այդ երկրորդ տեսակի բարեգործութեան հետևանքը, Խայյամ նրան արժէք չէ դնում բնաւ, և ես հաւատացած եմ, ոչ մի ազնիւ հոգի չը կայ որ համաձայն չը լինի բանաստեղծ բարոյագէտի հետ։

Նա չէ բաւականանում դրանով, որ ընդհանուր սէր է քարոզում դէպի ամեն ոք, այլ նա պահանջում է սէր դէպի թշնամին։

Ես քո բարին եմ ուզում,
Իսկ ինձ համար դու՝ չարիք,
Չարիք բընաւ չի գայ ինձ,
Եւ չես տեսնի դու բարիք։

Ինչքան համանման է այս վարդապետութիւնը առաքեալի ասածին, թէ սիրիր թշնամուդ, բարի արա քո չարակամիդ և դըանով նրա գլխի վրայ կրակի կայծեր կը դիզես։

Եւ ասել որ մահմեդական կրօնապետները դարեր շարունակ բանադրել են Խայյամի բանաստեղծութիւնները որպէս անկրօնութիւն ուսուցանող վնասակար հեղինակութիւն։ Իրենց տեսակէտից ճիշդ է, որ Խայյամ անկրօն էր. բայց Խայյամ ունէր մի դաւանանք շատ աւելի բարձր քան կրօնապետական կաղապարում ձուլուած ու չորացած մտքերը կարող էին ըմբռնել։

Խայյամ իր բարոյախօսութեան մէջ, որոնում է նոյն անկեղծութիւնը և նոյն մաքրութիւնը, որ Աւետարանից բացի քիչ տեղ կարելի է գտնել։—

Հարբել ջըրով խաղողի
Հազար անգամ լաւ է քան
Գոռոզանալ ու պանծալ
Արդարութեամբ սեփական։

Արդեօք այս տողերը մեզ չեն յիշեցնում փարիսեցու և մաքսաւորի առակը որոնք երկուսն էլ գնացին տաճարը աղօթելու։ Փարիսեցին պարծենում էր Աստուծոյ առաջ իր անմեղութեամբ, իսկ մաքսաւորը կեցած տաճարի ցածում իր կուրծքն էր ծեծում և ասում «Տէ՛ր, ողորմի՛ր ինձ մեղաւորիս»։

Քրիստոս իր անեղծանելի վճիռը կարդաց այդ երկսի վերաբերմամբ, ասելով մաքսաւորը տուն գնաց աւելի արդարացած քան փարիսեցին։

Այդպիսի աստուածային հեղինակութեան արձակած դատավճիռն ընդունելով որպէս հիմունք՝ մենք կարող ենք համարձակ կերպով ենթադրել, որ որքան էլ խիստ

լինէր ուղղափառ կղերապետների անաթեման մեղանչաւոր բանաստեղծի հասցէին, երբ նրանք միասին ներկայացել են իրենց Աստուծոյ գահի առաջ, Խայյամի գինարբութիւնը պակաս դատապարտելի է գտնւել քան կղերականների ինքնահաւան հպարտութիւնը։

Հոգեկան վերամբարձման մի բոպէում, Խայյամ այնպիսի մի նորաշունչ գովեստ է կարդում Աստուծոյ հասցէին որ պարզապէս յայտնում է թէ Խայյամի աստուածասիրութիւնը բոլորովին ազատ է եղել եսասիրական ամեն կեղտոտ միտումներից։ Այդ գաղափարը, իր վեհութեամբ հանդերձ, արտայայտում է մի հանգամանք, բոլորովին անծանօթ ցարդ գոյութիւն ունեցած կրօնասոյց հաւատամքներին, որ յաւիտենականութեան էլ պատկանում լինին գուցէ։

Սաղի՛ տո՛ւր ինձ մի բաժակ,
Աստուած մեծ է ու գթած,
Եւ կը ների իր տկար
Ծառաներին անկասկած.
Մի՛ ձևանար բարեպաշտ,
Գինի խմի՛ր դու զարնան,
Քանզի կարօտ չէ Աստուած
Պաշտամունքին մարդկութեան.

Բոլոր այն կրօնական վարդապետութիւնները, որոնց հետ մենք ծանօթ ենք, մեզ սովորեցնում են—ճիշդ է—որ մենք պաշտելով Արարչին և հնազանդելով Նրա հրահանգներին մեզ ենք փրկում չարիքներից և արժանացնում բարիքների թէ երկրաւոր և թէ մանաւանդ երկնաւոր, բայց միւս կողմից նրանք մեզ ենթադրել են տալիս, և յաճախ պարզապէս ասում են, թէ Աստուած էլ ցանկանում է որ մենք պաշտենք Նրան։ Ուրեմն եթէ ցանկանում է նշանակում է մի պէտք, մի կարիք է զգում այդ բանին, և եթէ կարիք է զգում նշանակում է մի բան պակաս կայ Նրա մօտ, և այդ պակասը լրացնում է մեր պաշտամունքը։

Արդ այդպիսի կարիքի կամ պակասի ենթադրութիւնն իսկ մի Էակի վերա-

բերմամբ, որին մարդկութիւնը պաշտում է որպէս Ամենաբարի և Ամենակարողի, ուրիշ բան չէ եթէ ոչ տրամաբանութեան տեսակէտից՝ աբսուրդ, և հաւատքի տեսակէտից՝ հայհոյանք։

Հարցը շատ բարդ չէ երևում, բայց դարերի այսքան մեծ մարդկանց մէջ Խայյամն է եղել այն հազուագիւտներից մէկը, որ համարձակութիւն է ունեցել խորհելու և գոչելու:

Քանզի կարօտ չէ Աստուած
Պաշտամունքին մարդկութեան։

Նախ քան վերջակէտ դնենք մեր նիւթի այս մասին, անհրաժեշտ եմ համարում յիշել, ոչ թէ այն՝ որ Խայյամ կատարելապէս հաւատացած է հոգու գոյութեան, որովհետև այդ երևում է նրա ամբողջ բանաստեղծութիւնից զանազան ձևերով, այլ այն՝ որ հոգու և մարմնի յարաբերութիւնների մասին ոչ մի տեղ չեմ կարդացել ու չեմ լսել այնպիսի մի կենդանի և լրիւ նմանութիւն, ինչպիսին Խայյամն է տալիս հետևեալ չորս տողերի մէջ։

Կազմը սըրինգ է, մէջը կայ մի ձայն.
Հոգին գինի է և մարդը՝ սրուակ։
Ի՞նչ բան է, Խայյամ, մարդը հողեղէն.
Մտածին լապտեր, մէջը՝ մի ճրագ։

Այս նիւթը, որի մասին հատորներ կարելի է գրել, Խայյամ մի քանի բառով այնպէս է բացատրում, որ դրանից վճիտ ու դիւրըմբռնելի բան դժուար է երեւակայել։ Այդ պատճառով էլ փոխարէն որ ես իմ խօսքերով աղօտեմ խնդիրը, թողնում եմ դրան իր վսեմ պարզութեան մէջ։

Այնուամենայնիւ ինձ չէ թւում, որ մենք կարողացանք սպառել Խայյամի կրօնական և կրօնա—բարոյական ամբողջ դաւանանքն ու հաւատալիքը։

Ինչպէս գրեթէ ամեն ուրիշ մեծ բանաստեղծ և գիտնական Պարսկաստանում, Խայյամ ևս անշուշտ ունեցել է այնպիսի ուսումնասիրութիւններ և գուցէ նաև մարզանքներ, որոնք այժմ Եւրոպայում կոչւում են «Սպիրիտիզմ» և Պարսկաստանում ու

3508-74

Հնդկաստանում յայտնի են որպէս «Փաղր» և «Դարւիշութիւն», և որի ամենախոշոր սկզբունքը այն է՝ հոգին, միտքը և մարմինը կատարելապէս ազատագրել աշխարհային ու մարմնաւոր ամեն կապերից ու հոգսերից գեղեցիկ կերպով ամփոփուած են այս տողերի մէջ։

Որպէս տըղամարդ՝ հանգոյցը խզիր
Կին ու զաւակի.
Արձակւիր ի բաց ինչքի և արեան
Կապեր յոգնակի։
Ինչ որ ունենաս արգելք կը դառնայ
Ճամբին քեզ համար,
Կապերըդ կտրիր. կապուած չես կարող
Կտրել ճանապարհ։

Մենք կարիք չունինք ասելու, որ գինուն ձօնած նրա բանաստեղծութիւնները հոգևոր իմաստ ունին, որովհետև հետևեալ տողերը, աւելանալով նախնթացների վրայ, մեր մէջ կասկած չեն թողնում, որ Խայյամ հետևելիս է եղել ինչ որ մի խորհրդաւոր դպրոցի, որի մասին ազատ խօսել նրան չէ արտօնել կամ սեփական և կամ ուրիշի կամքը։

Աշխարհի գաղտնիքն ինչպէս կայ դա մեր
Տետրակում գըրուած,
Չեմ կարող ասել, քանզի դա գինն է
Գուցէ իմ կենաց։
Այնինչ այս տղէտ մարդկանց մէջ չըկայ
Մէկը հասկացող,
Ինչ որ կայ թաքուն իմ սրտի խորքում
Ասել չեմ կարող։

Այս տողերով, ես կարծում եմ, Խայյամ վարպետը վճռականապէս ձգում է, և իր ներքին համոզումների մի մասը, գուցէ ամենից հետաքրքրականը և ամենից կարևորը, ընդ միշտ ծածկում մեր յետախուզութիւնից։

Բայց այն նոտան, որ ամենից շատ յատկանշական է այս երգչի համար, որի պատճառով միայն Նա անմահ է դարձել և կենդանի էլ կը մնայ քանի մարդկային սիրտը բաբախում է աշխարհի վրայ, այն երգը, որ նուագելիս, Նա անդերադանցելի, ոչ անհասանելի է դառնում—դա աշխարհի և կեանքի ունայնութեան նիւթն է։

Այս հարցում Խայյամի արտայայտութեան ձևը ինքնաստեղծ է և ինքնադրօշմ։ Ոչ ոք, ո՛չ արևելքում և ո՛չ արևմուտքում այս նիւթի վերաբերմամբ նման չէ Խայյամին։

Նա այնքան նուրբ և անկեղծ կերպով զգացում է, և իր զգացմունքը այնքան բնական, գեղեցիկ, պարզ և անօրինակելի ոճով է ձևակերպում, որ ընթերցողը յանկարծ գտնում է, թէ բանաստեղծը փոխարէն նուագելու քնարի, նուագում է նրա սրտի լարերի վրայ։

Սուգ ու ողբ չկայ նրա երեմիականի մէջ. չըկայ փոթորիկ ու դայրոյթ և ըմբոստացում, այլ մի փափուկ յիշեցում և մի ազնիւ ափսոսանք։ Նրա տողերը կարդալիս, մարդու պատում է նոյն զգացումը, ինչ որ կարելի է ունենալ մի փառաւոր անցեալի հոյակապ պալատների աւերակների առաջ։ Ով որ այցելել է այդպիսի պատմական վայր, և երեկոյեան հանդստութեան ժամին փլատակների միջից լսել է գեփիւռի խորհրդաւոր ու անմեկին հառաչը, կարող է ասել որ լսել է Խայյամի ձայնը։ Նրա իւրաքանչիւր քառեակի ետևին կարծես թաքնուած կայ հազար ու մէկ գիշերների կախարդական առասպելաբանութիւնների մէկը։

Խայյամի գրիչը կարծես լինի մոգական գաւազան, որ քարացրել է անցեալ դարերի կեանքը և արձանացման բոլէի վիճակում պահպանել մեր այսօրուայ հետաքրքրութեանը բաւարարութիւն տալու համար։ Նրա տողերի մասին խոր-

հելիս, մարդու մտքի առաջից կարծես անցնում է Պոմպէյի տեսարանը, ուր հրաբուխի մոխիրը ամեն ոքի գամել է իր տեղում, որպէսզի երկու հազար տարուց յետոյ մարդիկ պեղումներ անելով՝ տեսնեն թէ ով՝ ինչ է անելիս եղել այդ արհաւրալից օրը։ Նա չէ նկարում յայտնի ու որոշ գոյներով ու գծերով, այլ մութի մէջ անցկացնել է տալիս հազիւ նշմարելի ստուերներ։ Նա չէ պատմում, այլ ակնարկներ է անում, և այնքան ճարպիկ կերպով, որ մարդ ստիպւում է երևակայել շատ աւելի քան նա ասում է, բայց երբէք չէ կարողանում սպառել նրա տուած նիւթը։

Խորհրդաւորութեան այս հանգամանքն է, որ Խայյամին տալիս է նրա ամբողջ թովչութիւնը։ Եթէ նա խօսէր մի քիչ աւելի կամ մի քիչ պակաս որոշակի, երբէք չէր կարող գործել նոյն տպաւորութիւնը։ Նա բանաստեղծ չէ այլ հիպնոսարար, որ գերում ու բռնում է մտքերը ուր ցանկանում է, և ընդ միշտ։

Նրա գծագրած պատկերը անցեալի կամ ապագայի մասին այնքան կենդանի է ու հմայիչ, որ ներկան իր բուռ ցաւերով, տենչերով և յոյզերով, իր անժխտելի և անբացատրելի իրականութեամբ, ջնջւում է ընթերցողի մտքից և սրտից։

Չորս տողով կարողանալ այսքան խորին ու անբացատրելի ազդեցութիւն գործել, դա գրչի հրաշք է, որի ձիրքը միայն Նշաբուրցի բանաստեղծին է շնորհուել։

Օրինակները բազմաթիւ են—

Այս կուժն էլ ինձ պէս սիրող է եղած,
Կապուած ու գերի մի կոյսի մազին.
Կանթը, որ նրա վզին տեսնում ես,
Մի թև է եղած սիրուհու վզին։

Ամպն եկաւ նորից ու մարգը ցօղեց,
Եւ ինչպէս հիմա ապրել անգինի։
Այս մարգն է այսօր մեր զբօսավայրը,
Մեր հողից բուսածն ո՞ւմը կը լինի։

Ապարանքն այն, որ երկնի
Բարձունքի դէմ մրցում էր,
Որի շէմքին թագակիր
Դրւում էին ճակատներ—
Շրջեցի ես մտախոհ
Դահլիճներում անկրտուր,
Որմին տեսայ սուկ մի բու,
Որ ասում էր, «Ո՞ւր է, ո՞ւր»։

Երէկ գիշեր զարկեցի
Քարին, բաշի մի սափոր,
Հարբած էի երբ այդ գործն
Արեցի ես յանցաւոր։
Իր անլեզու բարբառով
Սափորն ասաց ինձ լռին,
«Քո պէս էի ես մի օր.
Դու էլ կըլինես իմ օրին»։

Որպի՛սի գուրեկան սխրութեամբ են համակում մարդու սիրտը այս տողերը. Ի՛նչ հաճելի թախիծ է բուրում նրանցից. Ի՛նչ երազուն խորհրդածութիւններ են արթնցնում այդ գիւթական բառերը ընթերցողի մտքում. Ի՛նչքան կախարդուած աշխարհների գաղտնիքներն են բանում մարդու առաջ. Ի՛նչ առեղծուածներ կան լուծուած նրանց մէջ, և սակայն մնացած յաւիտեան անլուծելի։

Եւ վերջապէս որպիսի հարցեր են ծագում մարդու մտքի մէջ, հարցեր, որ փայփայելի են միշտ, թէև ընդմիշտ անպատասխանելի։

Ո՞վ է եղել այն երիտասարդը, որ մի օր թևը ձգել է իր սիրածի վզին, ինչպիսի չքնաղ էակ է եղել այդ սիրուհին։ Արդեօք նրանց հոգին այժմ սաւառ-

նում է այդ կուժի շուրջը, ուր նրանց նախկին մարմնից կայ կաւացած մի բեկոր, թէ նրանք էլ լքանել են խեղճ հողին, և այդ պատճառով աւելի արգահատելի է նրա վիճակը այժմ։

Ինչպէ՞ս մարդիկ պիտի զբօսնեն մեր հողից բուսած մարգերի վրայ. պիտի յիշե՞ն նրանք մեզ արդեօք, թէ պիտի անցնեն մեր վրայից անտարբեր։ Եւ ի՞նչ պիտի լինի մեր դրութիւնը այդ ժամանակ։ Արդեօք անգիտակի՞ց պիտի լինինք մենք, թէ ինչպէս Խայյամի ստեղծագործող հանճարի շնորհիւ կենդանացած սափորը, մենք նրանց վիրաբերմունքը կը սեպենք յանցաւոր և անարգական, և կանիծենք նրանց, որ վայելում են աշխարհը, այնինչ մենք անշարժ ենք, լռացած ու ոտնակոխ։ Շրջապատուած իրենց շքով, հրամայելիս կամ զուարճանալիս իրենց հրաշակերտ ու ոսկեսար պալատներում, ոչ մի րոպէ մտածեցին այդ աշխարհակալ Ջահնշահները, որ կը գայ մի օր, երբ աւերակ կը դառնայ այդ բոլորը, և մի բու կը լինի նրանց փիլիսոփայ յաջորդը որ բազմած նրանց դահավէժ գահի վրայ պիտի երգէ «ո՛ւր էք ո՛ւր», ո՛վ անցեալի հզօրներ։

Ահա ձեզ մի այլ օրինակ։

Այսօր մի բրուտի գործարան գնալ
Ծագեց իմ մտքիս։
Գընացի, տեսայ վարպետին կանգնած,
Եւ աշխատելիս.
Շինում էր կերտում կուժերի համար
Նա կոկորդ ու կանթ,
Գըլուխն արքայի տնանկի ձեռքում
Դնելով աւանդ։

Այս տողերի մէջ Խայյամ ոչ միայն ցայտուն կերպով երևան է հանում աշխարհի ունայնութիւնը, այլ մի սոսկալի բարոյական ապտակ է իջեցնում նրանց երեսին, որոնք մոռացած անցեալն ու ապագան՝ այն աստիճան մանրացել ու լճացել են իրենց ներկայ ագահութեան ու փառամոլութեան մէջ, որ չա-

րունակ զրկելով իրենց նմաններին հասնում են, որպէս թէ, իրենց ցանկացած երջանկութեան։

Բոլոր այս մարդկանց, իրենց մեծ ու փոքր աստիճաններով, Խայյամ բարձրաձայն ասում է «Ձեր վախճանն այն է, որ ես տեսայ բրուտի գործարանում»։

Ահա այսպիսի հնգնանք է պահել բնութիւնը ձեզ համար. վերջը ձեր գլուխն աւանդ է դրուելու նրանց ձեռքի մէջ, որոնց դուք կեանքում չահագործեցիք ու արհամարհեցիք։

Ի՞նչքան գեղեցիկ և ազնուացուցիչ ազդարարութիւններ են այսպիսի ձայները մեզ համար մեր կեանքի ընդվզումների մէջ, երբ ամեն խիղճ քամուն ձգելով՝ սանձարձակ ասպարէզ ենք տալիս մեր սառը յակումներին։ Յիշեցնելով մեզ անընդհատ մեր նախորդների այժմեան ողորմելի վիճակը՝ նա սովորեցնում է մեզ ապագայից նայել մեր այժմեան դրութեան վրայ, և ամբողջովին չտրկանալ ներկային ու չընկճուել նրա բռնակալ ճիրաններում՝ կեղեքելու և դիզելու։

Ես չեմ կարող չափազանց երկար կանգ առնել Խայյամի այն լարի վրայ, որով նա երգում է աշխարհի վաղանցիկ բնաւորութիւնը, որովհետև ինչպէս վերն ասացի, դա է այն աղին որ Խայյամին—Խայյամ է դարձրել։

Նրա երգած բոլոր այլ նիւթերը, լինին դոքա սէր, գինի, բաւարարութիւն, բարոյականութիւն, Աստուած, կրօնք կամ ազատամիտ գաղափարներ, սովորական են պարսիկ այլ բանաստեղծների համար, և նրանք այդ նիւթերը բոլորը շօշափել են Խայյամից աւելի կամ պակաս յաջողութեամբ։ Բայց աշխարհի ունայնութիւնը երգել Խայյամի ժանրով և նրա հմայքով, անկարելի է մի ուրիշի համար, որովհետև դա նրա երկնատուր մենաշնորհն է և նրա կատարելագործած թէման։

Կարիք չկայ բնաւ, որ մենք մի ճիգ գործ դնենք հետևելու համար Խայյամի իմաստին։ Ո՛չ, նա ինքն այնպէս տիրապետում է մեր մտքերին, որ նրա երգի եղանակը մեզ համար գրեթէ մի դուրեկան obsession է դառնում, և դրանից ազատուելու համար պէտք է մեզ ճիգ գործ դնել։

Խիստ յատկանշական է ինչ որ իմ մի բարեկամն ասաց ինձ երբ՝ նրա

հետ խօսում էինք Խայյամի մասին։ Նա պատմեց որ իր ութը տարեկան տղան, լսած լինելով Խայյամի քառեակներից մի քանիսը, պարտէզում խաղալու ժամանակ, մի բուռ հող է վերցրել և հօրը ցոյց տալով հարցրել է, ,,Հայրի՛կ, այս հո՞ղն էլ թագաւորների գլուխներից է փոխւացել‘‘:

Հայրը պատասխանում է։ ,,Այո՛, զա՛ւակս, այդ հողն էլ հէնց այն է, որ փոխւացել է թագաւորների և մուրացկանների գլուխներից և այժմ դրանք խառնուել են քո բռի մէջ։ Դրանց զատել չէ կարելի‘‘։

Խայյամ խիստ հետևողական է իր կեանքի փիլիսոփայութեան մէջ։ Ուրեմն եթէ աշխարհը այնքան անհաւատարիմ է որ արքայից—արքաների անուան հետքն անգամ չը կայ նրանց հիմնայատակ դարպասների մէջ։ Ուրեմն եթէ չենք կարող ընդգրկել անցեալ ու ապագայ անհունութիւնը, որ այդ անսահմանութեան մէջ մեզ համար վիճակուած է մի քիչ սահմանափակ կեանք. ուրեմն եթէ ինչքան էլ մեծանանք ու հզօրանանք ու սատացուածք չահենք վերջապէս ստիպուած ենք մեր սրտին ասել—

Սի՛րտ իմ, սեպի՛ր թէ աշխարհից առար
Դու ամեն բարիք,
Թէ զարդարեցին պարտէզն հաճոյքիդ
Կանաչն ու ծաղիկ.
Եւ սեպի՛ր թէ այդ կանաչի վերայ,
Որպէս ցօղ պայծառ,
Նստար մի գիշեր, և առաւօտեան՝
Չքացար իսպառ.

Ի՞նչ է մնում մեզ անել, եթէ ոչ զգալ որ պարտաւոր ենք գոհ մնալ այս կեանքով և ինչով որ ունինք։ Ստիպուած ենք համբերել։ Բայց Խայյամի հասկացած համբերութիւնը սանձ կրծող հանդուրժանքը չէ մի մարդու, որ վիրաւոր է ընկել և դատապարտուած է սպասել մինչև պարան բերեն ու նրան հանեն։ Այլ

մի համբերատարութիւն է որ ինքն իր մէջ բաւարարութիւն է գտնում, որ ան-
հեռացնում է ամէն ջղայնութիւն և ալրում է, ոչ թէ առ երևոյթ, այլ ներքուստ՝
բարեբաստ։ Չէ նա նոյնպէս ջատագովը յիմարի երջանկութեան, որ ոչինչ չը
գիտէ, և իր չնչին իմացածը – ինչպէս ջրհորի մէջ ծնուած ու մեծացած գորտի-
համարելով ամեն բան՝ ուրախ ու բախտաւոր է դրանով։

Բանաստեղծի երազած ու երգած բաւարարութիւնը իմաստունի գոհունա-
կութիւնն է, որ գիտէ ինչ է անցածը և ինչ է լինելու ապագան, և որպէս այդ
գիտութիւնից ձեռք բերած գործնական արդիւնք իր բարեկեցութեան համար,
դառնում է իր քանի օրուայ կարճ կեանքից ձեռք բերելու այն հաճոյքը որ դա
ընդունակ է տալու։

Քանի որ ոչ ոք վաղը չը գիտէ,
Ուրախ պահի՛ր այժմ սիրտըդ վշտակէզ.
Խմի՛ր, ո՛վ Լուսին, քանզի լուսինը
Շատ պիտի դառնայ, ու չըգտնէ մեզ։

Մէկ. երկու, օրում կեանքն անցաւ գնաց,
Ինչպէս դաշտի մէջ քամին սըրընթաց։
Թո՛ղ երկու օրուայ հոգ չանենք բնաւ,
Այն որ եկած չէ, և այն՝ որ անցաւ։

Եւ սակայն չը պիտի շփոթուել՝ Խայյամ ծուլութեան և անհոգութեան
երկրպագու չէ։ Նրա փայփայած բաւարարութիւնը մի մտաւոր կացութիւն է,
որ պիտի իրացնել, և ոչ թէ ֆիզիքական կամ ուղեղային անգործութիւն։ Նա
չէ հրաւիրում մարդուն դառնալ մի անպէտք կենդանի որպէս զի զերծ լինի մը-
տառանջութիւնից—այլ ընդհակառակը, նա սովորեցնում է մարդուն դառնալ
բաւարար որպէս զի նա չը դառնայ—ասենք հէնց իր բառերով—

Թէ խելք ունիս, մի՛ լինիր
Ագահութեան դու գերի,

Ամենի մօտ գլխիկոր՝
Շնորհիւ անմարս իղձերի։

այլ լինի խրոխտ, անկախ, ինքնասէր և առկուն։

Մեծապէս սխալուած կլինեին նրանք, որոնք մտածեն թէ Խայյամի գպրոցը մի կրթարան է ուր մարդ ուսանում է լինել անփոյթ, ծոյլ, թուլամորթ և գործնական կեանքի համար բոլորովին անպէտքացած մի էակ։

Թող ինքը խօսէ իր համար—

Վիզըդ մի ծռիր թշնամուդ առաջ,
Եթէ լինի նա նոյն իսկ մի Ռօստամ.
Շընորհ մի խնդրիր մի բարեկամից,
Թէ Հաթամը Թէյ* լինի նա անգամ։

Թէ երկու օրում ձեռքըդ գայ մէկ հաց,
Եւ մէկ ումպ պարզ ջուր մի կժից կոտրած,
Ինչու կատարել ուրիշի հրաման
Եւ ինչու դառնալ քո պէսի ծառան։

Բարի է մարդ աշխարհում
Բարի հռչակ ըստանայ,
Նոյնչափ ամօթ՝ որ բախտի
Հարուածներից ընկճուի նա։

Ինչպէս տեսնում ենք այս տողերից Խայյամի դասը այն չէ որ մենք ոչնչութիւն դառնանք, այլ որ «վիզ չը ծռենք թշնամու առաջ», «բարեկամից շնորհ չը խնդրենք», «մեր նմանի ծառան չը դառնանք», «բարի հռչակ ստանանք աշխարհում», և ինչ որ գլխաւորն է՝ «Բախտի հարուածներից բնաւ չ՚ընկճուինք»։

* Հաթամը Թէյ արաբների մէջ համարւում է առատաձեռնութեան գերագոյն մարմնացումը։

Ծ. Թ.

Հիմա զուգեցէք խնդրի այսպիսի ըմբռնումը այն գոհունակութեան հետ, որի մասին խօսեցինք, և դուք կտանէք այն մտավիճակը, որ մեր արեւելեան բանաստեղծի անուրջների ցանկալի առարկան է։

Գուցէ այս բոլորից յետոյ ոմանք յակուած լինին մտածելու, որ մեր փիլիսոփան երես թեքած աշխարհի անդարմանելի տառապանքներից՝ ապրում է իր ստեղծած գուրեկան երազանքների մէջ։ Բարեբախտաբար այդպէս չէ։ Ուսումնասիրելով նրա մտքերը՝ մենք համարձակ կարող ենք ասել, որ նա մարդկային ցաւերի դժուարին հարցը չէ լուծում փախչելով նրանցից, կամ անտես առնելով նրանց, այլ ընդհակառակը, նա սպեղանի է որոնում և գտնում այդ վէրքերի համար։

Նրա փափուկ սիրտը խորապէս զգացուած է այլոց ցաւերով—ես այլոց ցաւերով եմ ասում, որովհետև գիտենք որ ինքը իր ժամանակում խիստ յարգուած մի մարդ՝ վայելում է եղել, շնորհիւ իր ընկերոջ Նզամ-օլ-Մոլքի, կեանքի կատարեալ ապահովութիւն։ Ուրեմն այն տողերը, որ մենք հիմա պիտի կարդանք որպէս նմոյշ՝ աւելի հաւանականաբար գրուած են իբրև արձագանք նրա սրտում քան սեփական կսկիծներից առաջ եկած մի ճիչ։

Ո՞վ ծիծաղեց մէկ գիշեր,
Որ լաց չեղաւ մէկ տարի։

Թէ ժամանակը յանկարծ
Մեզրից շնորհէ քեզ պատառ,
Ըզգոյշ եղիր, կուլ չը տաս,
Որ թոյն կայ մէջն անպատճառ։

Մէկ շունչ բերկրանք չը ծընեց
Այս վատ աշխարհն ինձ համար,
Որ նոյն ժամին բիւր ցաւի
Դուռն իմ առաջ չը բանար։

Ոչ միայն աշխարհի վշտերն ուժգին կերպով անդրադառնում են բանաստեղծի ըզգայուն սրտի վրայ, այլ այն անարդարութիւնները որ ընդհանրապէս տեղի են ունենում ամեն ժամանակուայ և ամեն դասակարգի մարդկանց մէջ, ցաւագնօրէն խոցում են Նրա հոգին և դառնացնում Նրա կեանքը։

Ինչ որ մենք մեր ամենօրեայ կեանքում տեսնում ենք, թէ ինչպէս անարժանները, բախտի բերմամբ, համարւում են արժանաւոր, թէ անազնիւները վայելում են այն պատկառանքը և հեղինակութիւնը, որ ազնիւ մարդկանց համար միայն պէտի վերապահուած լինէր, թէ յայտնապէս գող, կաշառակեր ու կաշառող մարդիկ յարգւում են իբրև հասարակական ակնածելի դէմքեր, և միւս կողմից նկատում ենք թէ ինչպէս ազնիւ ու անձնուրաց մարդիկ թողւում են անուշադիր, ընդունակները լքանւում են անգործ, և ըստ ամենայնի արժանիքներով օժտուած մարդիկ ստիպուած են յաճախ առաջնութիւնը զիջել ինտրիգաններին, գող—հարուստ ազգեցիկներին և մեծերի շողոքորթ պնակալէզներին,— ինչ որ այս տեսակի բաներ մենք ամեն օր մեր շուրջը տեսնում ենք, և չը կարողանալով մի բացատրութիւն գտնել այս հանելուկի համար, շշկլուած՝ անունը դնում ենք բախտ, և կամաց կամաց, հաշտուելով դրութեան հետ՝ անցնում ենք անտարբեր. այս՝ այն ինչ Խայյամ սքանչելի կերպով պատկերում է այս տողերի մէջ—

Ո՜վ կապտակոյն դու անիւ,
Ոչ ազնիւ ես, ոչ ատակ,
Գործին ազնիւ մի մարդու
Երբէք չեղար օժանդակ։
Տմարդներին տալիս ես
Գանձ ու գոհար ու սեղան.
Կեցցես, անիւրդ բախտի,
Սրիկաների դու պաշտպան։

Այս բոլորը կրկնում եմ, որ մարդկային արժանապատուութիւնը նսեմացնում և ոտնահարում է, սաստիկ վրդովում է բանաստեղծի ըմբռնումը իրերի դրութեան մասին, և Նրա մէջ արթնցնում է հրեղէն զայրոյթ։ Նա բնաւ չէ կարողանում հաշտուիլ դրութեան հետ։

Նա զանազան տեղեր ամենակծու լեզուով ծանակում է այդ սովորական երևոյթը, և այդ ծաղրանքների ցայտուն նմուշներից մէկն է հետևեալը, որ թէև գրուած ութը հարիւր տարի առաջ, կարծես գրուած լինի այս օրուայ համար։

Պէտք են մարդուն, լսեցինք,
Արժանիքներ սեփական,
Կամ մեծութիւն խոստացող
Արժէքը մեծ մի ծագման։
Դժբախտաբար աշխարհի
Կարգերն այնպէս են այսօր,
Որ այս բոլորը՝ ոչինչ,
Փող է միայն հարկաւոր.

Այս հանգամանքում նա մեզ երևան չէ գալիս, ինչպէս զոր օրինակ աշխարհի ունայնութիւնը երգելիս, մեղմ, մելամաղձիկ, գանգատաւոր և քոմպրոմիզներ որոնող։ Նրա արդար ցասումի բռնկումը, հիմնայատակ է անում նրա ամբողջ բնաւորութիւնը։ Նա սպառազինւում է ամբողջ բնութեան դէմ։ Նա դառնում է մերթ հեգնող ու կծու, մերթ սանձը կրծող, մերթ սանձակոտոր, մերթ խելայեղօրէն կատաղի և ընդմիշտ անհաշտ։

Այլ տհաճելի երևոյթների առաջ անկարելիի դէմ Նա պատերազմ չէ յայտարարում, բայց այս դէպքում Խայյամ անճանաչելի է։ Աղաւնին յանկարծ առիւծ է դառնում։ Անարդարութիւնից նողկացող Նրա մաքուր հոգին ուժգնօրէն տենչում է դէպի անկարելիների անկարելին, որպէս զի կատարուած անարդարութիւնը, որ բանաստեղծի համար ամենասոսկալի ոճիրն է, ջնջէ աշխարհի երեսից, և աւելի իրաւացի կարգերի հիմքը դնէ կեանքում։

Թէ ես Աստուած լինէի
Անուին բախտի և երկնից,

Ես այդ անիւն անիրաւ
Կը ջնջէի մէջտեղից,
Եւ այնպիսի նորաձև
Կառուցէի մի անիւ,
Որ իւր իղձին դիւրութեամբ
Հասնէր ազատ ու ազնիւ։

Մասնաւոր ուշադրութեան արժանի է որ Խայյամ բաղձանք չունի Աստուած դառնալու, որպէս զի իր կեանքը յաւերժացնէ։ Ո՛չ, նա տեսնելով որ կեանքը կարճ է, իսկոյն վճռում է օգտուել պատեհութիւնից քանի կայ, և յայտնում է իր րոպէի իղձը։

Մէկ գաւաթ գինի բե՛ր անոյշ անենք,
Նախ քան մեր կաւից շինեն գաւաթներ։

Խայյամ չէ ուզում Աստուած դառնալ, որպէս զի կեանքի առեղծուածը լուծէ։ Նա նայում է հանելուկին, չէ հասկանում և անպաճոյճ կերպով խոստովանում թէ չը հասկացայ։

Վայելի՛ր գինի քանզի չը գիտես
Ուրկից եկար դու,
Եւ ուրախ ապրի՛ր քանզի յայտնի չէ
Ո՛ւր ես գնալու։

Խայյամ չէ ուզում Աստուած դառնալ, որ իր ցաւերը դարմանէ կամ անլուր բարիքներ գիզէ։ Նա տառապում է և մեղմօրէն ափսոսում է որ կեանքը իր ցանկացած ձևով չէ անցել։

Հազա՜ր ափսոս, որ ընդ միշտ
Մթնեց ցերեկն իմ կենաց,
Դեռ իմ կեանքում, իմ սրտով,
Մէկ հատ ցերեկ չը մթնած։

Բայց երբ խնդիրը գալիս է աշխարհի անիրաւ իրադարձութիւններին, երբ նա տեսնում է յայտնի սրիկաներ առատօրէն վայելում են ամեն բարիք և հլու յարգանքն ու գովեստը շահակնկալ, պնակալէզ, քծնող ու վախկոտ վոհմակի, և այդ էլ դեռ քիչ համարելով, ուզում են ամենին կուրացնել և պճնուել ազնիւ փետուրներով, երբ նա տեսնում է որ այս բաները կատարւում են օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ և դատողութեան սահմանում, և այս ամբողջ գիտակցօրէն կեղծ ու երկչոտ ամբոխի մէջ մէկ հատ արի և անշահասէր հոգի չը կայ, որ գոչէ „Ո՜վ նենգ. կանգ ա՛ռ, և, ո՜վ ազնիւ, առաջ անցի՛ր“, այն ժամանակ Խայյամ կերպարանափոխւում է, նրա կաշին կարծես ուզում է պայթել արդար կատաղութեան ուժգնութեան ճնշման տակ։ Նա ուզում է ջարդ ու փշուր անել ամբողջ տիեզերքը և ստեղծագործել մի նոր երկինք ու մի նոր երկիր, ուր «ազնիւ ու ազատ մարդը դիւրութեամբ հասնէ իր իղձերին», և ուր կեղծիքը միշտ դատապարտուած՝ և արժանիքը վարձատրուած լինի։

Մարգարէ լինելու կարիք չը կայ կռահելու համար, որ Խայյամ, շատ ուրիշ արդար հոգիների նման, չը հասաւ իր փափագին, և նոյն անիրաւ անիւը այսօր էլ դառնում է իր սովորական ձևով, բարիներին փշրելով իր տակ և խարդախներին բարձրացնելով մինչև ուր նրանք երբէք չպիտի հասնէին։

Ընկերական յարաբերութիւնների հարցում, Խայյամ խիստ յոռետես է։ Նրա ցաւերից փոքրիկը չէ և՛ այն, որ նա մարդկութիւնը գտնում է ընդհանրապէս դատարկամէջ ու բարոյական արժէքի կողմից՝ սնանկ։ Նա աւելի առաջ է գնում։ Ոչ թէ մարդը, անխտիր կերպով առած՝ կեղծ է, այլ երբ որ բոլոր մարդկանց մէջ գնաս որոնես մէկ հոգի, և նրան ընդունելով որպէս հաւատարիմ բարեկամ՝ ամբողջ քո վստահութիւնը նրա վրայ դնես, հէնց այդ մարդուն մի օր կը գտնես քո դէմ դաւադիր ու դաւաճան։ Ուրեմն եթէ ընտրեալները այդքան բացասական լինին, ինչ պիտի լինի ընդհանրութեան վիճակը։

Լաւ է որ այս աշխարհում
Շատ բարեկամ չը բռնես,

Այս աշխարհի մարդկանցից
Լաւ է հեռու պահես քեզ:
Նա որ դարձաւ քո միակ
Վստահելի յենարան,
Խելքիդ աչքը թէ բանաս
Ոսոխդ է նա իսկական։

Անշուշտ այս պատճառով է, որ բանաստեղծի սրտի մէջ գոյանում է մի խորին արհամարհանք դէպի մարդկութիւնը, և նա գոչում է։

Մէկ եզ կայ վերում կոչուած Բազմաստեղ,
Եւ մէկ եզ էլ կայ թաքուն գետնի տակ։
Խելքիդ աչքը բաց. եզների մէջտեղ,
Տես իրար ընկած մի բուռ աւանակ։

Նկատելու արժանի է այս կէտը, որ մարդկութեան դաւաճան բնաւորութիւնը չէ ծնեցնում բանաստեղծի մէջ ոխի թոյնը, ինչ որ բնական հակազդեցութիւնը պիտի լինէր այդպիսի սուր վերաբերմունքի։ Նրա գերազանցապէս անապակ հոգին, այն աստիճան վիրաւորուած է զգում իրան, այնքան հեռու է տեսնում իր ներքին աշխարհը ընչաքաղցութեամբ վարակուած չնչին արարածների ճահճանման ներքին աշխարհից, որ մէկ անգամ ընդ միշտ հրաժարւում է փոխադարձ մերձեցման և հասկացողութեան ամէն փորձից։ Անջրպետը այդ երկսի մէջ այնքան մեծ է, որ նա անկարող է զգում տարրալուծել ապերախտութեան ու դաւաճանութեան դրդապատճառները։ Նա անկարող է ըմբռնել թէ ինչպէս նոյնիսկ հասարակ խելքի տէր մարդը այն աստիճան ընդունակ է իջնելու ապականութեան մէջ, որ ի չարը գործ դնէ իր բարեկամի իր վրայ դրած վստահութիւնը։ Նոյն իսկ կենդանին կամաչէր այդ արակի ստորութեամբ ներկելու իր պատկերը։ Հետևաբար նա խորին քամահրանքով գտնում է անասունների ամենից անարգուածը, և «էշ» կոչումով խարանում է բոլոր դաւաճանների հոգեբանական սև ճակատը։

Կեանքի գաղտնիքը, ինչպէս պատմութեան բոլոր ուրիշ մեծութիւնների համար, Խայյամի համար էլ մնում է անթափանցելի և անլուծելի։

Դողդողալով ըսկզբում
Հրաւիրուեցայ ես 'ի կեանք,
Զաւելացաւ այս կեանքից
Թէ ոչ միայն իմ զարմանք։
Գնում եմ այժմ ակամայ,
Եւ չիմացայ ես բնաւ
Ի՛նչ այս գալուց, մընալուց
Եւ գընալուց դուրս եկաւ։

Նա որ բնութեան պատկերը գծեց,
Ինչո՞ւ է դորան ջնջում ամեն օր.
Եթէ լաւ է դա՝ ինչո՞ւ կործանել.
Իսկ եթէ վատ է, ո՞վ է յանցաւոր։

Այս հարցի մասին որոճալիս, Խայյամ բոլորովին մի նոր բան է ասում, որի ձևով շատ քչերն են արտայայտուել։

Մարդիկ ընդհանրապէս այն տպաւորութեան տակ են, որ աշխարհ գալով մենք շատ բան ենք հասկանում համեմատած նրան, որ գիտէինք նախ քան ծընուիլը, բայց մեր գիտնականը պարզապէս ասում է, որ այս աշխարհը միայն նրա զարմանքն է աւելացրել։

Նա չէ ժխտում թէ մեր իմացածը բազմապատկուեցաւ աշխարհում, այլ պընդում է որ մեր զարմանքը շատացաւ։ Քանի որ զարմանքը տգիտութեան նշան է, ուրեմն, ինչ աբսուրդ է սա։ Որովհետև, թէ մեր գիտութիւնը աւելացել է, նշանակում է որ մեր զարմանքը պիտի պակասէր, և եթէ մեր զարմանքը աւելացել է, նշանակում է մեր տեղեկութիւնները պիտի պակասէին։

Ըստ իս Խայյամի միտքն այն է թէ մեր գիտութիւնը աւելացել է և դրա հետ միասին մեր զարմանքն էլ է աւելացել։ Թէև առաջին հայացքից այս մեկ-

նաքանութիւնը անհասկանալի և անկարելի թուայ մեզ, և սակայն մի քիչ խորհելուց յետոյ կը գտնենք բանաստեղծը չէ սխալուել։

Իմաստութեան և էմանալիքների քանակն ու թիւն ու սահմանը անհուն է, Այդ անսահմանութեան մէջ մի փոքրիկ շրջան կայ միայն, որին մենք ծանօթ ենք, և այդ շրջանի եզերքը ամբողջովին շարուած է զարմացական և հարցական նշաններով, որովհետև դրանից դուրս ամեն բան մեզ համար անյայտ է։

Այս լոյսի տակ որ նայելու լինենք խնդրին, այն ժամանակ պարզ է, որ որքան լայնանայ մեր տեղեկութիւնների շրջագիծը—որովհետև անհունին տիրապետել և վախճանին հասնել երբէք չենք կարող—բնականաբար պիտի բազմանայ մեր զարմացական նշանների թիւը։ Աւելի լայն շրջագծի վրայ աւելի բազմաթիւ նշաններ կարելի է շարել քան աւելի նեղի վրայ։

«Ուրեմն ինչ», պիտի գոչէ խեղճ մարդկութիւնը, «Ես որքան շատ բան սովորեմ այնքան աւելի խոր պիտի զգամ որ տգէտ եմ։» Ես հաւատացած եմ որ ճիշդ այդպէս է, պատասխանում է Խայյամ, և մեր գիտութեան բազմապատկումը կարող է միայն ստեղծել մեզ համար զարմանքի և հարցերի բազմապիսի բազմացում, և այդպէս շարունակաբար մինչև ժամանակ անվերջ։

Ի՞նչ տարօրինակ բան է, ապա, որ կանգնած այսպիսի անլուծելի հարցերի և անբուժելի ցաւերի առաջ, որպիսիք են—

Աշխարհի ունայնութիւնը և նրա անցաւոր յաւկութիւնը, որ ոչ մի կերպով կայուն ու տևական դարձնել չէ կարելի.

Աշխարհի վշտերն ու հոգսերը, որ ոչ մի միջոցով դարմանել կամ ամոքել չէ կարելի.

Բնութեան ու մարդկանց վատթար ու անարդար վերաբերմունքը դէպի ազնիւն ու անազնիւը, արժանաւորը և անարժանը, որ ոչ մի չափով շտկել չէ կարելի.

Մարդկութեան սնանկ բարոյականութիւնը և ընչապաշտ, կեղծաւոր ու դաւաճան բնաւորութիւնը, որ ոչ մի աստիճան յեղաշրջել չէ կարելի.

Եւ վերջապէս կեանքի առեղծուածը, որ որքան աշխատում ենք լուծել այն-

քան աւելի թանձրանում և բարդանում է փոխարէն համեմատաբար աւելի լուսաբանուելու—

Բանաստեղծը գինի է պահանջում որպէս զի մի րոպէ հանգիստ տայ իր լարուած ջղերին, իր յոգնած ուղեղին, իր խոցուած սրտին և իր տառապող հոգուն։

Թէ սիրատանջ ես. տարին մինչև վերջ,
Եղիր խենթ, անհոգ ու խմիր գինի.
Քանի որ լուրջ ենք հոգս է ամեն բան,
Երբ հարբած՝ ինչ որ լինում է լինի։

Ես կեանք վարել չեմ կարող
Եթէ չը տաս ինձ գինի.
Առանց գինու կարող չեմ
Կրել ես բեռն այս մարմնի։

Ծառան եմ ես այն ժամուայ
Երբ որ, Սաքի, ինձ ասես
Թէ ա՛ռ այս մէկ բաժակն էլ,
Եւ անկարող լինիմ ես։

Գուցէ ոմանք կը մտածեն թէ այդ հանգամանքները յատուկ չէին Խայյամի դարին և սահմանափակուած չէին միայն նրա ըմբռնողութեան շրջանում, այլ գոյութիւն են ունեցել ամեն ժամանակ և ամեն մարդու համար։ Ուրիշներ կարիք չեն զգացել և չեն զգում այդ ցաւերի ձեռքից անձնատուր լինել գինու, ինչու պիտի Խայյամի պէս մի գիտնական, բանաստեղծ և իմաստուն մարդ անյատադարձ կերպով նուիրուէր արբեցութեան։

Նախ—կարևորն այն չէ որ վերոյիշեալ չփոթեցուցիչ և ցաւագին հարցերը գոյութիւն են ունեցել շարունակ, և մարդիկ էլ անտեղեակ չեն եղել նրանց վերաբերմամբ, այլ այն՝ թէ ինչ մարդ ինչ չափով խորն է թափանցում հարցերի անլուծելութեան մէջ և ինչ չափով սուր զգայնութիւն ունի գիտակցելու իրերի

վատթար դրութիւնը և աշխարհի յոռի երևոյթները։

Իսկ եթէ չափը լինի պատանիչ, ինչպէս մենք ենք դրել այստեղ, հազուագիւտները միայն մարդկութեան մէջ իրաւունք ունին Խայյամի հետ մրցակցութեան մէջ մտնելու. որովհետև կարելի չկայ չիշտելու, որ մեր բանաստեղծը ունեցել է ամենալայնածաւալ ըմբռնողութիւնը և ամենազգայուն սրտերից մէկը, որ երբևիցէ շնորհուել է մարդու զաւակին։

Երկրորդ—ես հաւատացած չեմ, որ Խայյամ, ինչպէս շատերը կարող են ենթադրել նրա գրուածքներից, չարունակաբար հարբած դրութեան մէջ է եղել։

Այդ բոլոր գովեստները գինու հասցէին, աւելի շատ նուէրներ են գինու յատկութեանը քան նրա էութեանը։ Նա գինին սիրում է ինչպէս խոցելի կսկիծից տագնապող հիւանդը սիրում է սպեղանին, որի գործածութեամբ մի րոպէ թմրեցնում է իր տանջանքները։ Նա պարզ ասում է, «Առանց գինու այս կեանքի ծանր բեռը տանել չեմ կարող»։

Եթէ նա մշտապէս հարբեցող լինէր, բոլորովին անպէտք մարդ կդառնար այնինչ նա ժամանակի առաջնակարգ գիտնականներից է եղել, և մասնագէտ մաթեմաթիկոս ու տիեզերագէտ, որ աշխատակցել է մի նոր ու ճիշդ թուականի կազմութեան, մի գործ, որ ոչ ոք, եթէ չունի մտաւոր ամենակորովի առողջութիւն, չէ կարող անել։

Հէնց նրա բանաստեղծութիւնները ցոյց են տալիս, ու մենք գործ չունինք մի «Դայիմօլխամր» մարդու հետ, որն՝ ի հարկ է, կիսացնոր մէկը պիտի լինէր, այլ ընդհակառակը, մենք գործ ունինք մէկի հետ, որ մեզ ներկայանում է բոլոր ժամանակների մի մեծահանճար ուղեղ, և վսեմ սիրտ։ Այսպիսի մի մարդու մասին երևակայել որ գինու կարասի մէջ ընկղմած մի մուկ է եղել, ըստ իս, սրբապղծութիւն է։

Ուրեմն մէկ անգամ ընդմիշտ արտաքսելով մեր գլխից այն միտքը, (որ դժբախտաբար շատերի մէջ կայ,) թէ Խայյամ չարունակական հարբեցողի տիպ է եղել, անմիջապէս կանգնում ենք երես առ երես այն հարցի հետ, ինչու ապա այդ բոլոր շայլ, և չափազանցուած դրուատանքը գինու հասցէին—զոր օրինակ—

Քանի որ դեռ երկնքում
Ծագում են աստղ ու լուսին,
Ոչ ոք ոչինչ չէ տեսել
Աւելի լաւ քան գինին։
Հասկանալի չէ բնաւ
Նա որ ծախում է գինի,
Ի՞նչ է արդեօք գնելու,
Որ աւելի լաւ լինի։

Այդ հարցին ես աւելի քան մէկ պատասխան ունիմ տալու։ Նախ և առաջ գինին ընդհանրապէս ամեն տեղ, և մասնաւորապէս պարսկական բանաստեղծների համար, մի պոէտիք առարկայ է։ Պարսիկ բանաստեղծները—լինին նոքա խմող կամ ոչ—իրենց համար մի սրբազան պարտականութիւն են համարում գովեստական ձօներ նուիրել գինուն։ Մերթ նրա գոյնի գեղեցկութիւնն է, որ, գրաւում է, մերթ նրա տուած աւիւնը, մերթ նրա անուշութիւնը, և մերթ էլ, ինչպէս մասնաւորապէս Խայյամի դէպքում, նրա շնորհած մոռացութիւնն է, որ հմայում է մեր արևելեան քերթողներին։

Այս հանգամանքը այնքան յայտնի է պարսկական բէլլէտրիստիկ գրականութեան ուսանողին, և այս հարցը այնքան յաճախ ցցուել է նրանց մտքի առաջ, որ շատ քննադատներ, այնքան առաջ են գնացել, որ գինուն տուել են ինչ որ գերբնական տուրքի փոխաբերական իմաստը, որը, շատ բանաստեղծների վերաբերմամբ, ճշմարիտ է։

Այս տեսակէտից նայելով՝ բնաւ զարմանալու բան չէ, որ Խայյամ ևս մասամբ հետևած լինելով իր պաշտօնակիցների ,,մօդային‘‘, (թող ասենք,) երգած լինի գինու փառաբանութիւնը։

Անուրանալի է սակայն, որ հէնց այս համեմատութեամբ էլ եթէ դատելու լինինք, կը գտնենք որ Խայյամ մեծ չափազանցութիւններ է անում ՚ի նպաստ գինու։ Առանց քաշուելու կարելի է՝ ասել որ բոլոր պարսիկ բանաստեղծների մէջ,

Խայյամ բացառապէս և գերազանցապէս գինու երգիչն է։

Գնոջ սէրը, որ այնքան խոշոր տեղ է գրաւում ամեն ժողովրդի և ամեն դարի, բանաստեղծների մէջ, Խայյամի գրքում հազուագիւտ նիւթ է։

Ինչպէս վերն ասացի, ես տրամադիր չեմ բացատրել թէ գինին, ոչ թէ խաղողի հեղուկ է նշանակում, այլ փոխաբերաբար մի ինչ որ հոգևոր բարիք։ Գուցէ այդպէս էլ եղած լինի Խայյամի միտքը, բայց ինձ համար մի այլ բացատրութիւն աւելի պարզ է։ Գինին մահմեդականների մէջ, համարւում է պիղծ, և որովհետև բանաստեղծը գինի սիրում էր ու գործ էր ածում, բնականաբար ամեն կողմից ենթարկւում էր պարսաւանքի, բամբասանքի և հանդիպում էր արգելառիթ խոչնդոտների, որոնց պատասխանը երևում է նրա երկերի մէջ, որպէս չափազանցուած ներբող գինու հասցէին։ Եւ որքան ուժգին են եղել յարձակումները Խայյամի դէմ իր յանցագործութեան պատճառով՝ գուցէ աւելի ուժգին է եղել Խայյամի պատասխանը։

Գինի եմ խմում, և աջ ու ձախից
Նախատում են ինձ հակառակորդներ,
«Մեղք է», ասում են, «քանզի ոսոխն է
Գինին մեր կրօնի աստուածանուէր»։
Երբ ճանաչեցի ես գինուն որպէս
Մեր դաւանութեան անհաշտ թշնամի,
Աստուած է վըկայ, կը խմեմ այժմ միշտ,
Արիւնը խմել վարձք է ոխերմի։

Ահա այսպիսի նախատինքների պատասխանելու համար է, որ Խայյամ գըտնում է գերազրական արժանիքներ գինու, գողտրիկ պատրուակներ, սուր պատճառաբանութիւններ իր խմելը արդարացնելու համար։ Եւ նրա հանճարը այնքան հմայիչ ու համոզիչ կերպով է բանաձևում այդ բոլորը, որ դարերի ընթացքում, միմեանց յաջորդող, գինին պիղծ սեպող սերունդներ զմայլել ու պահել են նրա պատասխանները որպէս մարդկային հանճարի գեղեցկագոյն արգասիքը։

Այլ խօսքերով, եթէ Խայյամ քրիստոնեայ լինէր, և գինին նրա համար չը

լինէր արգելուած պտուղը, գինու այդքան չափազանցուած սէր չէր երևայ նրա երկերի մէջ։

Կայ և մի այլ խորհրդածութիւն։ Ամեն ոք գիտէ, որ գինու չարունակական գործածութիւնը, որպիսի կործանիչ հետևանքներ է թողնում մարդու վրայ, թէ ֆիզիքապէս, թէ մտաւորապէս և թէ հոգեպէս։ Ֆիզիքապէս՝ տալիս է անբուժելի հիւանդութիւններ. մտաւորապէս՝ մարդուն դարձնում է ապուշ և հոգեպէս՝ խիստ մռայլ ու ճնշուած։ Եւ որպէս ամեն ուրիշ մոլութիւն՝ մարդուն կատարելապէս զրկում է կամքի ույժից։

Արդ Խայյամի պէս, բառի բուն նշանակութեամբ, իմաստուն մարդը, եթէ գինի էր խմում, խմում էր միայն ազատուելու համար հոգսերից ու տանջանքներից: Նա չէր կարող իր սեփական անխոհեմութեամբ գինեմոլ դառնալով բազմապատկել այդ նոյն վշտերն ու տառապանքները, որոնց հակաթոյնն էր որոնում գինու մէջ։

Այլապէս նա կնմանէր մի մարդու, որ մի հիւանդութիւնից ազատուելու համար, չափաւոր թոյնը իբրև դեղ ընդունելու փոխարէն, կրկնակի կամ եռակի դոզա խմելով՝ իր նախկին ցաւի վրայ աւելացնէր մի այլ անբուժելի ախտ, գուցէ և՝ մահ։ Սա մի յիմար մարդու գործ է. և Խայյամ յիմար չէր։

Բացի սրանից մոլութիւնը, ամեն ոք գիտէ. թէև ստեղծում է մարդու մէջ օրգանական մի անդիմադրելի պահանջ ոգելից ըմպելիների համար, բայց ինչպէս ամեն մի ստրուկ, ենթարկուելով իր բռնակալին, երբէք չէ կարող սիրել նրան, նոյնպէս և մոլի մարդը, թէև կարիք զգայ խմելու, չէ կարող փայփայել այն առարկան, որ նրան դարձնելով գերի, զրկում է խելքից, գործից, ինչքից, յարգանքից, կամքից և նոյն իսկ արժանապատուութիւնից։ Ուրեմն եթէ Խայյամ հարբեցող մարդ լինէր, նա գուցէ առաւօտից մինչև գիշեր կը խմէր գինի, բայց երբէք գինուն չէր նուիրի այնպիսի տողեր, որոնց, փոքրաթիւ սիրուհիներ են արժանացել իրենց պաշտող բանաստեղծների կողմից։ Ընդհակառակը, եթէ Խայյամ լինէր անբուժելի կերպով նուիրուած ոգելից ըմպելիների, նրա մէջ կըստեղծուէր մի ատելութիւն դէպի գինին, և այդպիսի հանգամանքում, եթէ նա երբեւիցէ ընդունակ լինէր բանաստեղծութիւն գրելու, նա մեզ յիշատակ կթողնէր այնպիսի երկեր, որոնց մէջ խայթիչ երգիծանք պիտի գտնէինք գինու մասին, և ոչ գովեստ։

Այս գաղափարը ապացուցելու համար, ես աւելի լաւ փաստ չեմ կարող բերել քան Խայյամի մի քառեակը, որն, ըստ իս, իր մէջ պարունակում է այն տեսակէտը, որ բանաստեղծը գործադրում էր գինու գործածութեան վերաբերմամբ։

Գինի ես խմում, միայն իմաստուն
　　Մարդկանց հետ խմիր.
Կամ մի ծիծաղկոտ ու վարդանման
　　Կնոջ հետ ընտրիր։
Մի՛ խմիր շատ, շատ, մի՛ խմիր անդուլ,
　　Մի՛ խմիր յայտնի.
Այլ խմի՛ր քիչ, քիչ, երբեմն խմի՛ր,
　　Ու խմի՛ր գաղտնի։

Այս նիւթի վերջաբանով ես աւարտած եմ համարում իմ ուսումնասիրութիւնը Խայյամի վերաբերմամբ, և կարիք չեմ զգում անդրադառնալու նրա հոգեբանական աւելի մանր յատկութիւններին, որոնք, ինչպէս պարզ երևում են նրա բանաստեղծական խոստովանութիւններից, այլ բան չեն կարող լինել եթէ ոչ արժանի մի մարդու, որ ունեցել է ամենազգայուն, լայն, փափուկ ու մաքուր սիրտ, բազմակողմանի և ընդարձակ կերպով զարգացած միտք, գերազանցապէս պերճաբան լեզու, հուժկու և բազմամփոփ ուղեղ, լայն ու բարձր ըմբռնողութիւն, փսեմաթաւիչ և արարչագործ երևակայութիւն, անօրինակելիօրէն ինքնատիպ մըտածելակերպ, անկաշկանդ և անթերքելի համոզմունքներ, ազնիւ ու մեղամաղձիկ տէմպէրամէնտ, կախարդական ոճ ու մոգական գրիչ, համարձակ ու աննախապաշար ոգի և, յանդգնում եմ աւելացնել, միստիք կրթութեամբ հզօրապէս մարզուած հոգի, վերջապէս արժանի մէկի, որ քանի պարսկերէն լեզուն հասկացող լինի երկրագնդի երեսին, կայ և կը մնայ իր և յետագայ դարերի, որպէս իր և այլ ազգերի ամենամեծ մարդկանց առաջնակարգ շարքերում։

Ց. Զ. Միրզայանց

ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ

Հոգեւոր

1

Եթէ ես մեղք չը գործեմ,
　　Աստծոյ գութին ինչ կարիք.
Շնորհիւ մեղքիս է միայն,
　　Որ գութն ունի արժանիք։

2

Եթէ Աստուած նախապէս
　　Վճռեց իմ չարս ու բարիս,
Ուրեմն ինչո՞ւ պիտի ես
　　Հաշիւը տամ գործերիս։

3

Կրքերիս դէմ յանցաւոր
　　Կռիւ ունիմ անդադրում,
Եւ իմ գործած մեղքերից
　　Զղջում եմ ես ու ցաւում։
Ասենք թէ Դու ներեցիր
　　Արածս ամեն Քեզ ընդդէմ,
Այն ամօթից, որ գիտես
　　Ինչ եմ արել, ինչ անեմ։

4

Սա՛ղի[1], տո՛ւր ինձ մի բաժակ,
Աստուած մեծ է ու գթած,
Եւ կը ների իր տկար
Ծառաներին անկասկած։
Մի՛ ձևանար բարեպաշտ.
Գինի խմի՛ր դու գարնան,
Քանզի կարօտ չէ Աստուած
Պաշտամունքին մարդկութեան։

5

Աստուած, որպէս մի վարպետ,
Պճնեց ու մեզ հող տարաւ.
Գիտէք թէ մեր գործերից
Ի՛նչ դուրս կը գայ — վատ ու լաւ։
Չէ, ինչ յանցանք ու գործենք,
Առանց Նրա հրամանի,
Ուրկից, ապա, դուրս եկաւ
Հուրն ու տանջանք գեհենի։

6

Ո՜վ Դու, որին զօրութեամբ
՚Ի յայտ եկայ ես աշխարհ,
Եւ սնուեցայ Քո առատ
Բարիքներով կենարար.

1 Սաղի նա է որ հանդէսներում բաժակը գինի է լեցնում և տալիս ներկաներին։ Ծ. Թ.

Հարիւր տարի իբրև փորձ,
Մեղք կը գործեմ ես ազատ.
Կամ, գութդ է շատ իմ մեղքից,
Կամ, Քո գութից մեղքս է շատ։

7

Խայյամը[1] որ գիտութեան
Վրան էր կարում շարունակ,
Ընկաւ հնոցը վշտի
Եւ այրուեցաւ բովանդակ։
Կտրեց կեանքի նորա լարն
Յանկարծ մկրատը մահւան,
Ճակատագրի միջնորդն էլ
Նորան ծախեց շատ աժան։

8

Դրանդ առաջ, ո՜վ Աստուած իմ,
Մէկ է ամեն փոքրիկ ու մեծ.
Նա է միայն երանելի,
Որ Քո վերայ յոյս դրեց։
Դու ես տալիս բարին բոլոր,
Դու ես առնում չարիքն իսպառ.
Ողորմութեամբ Քո անմեկին,
Ո՜վ Աստուած իմ, այժմ տո՛ւր և ա՛ռ։

1 Խայյամ արաբերէն նշանակում է վրանագործ. Խ. Թ.

4

Սաղի[1], տո՛ւր ինձ մի բաժակ,
Աստուած մեծ է ու գթած,
Եւ կը ներէ իւր տկար
Ծառաներին անկասկած։
Մի՛ ձեանար բարեպաշտ.
Գինի խմի՛ր դու գարնան,
Քանզի կարօտ չէ Աստուած
Պաշտամունքին մարդկութեան։

5

Աստուած, որպէս մի վարդի,
Պճնեց ու մեզ հոգ տարաւ.
Գիտէ՞ք թէ մեր գործերից
Ի՛նչ դուրս կը գայ—վատ ու լաւ։
Չէ, ինչ յանցանք ու գործենք,
Առանց Նրա հրամանի,
Ուրկի՞ց, ապա, դուրս եկաւ
Հուրն ու տանջանք գեհենի.

6

Ո՜վ Դու, որիդ զօրութեամբ
’Ի յայտ եկայ ես աշխարհ,
Եւ սնուեցայ Քո առատ
Բարիքներով կենարար.

1 Սաղի նա է որ հանդէսներում բաժակը գինի է լցնում և տալիս ներկաներին. Տ. Թ.

Հարիւր տարի իբրև փորձ,
Մեղք կը գործեմ ես ազատ.
Կամ, գութդ է շատ իմ մեղքից,
Կամ, Քո գութից մեղքս է շատ։

7

Խայյամը[1] որ գիտութեան
Վրան էր կարում շարունակ,
Ընկաւ հնոցը վշտի
Եւ այրուեցաւ բովանդակ։
Կտրեց կեանքի նորա լարն
Ցանկարծ մկրատը մահուան,
Ճակատագրի միջնորդն էլ
Նորան ծախեց շատ աժան։

8

Դըրանդ առաջ, ո՛վ Աստուած իմ,
Մէկ է ամեն փոքրիկ ու մեծ.
Նա է միայն երանելի,
Որ Քո վերայ լոկ յոյս դրեց։
Դու ես տալիս բարին բոլոր,
Դու ես առնում չարիքն իսպառ.
Ողորմութեամբ Քո անմեկին,
Ո՜վ Աստուած իմ, այժմ տո՛ւր և ա՛ռ։

Ն. Թ.

1 Խայյամ արաբերէն նշանակում է վրանագործ.

9

Այն օր, երբ աստղերն հագնեն խաւարում,
Երբ որ խորտակուի երկինք ու երկիր,
Քո փէշից բռնած՝ կասեմ, Սիրելի՛ս,
Ինձ կեանք տալուց յետ՝ ինչու սպանեցիր։

10

Խայյա՛մ, ինչ ես միշտ մեղքերդ ողբում,
Այդպէս սգալով օգուտ կա՞յ արդեօք.
Ով մեղք չէ գործել չունի և ներում.
Մեղքի համար է ներումը. ինչ հոգ.

11

Ասացիր թէ ինձ պիտի պատժես Դու,
Զարմանք է թէ այդ ու՞ր է լինելու։
Ուր Դու կաս, այնտեղ չըկայ պատուհաս,
Իսկ ո՞րն է այնտեղն, ուրտեղ Դու չըկաս։

12

Ե՞ս ինչ անեմ, շաղախել ես Դո՛ւ կաւն իմ.
Ե՞ս ինչ անեմ, Դո՛ւ ես գործել կըտաւն իմ.
Ինչ լաւ ու վատ, որ ինձանից է գալիս,
Ե՞ս ինչ անեմ, Դու ես գըրել ճակատիս։

13

Թէ մարմնի փոշին, ո՞վ սիրտ, թօթափես,
Դու հոգի ես զուտ, ու վեր կամբառնաս.
Երկինքն է քո տեղ, ու ամօթ է քեզ
Որ հողի վերայ գաս ու տուն հիմնես։

14

Նա, որ բընութեան պատկերը գծեց,
Ի՞նչու է ջնջում դորան ամեն օր։
Եթէ լաւ է դա, ինչո՞ւ կործանել,
Իսկ եթէ վատ է, ո՞վ է յանցաւոր։

15

Մի ձայն է հոգին, ու կազմը՝ եղէգ.
Մեր հոգին՝ գինի, մարմինն է սրուակ։
Ի՞նչ բան է, Խայյա՛մ, մարդը հողեղէն.
Մտածին լապտեր՝ մէջը մի ճըրագ։

16

Դու, որ լաւ չարած, մեղք շատ ես գործել,
Եւ քեզ, յոյս ունիս, որ ներէ Աստուած,
Մի՛ յենուիր ներման, քանզի չի լինի
Արածը՝ չարած, և չարածն՝ արած։

17

Ասում են մարդիկ թէ կայ մի դժոխք,
Սխալ խօսք է դա. չեմ հաւատում ես։
Սիրողն ու խմող թէ դժոխք երթան,
Դատարկ կը մնայ դըրախտն ափիս պէս։

18

Ողորմի՛ր հոգուս, ու սրտիս գերի,
Ցաւի հիւրնկալ կուրծքիս ողորմի՛ր.
Ների՛ր գինետուն յաճախող ոտքիս.
Բաժակը բռնող ձեռքիս ողորմի՛ր։

9

Այն օր, երբ աստղերն հագնեն խաւարում,
Երբ որ խորտակուի երկինք ու երկիր,
Քո փէշից բռնած՝ կասեմ, Սիրելի՛ս,
Ինձ կեանք տալուց յետ՝ ինչու սպանեցիր։

10

Խայյամ, ինչ ես միշտ մեղքերդ ողբում,
Այդպէս սգալով օգուտ կա՞յ արդեօք.
Ով մեղք չէ գործել չունի և ներում.
Մեղքի համար է ներումը. ինչ հոգ.

11

Ասացիր թէ ինձ պիտի պատժես Դու,
Զարմանք է թէ այդ ու՞ր է լինելու։
Ուր Դու կաս, այնտեղ չըկայ պատուհաս,
Իսկ ո՞րն է այնտեղն, ուրտեղ Դու չըկաս։

12

Ե՞ս ինչ անեմ, շաղախել ես Դո՛ւ կաւն իմ.
Ե՞ս ինչ անեմ, Դո՛ւ ես գործել կըտաւն իմ.
Ինչ լաւ ու վատ, որ ինձանից է գալիս,
Ե՞ս ինչ անեմ, Դու ես գըրել ճակատիս։

13

Թէ մարմնի փոշին, ո՛վ սիրտ, թօթափես,
Դու հոգի ես զուտ, ու վեր կամբառնաս.
Երկինքն է քո տեղ, ու ամօթ է քեզ
Որ հողի վերայ գաս ու տուն հիմնես։

14

Նա, որ բընութեան պատկերը գծեց,
Ի՞նչու է ջնջում դորան ամեն օր։
Եթէ լաւ է դա, ինչո՞ւ կործանել,
Իսկ եթէ վատ է, ո՞վ է յանցաւոր։

15

Մի ձայն է հոգին, ու կազմը՝ եղէգ.
Մեր հոգին՝ գինի, մարմինն է սրուակ։
Ի՞նչ բան է, Խայյամ, մարդը հողեղէն.
Մտածին լապտեր՝ մէջը մի ճըրագ։

16

Դու, որ լաւ չարած, մեղք շատ ես գործել,
Եւ քեզ, յոյս ունիս, որ ներէ Աստուած,
Մի՛ յենուիր ներման, քանզի չի լինի
Արածը՝ չարած, և չարածն՝ արած։

17

Ասում են մարդիկ թէ կայ մի դժողք,
Սխալ խօսք է դա. չեմ հաւատում ես։
Սիրողն ու խմող թէ դժոխք երթան,
Դատարկ կը մընայ դըրախտն ափիս պէս։

18

Ողորմի՛ր հոգուս, ու սրտիս գթի՛ր,
Ցաւի հիւրնկալ կուրծքիս ողորմի՛ր.
Ներէ՛ր գինետուն յաճախող ոտքիս.
Բաժակը բռնող ձեռքիս ողորմի՛ր։

19

Անօթն[1] իմ գինու, Տէր իմ, կոտրեցիր.
Դուռը ցնծութեան գոցեցիր առ իս,
Թափեցիր գինիս՝ վարդի պէս կարմիր.
Հարբած ես, Տէր իմ, հողը գայ բերնիս։

20

Ասա ինձ խնդրեմ, ով է աշխարհում
Որ մեղք չունենայ.
Այն մահկանացուն, որ մեղք չը գործեց,
Ինչպէս ապրեց նա։
Ես վատ եմ անում, և Դու ինձ վատով
Պատժում ես, ով Տէր,
Ասա ինձ խնդրեմ, ապա ես և Դու
Ինչով ենք տարբեր։

21

Գոյութիւնն է Քո երկիւղը մահի
Եւ ոչնչացման,
Թէ ոչ, ոչնչից ինչպէս կը բուսնէ
Ճիւղը գոյութեան։
Յիսուսի շնչով կեանք առաւ հոգիս,
Դարձաւ մշտակեաց,
Մահն ինձ մօտեցաւ, սակայն իմ կեանքից
Ձեռքերը լուաց։

[1] Աւանդութիւնը պատմում է, որ Խայյամ, մի օր, նստած ծառերի ստուերի տակ, զբաղուած էր գինի խմելով և բանաստեղծելով։ Յանկարծ մի ուժեղ քամի է բարձրանում, և ծառի մի ճիւղը կոտ-րւում է նրա գինու կժին, որ ընկնում կոտրւում է և գինին թափւում։ Այս դէպքի առթիւ նա ասում է այս քառեակը, որի հայհոյական բովանդակութեան պատճառով նրա երեսի կէսը սևանում է։ Երբ նրա աշա-կերտները նրան յայտնում են եղելութիւնը, նա հետևեալ քառեակով ներողութիւն է խնդրում Աստծուց և դարձեալ նրա երեսը սպիտակում է առաջուայ պէս։
Ծ. Թ.

22

Ես մի ապստամբ հրպատակն եմ Քո.
Ներումդ ինչ եղաւ.
Սևասիրտ եմ ես, ուր է առաջնորդ
Քո լոյսըդ ամբաւ։
Դրախտը եթէ տաս մեզ ՚ի փոխարէն
Արդար գործերի,
Վարձատրել է դա, ապա ուր մնաց
Քո շնորհը ձրրի,

23

Ո՜վ դու, ողջակէզ լինելու արդէն
Երբեմ արժանի,
Եւ ով դու, որից պիտի բորբոքէ
Հուրը գեհենի,
Մինչև երբ ասես, «Գըթա Օմարին,
Եւ թողութիւն տուր։»
Դու ուր, և Աստծուն ներել ու գըթալ
Ուսուցանելն ուր։

24

Խորհում է մի ցեղ, թէ որն է կրօնք,
Եւ որն է Աստուած,
Մի խումբ մտմտում, թէ ինչ է հաւատք
Եւ ինչ է կասկած։
Երբ, զարմանք, յանկարծ անյայտ դարանից
Լսուեցաւ մի ձայն,—
«Ո՜վ անտեղեակներ, ճշմարիտ ուղին
Ո՜չ այս է, ո՜չ այն»։—

25

Ո՞վ ճակատագրի գանի հարուածից
Գնդակ դու թռած,
Աջ՝ խմի՛ր գինի, ձախ՝ խմիր գինի,
Խմի՛ր, ու լուռ կա՛ց։
Քանզի Նա որ քեզ վազէվազի մէջ
Ձգեց անխնայ,
Նա գիտէ միայն, Նա գիտէ միայն,
Նա գիտէ ու Նա։

26

Աշխարհի գաղտնիքն, ինչպէս կայ դա մեր
Տետրակում գրուած,
Չեմ կարող ասել, քանզի դա գինն է
Գուցէ իմ կենաց։
Այն ինչ այս տղէտ մարդկանց մէջ չը կայ
Մէկը հասկացող,
Ինչ որ կայ թաքուն իմ սրտի խորքում,
Ասել չեմ կարող։

27

Գընացինք և այս աշխարհը մեզնից
Շըփոթուած մնաց,
Եւ մէկը միայն հարիւր մարգարտից
Թողեցինք ծակուած։

Ափսոսել պիտի, որ հարիւր հազար
Իմաստներ խորին,
Շընորհիւ մարդկանց անհասկացութեան,
Չ՚ասուած մնացին։

28

Աստուած է հոգին համայն տիեզրի,
Տիեզերքն համայն՝ մարմինը Նորա.
Դասերն ու կարգերն հրեշտակների
Են ըզգայարանքն այդ կազմի հսկայ։
Երկինքը՝ տարերք, և անդամներն էլ
Թագաւորութիւնն են այս բնութեան։
Միաստուածութիւնն հէնց այս է որ կայ,
Եւ խաբէութիւն՝ ամեն ուրիշ բան։

ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ

Սիրային

29

Ամեն մի ցեղ, ամեն ազգ
. Ունի յատուկ ճանապարհ.
Սիրոյ ճամբան աշխարհում
Միայն չունի ղեկավար։

30

Պատմում եմ քեզ, որ չիցէ
Մնաս սրտիս անծանօթ.
Եւ որ ձանձրոյթ չունենաս՝
Ահա՛, իմ խօսքն համառօտ։
Սէրըդ կապուած սրտիս հետ
Ես հողի տակ կը տանեմ,
Եւ սիրոյդ հետ միատեղ՝
Գլուխըս հողից կը հանեմ։

31

Ուրախ լինել չէ կարող
Մի սիրտ, որին պատէ ցաւ.
Բաժանուելով քեզանից
Ուրախ սիրտն իմ սևացաւ։

Ողջ դառնութիւնն աշխարհի
Քաղցր էր բերնում ինձ համար.
Քո բաժանման դառնութեամբ՝
Ինչիս է պէտք մի աշխարհ։

32

Իմ աննման սիրուհիս,
Դու որ կողմից ծագեցիր,
Որ լուսինն իսկ նուաղեց
Փայլիդ առաջ երկնածիր.
Տօնին՝ իբր դէմքն է պճնում
Իւրաքանչիւր գեղանի,
Իսկ դու եկար քո դէմքով
Դարձար զարդարըն այս տօնի։

33

Նա, որ կաւն իմ շաղախեց,
—Յայտնի չէ ինձ բընաւին,—
Դրախտի համար ստեղծեց
Թէ դըժոխքի ինձ բաժին։
Կին ու քընար ու գինի,
Առուի ափին դալարիկ՝
Տո՛ւր ինձ կանխիկ երկրն այս,
Ու դրախտը՝ քեզ ապառիկ։

34

Թէ ձեռք բերել յորենի
    Կարող լինես երկու հաց.
Գինուց մէկ կամ երկու լիտր,
    Եւ ոչխարի խորոված,
Մի կընոջ հետ գեղանի՝
    Նստած մի տեղ աւերակ.
Հաճոյք է սա, որ չունի
    Նա որ նոյն իսկ ունի թագ։

35

Հէրքըդ դարձաւ խաղընկեր
    Մուշկին բերուած Խոթանից.
Կարկեհանին շըթունքիդ
    Հոգին է միշտ շնչակից։
Բաղդատեցի նաճու հետ
    Մի օր քո կազմն այդ չիտակ,
Ծառն այդ օրից պարծանքով
    Գլուխ բարձրացրեց համարձակ։

36

Սիրտըս, գ՛փիւռից երբ քո բոյրն զգաց,
Թողեց ինձ, ու քեզ փնտռելու գընաց.
Այժմ ինձ, ո՜վ հրաշք, չէ յիշում բընաւ.
Քո հոտն էր առել, բնութիւնդ էլ առաւ։

37

Գաղտնիքըդ պահիր ամեն տմարդից,
    Մի յայտնիր ընաւ յիմարին գաղտնիք.
Մարդկանց հոգու հետ, տես, ինչ ես անում.
    Թոյլ մի տայ տեսնեն աչերըդ մարդիկ։

38

Ինչ սիրտ, որի մէջ կայ լոյսը սիրոյ,
    Լինի նա իսլամ, լինի անհաւատ,
Սիրոյ տոմարում թէ անունը կայ—
    Անկախ է դրախտից, դըժոխքից՝ ազատ։

39

Հազիւ զատեցի ես ձեռքըս ոտքից,
    Որ բախտը կապեց ոտքերս ու ձեռքեր.
Ափսո՜ս, որ պիտի գըեն իմ հաշուիս,
    Մի կեանք, որ անցաւ անգինի. անսէր։

40

Ո՛վ դու աշխարհում ընտրեալըս միակ,
    Դու՝ թանկ իմ հոգուց, իմ երկու աչքից.
Կեանքից, պաշտելի՛ս, անոյշ բան չը կայ,
    Դու հազար անգամ անոյշ ես կեանքից։

41

Ես ձեռըըս տարայ հէրքից բուրալից,
    Բայց ոչ թէ գըգուած սիրով առնացի,
Հէրքիդ մէջ տեսայ սիրտըս խենթացած,
    Եւ իմ սըրտիս հետ ձեռքով խաղացի։

42

Նա, որի համար մաշւում է հոգիս,
Մի՞ ուրիշ տեղից բանից այլ մի ցաւ.
Ես, բժշկուելու ինչպէս աշխատեմ,
Մինչ բժիշկը մեր ինքն հիւանդացաւ։

43

Բաժականըման այն աչքը տեսէք
Հոգիով գեղուն,
Կարծես կենդանի կարկեհան լինի
Ճառայլով լեցուն։
Ո՛չ, ոչ, սխալ եմ, այդ բաժակն այնքան
Նուրբ է և փափուկ,
Որ ջուր է վճիտ, բայց կարծես յղի՝
Կրակով հեղուկ։

44

Սիրուհիս, որի կեանքը թող լինի
Ցաւիս պէս երկար,
Այսօր բարութեան ու շնորհի նոր էջ
Բացաւ ինձ համար.
Աչքիս մէջ հայացք ձգեց ու անցաւ
Աչքով սիրալիր,
Ուզում էր ասել — «Լաւութիւն արա,
Եւ ջուրը ձգիր։»

45

Բերանըդ՝ բաժակ, շրթունքըդ նորա
Գինին է գեղուն.
Մի բաժակ է աչքըդ, ու միջի գինին՝
Հոգիդ է ծփուն.
Կարծես բիւրեղեայ բաժակը պայծառ
Գինիով ժպտուն,
Ձիլթ է արցունքի, և արեան շիթեր
Կան մէջը լեցուն։

46

Ասում են մարդիկ թէ մեզ կը տանեն
Մի դրախտ երկնային,
Թէ այնտեղ գինի և հուր ու փէրի
Կը տան մեզ բաժին։
Ինչո՞ւ աշխարհում չընտրենք ուրեմըն
Մենք սէր ու գինի,
Քանի որ մեր գործն հանդերձեալ կեանքում
Հէնց այդ կը լինի։

ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ

Բարոյագիտական

47

Ով որ այլոց վատն ուզէ,
    Զունի լաւից նա բաժին.
Անշեղ իրեն կը գտնայ
    Ինչ վատ անէ ուրիշին։
Ես քո բարիքն եմ ուզում,
    Իսկ ինձ համար, դու՝ չարիք.
Չարիք բնաւ չի գայ ինձ,
    Եւ չես տեսնի դու բարիք։

48

Որքան էլ քեզ այս կեանքում
    Տրուի մի բախտ չարաշար,
Եւ որքան էլ դառնութեամբ
    Լեցուի բաժակ քեզ համար,
Տրմարդ մարդուց մէկ չիթ ջուր,
    —Որքան էլ զով ու վճիտ—
Նթէ վառւում էլ լինիս,
    Մի կաթեցրու շրթունքից։

49

Լաւ է որ այս աշխարհում
    Ձատ բարեկամ չը բռնես.
Այս աշխարհի մարդկանցից
    Լաւ է հեռու պահես քեզ։
Նա, որ դարձաւ քեզ համար
    Վստահելի յենարան,
Խելքիդ աչքը թէ բանաս՝
    Ոսոխդ է նա իսկական։

50

Բախտը մէկ օր դիւրութիւն
    Չը պարգևեց իմ գործիս,
Եւ չը բերեց ինձ բնաւ
    Ուրախութեան աւետիս։
Մէկ շունչ բերկրանք չր ծնեց
    Այս վատ աշխարհն ինձ համար,
Որ նոյն ժամին բիւր ցաւի
    Դուռն իմ առաջ չը բանար։

51

Թէ ես Աստուած լինէի
    Անուբն բախտի և երկնից,
Ես այդ անիւն անիրաւ
    Կը ջնջէի մէջտեղից.

Եւ այնպիսի նորաձև
Կստեղծէի մի անիւ,
Որ իւր իղձին զիւրութեամբ
Հասնէր ազատն ու ազնիւ։

52

Ժամանակից, ո՜վ սիրտ իմ,
Բարիք երբէք մի ուզիր.
Եւ մի փնտռի կարգ ու սարք
Բախտի անուից այս պատիր։
Երբ որ դարման փնտռեցի
Ցաւըս միայն ծանրացաւ,
Լաւ է սազում ցաւիս հետ,
Եւ դեղ չուզեմ ես բնաւ։

53

Չէ քո խելքիդ շնորհիւ
Թէ գործի մէջ յաջող ես.
Թէ գլխատեն քեզ նոյն իսկ,
Քո յանցանքից չէ նոյնպէս։
Ուրեմըն գոհ ու հանգիստ
Կեանքըդ վարիր խնդագին,
Քանզի կախում քեզանից
Չունի քո չարն ու բարին։

54

Մի կրօնապետ մի կընոջ
Ասաց—«Հարբած ես, ո՜վ կին.
Ամեն րոպէ դու անարգ
Հիւր ես մէկի հաճոյքին»։
Իսկ կինն ասաց—«Ո՛վ սուրբ մարդ,
Ինչ ասացիր, այդ կա՛մ ես.
Բայց ինչ որ ցոյց ես տալիս,
Արդեօք դու էլ կա՞ս այնպէս»։

55

Թէ խելք ունիս մի լինիր
Ապահովութեան դու գերի,
Ամենի մօտ գլխիկոր
Շնորհիւ անմարս իղձերի։
Սահուն եղիր ջրի պէս,
Եւ հրի պէս՝ վառ եղիր.
Բայց մի լինիր իբրև հող,
Ամեն հովից ցան ու ցիր։

56

Բարի է մարդ աշխարհում
Բարի հռչակ ըստանայ.
Նոյնչափ ամօթ՝ որ բախտի
Հարուածներից ընկճուի նա։

Հարբել ջրով խաղողի
Հազար անգամ լաւ է քան,
Գոռոզանալ ու պանծալ
Արդարութեամբ սնափական։

57

Բախտը մարդուն, ըզգոյշ կա՛ց
Տալիս է լոկ չարիքներ,
Հանգիստ, անփոյթ մի՛ նստի,
Խիստ սուր ունի նա սուսեր։
Թէ ժամանակը յանկարծ
Մեղրից շնորհէ քեզ պատառ,
Ըզգոյշ եղի՛ր, կուլ չտա՛ս,
Որ թոյն կայ մէջն անպատճառ։

68

Մէկ անգամից աւելի
Քանի որ մահ չէ գալու,
Մեռիր ապա մէկ անգամ.
Անճարութիւնն՝ էլ ինչո՞ւ։
Մի բուռ կաշի ու ոսկոր,
Մի քիչ արիւն ու ապաւ,
—Ինչո՞ւ այդքան տառապանք—
Մի բան չարժէ դա բնաւ։

59

Սիրտս դեռ ձեռք չը զարկած
Ուրախութեան գինակին,
Եւ չը կպած բերկրութեան
Թասը դեռ իմ շրթունքին,
Հազա՜ր ափսոս, որ ընդ միշտ
Մթնեց ցերեկն իմ կենաց,
Դեռ իմ կեանքում, իմ սրտով,
Մէկ հատ ցերեկ չը մթնած։

60

Պէտք են մարդուն, լսեցինք,
Արժանիքներ սեփական,
Կամ, մեծութիւն խոստացող,
Արժէքը մեծ մի ծագման.
Տժբախտաբար աշխարհի
Կարգերն այնպէս են այսօր,
Որ այս բոլորը՝ ոչինչ,
Փող է միայն հարկաւոր։

61

Ո՜վ բախտ, դու միշտ իմ սրտին
Ցաւ ես տալիս ու կսկիծ,
Եւ բերկրութեան շապիկն իմ
Պատռում ես միշտ իմ կուրծքից։

Հովը որ ինձ է գալիս,
Հուր ես շինում դու նորան.
Հող ես շինում ամեն ջուր,
Որ առնում եմ ես բերան։

62

Դողդողալով ես ի կեանք
Հրաւիրուեցայ ըսկզբում.
Կեանքը միայն պարգեւեց
Ինձ յաւելեալ զարմացում։
Գնում եմ այժմ ակամայ.
Եւ չիմացայ ես բնաւ,
Ի՞նչ այս գալուց, մնալուց
Եւ գնալուց դուրս եկաւ։

63

Ժամանակն ուր լինում է
Գալն ու երթալն ամենի—
Այդ թուալի ոչ ըսկիզբն
Ու ոչ վախճանն է յայտնի։
Ոչ ոք դեռ ես աշխարհում
Մեզ չը պատմեց անսխալ,
Թէ որտեղից է մեր գալն,
Եւ դէպի ուր՝ մեր երթալ։

64

«Իմիս նման», վարդն ասաց,
«Չքնաղ չընաղ մի պատկեր».
Բայց, որ դառնար վարդ աջուր՝
Կըրեց անլուր տանջանքներ։
Այնինչ սոխակն իմաստուն
Միջից ասաց փշերի,
«Ո՞վ ծիծաղեց մէկ գիշեր,
Որ լաց եղաւ մէկ տարի»։

65

«Արօտամարգ Եգիպտի
Յովսէփն եմ ես,» վարդն ասաց,
«Յակինթն եմ ես մեծարժէք,
Ոսկով բերանըս լըցուած».
«Թէ Յովսէփն ես», ասացի,
«Ցոյց տուր ապա մի նշան»։
«Շապիկս» ասաց, «տես ինչպէս
Գոյնն է կրում դեռ արեան»։

66

Թէ ես հարբած եմ գինով,
Շատ լաւ լինիմ թող այդպէս,
Թէ ես գաբր[1] եմ ու քաֆէր[2],
Շատ լաւ հէնց այդ էլ կամ ես։

Ծ. Թ.

1 Կրակապաշտ։— 2 Անհաւատ։

Ով, ինչ ուզէ իմ մասին
Թո՛ղ մտածէ ինքնակամ.
Իսկ ես ինձ եմ պատկանում,
Եւ ինչ որ եմ, այն էլ կա՛մ։

67

Ո՛վ կապտագոյն դու անիւ,
Ո՛չ ազնիւ ես, ո՛չ կարող.
Գործին ազնիւ մի մարդու
Երբէք չեղար նպաստող։
Տմարդներին տալիս ես
Գանձ ու գոհար ու սեղան.
Կեցցես, ա՛նիւդ բախտի,
Սրիկաների դու պաշտպան։

68

Արբեցութիւն և գինի
Եղան իմ գործն ու սփոփանք,
Ինչու են միշտ իմ գլխիս
Թափում այսքան պարսաւանք.
Ե՛րանի թէ հարբեցնէ
Ամեն մի գործ մեղապարտ,
Որ դու ամբողջ աշխարհում
Լուրջ չը գտնես ոչ մի մարդ։

69

Մի որոնիր բարեկամ
Այս աշխարհում ձեռնածու.
Լսիր ինձնից այս խրատն
Ու մի յայտնիր դու մարդու.
Ցաւով դո՞ կաց, և դարման
Մի պահանջիր մարդկանցից.
Ուրախ նստիր վշտիդ հետ,
Եւ մի փնտռիր վշտակից։

70

Ժամանակի դէպքերից,
Մի վախենար՝ յարածին.
Ինչ առաջ գայ, մի վախիր,
Կանցնի արագ ու դիւրին։
Անկապտելի շահ սեպիր
Մէկ րոպէի՛դ այս ներկան.
Թո՛ղ ցաւ չը տայ քեզ անցեալն,
Ու վախ չազդէ ապագան։

71

Մեռածների հանգստում,
Ճշդել եմ ես քիչ ու շատ.
Գերեզմաններ եմ տեսել
Հարուստ մարդկանց և աղքատ.

Ոչ աղքատը պատանից
Զուրկ էր մտել գերեզման,
Ոչ էլ հարուստն էր տարել
Աւելի քան մի պատան։

72

Իմ սիրտը խեղճ ու վշտալից,
Սիրտն իմ թշւառ, խելացնոր,
Հարբած սիրով իմ սիրուհու՝
Ուշքի չեկաւ մինչ այսօր։
Երբ տրուեցաւ սիրոյ գինուց
Ամեն ոքի մի բաժին,
Իմ բաժակը մինչև բերան
Սրտիս արեամբ լցրեցին։

73

Քա՜նի քա՜նի մարդկանց արիւն
Թափեց երկինքն անիրաւ.
Ո՜րքան ծաղիկ բուսնեց հողից
Եւ վերստին հողն ընկաւ։
Գեղեցկութեամբ, մատղաշութեամբ
Մի՛ պարծենար. Ո՜վ հոգեակ,
Քա՜նի քա՜նի դեռ գոց կոկոն
Թափուել է ցարդ ոտքի տակ։

74

Խելօք ու անկեղծ մարդկանց հետ նստիր,
Ցիմարից փախիր փարսախներ հազար.
Թէ մի իմաստուն թոյն տայ քեզ, խմիր.
Թափիր թէ մեղրը տայ քեզ մի յիմար։

75

Ցոյսի աշխարհում շահիր ամեն սիրտ,
Ներկայ աշխարհում սիրական պահիր.
Բիւր հողի Քաբան[1] մէկ սրտի չարժէ.
Ի՞նչ պէտք է Քաբան, գրնա՛ սիրտ շահիր։

76

Մէկ երկու օրում կեանքն անցաւ, գրնաց
Ինչպէս դաշտի մէջ քամին սրբընթաց։
Թո՛ղ երկու օրւայ հոգ չանենք բընաւ—
Այն որ եկած չէ, և այն՝ որ անցաւ։

77

Այն որահում, ուր միշտ խըմում էր Բահրամ,
Ննջում է առիւծ, ձագ ունի այծեամ,
Բահրամին, որ գուռ[2] որսում էր յաճախ
Տեսար գուռն[2] ինչպէս որսաց մի անգամ։

---

1 Մեքքայում եղած սրբավայրը կոչւում է „Քաբա"։

2 Բահրամ, պարսից Սասանեան թագաւորներից մէկը, „գուռ"—(վայրի էշ) որսալու ժամանակ հոսող աւազների մէջ ընկաւ և ընկղմուեց իր ձիու հետ։ Այստեղ խաղ կայ „Գուռ" բառի վրայ, որ պարսկերէնում նշանակում է թէ՛ վայրի էշ և թէ՛ գերեզման։ Ծ. Թ.

78

Թէ երկու օրում ձեռքդ գայ մէկ հաց,
Եւ մէկ ումպ պաղ ջուր մի կժից կոտրած.
Ի՞նչու կատարել որև է հրաման,
Եւ ինչու լինել Նրմանից ծառան։

79

Մինչ ունի, ինչ կայ, զուտ քամի ձեռքում,
Մինչ ունի, ինչ կայ, արագ կործանում,
Խորհի՛ր աշխարհում, ինչ չը կայ՝ այն կայ,
Եւ սեպի՛ր կեանքում ինչ որ կայ՝ չը կայ։

80

Այդքան խզուր ցաւ թոյլ մի՛ տայ քո մէջ,
Եւ մի՛, այս կեանքում, ապրի՛ր յուսահատ.
Քանի որ չիք է վերջն ամեն բանի՝
Սեպի՛ր թէ չըկաս, և ապրի՛ր ազատ։

81

Ով որ մի կէս հաց ունի աշխարհում,
Եւ մի տնակի համեստ հովանի,
Ոչ տէրն է մէկի, ոչ մէկի ծառան՝
Թո՛ղ գոհ ապրէ նա, որ լաւ կեանք ունի:

82

Այնինչ մեր սրտով չի լինի ոչինչ,
Ո՞ւր պիտի հասնէ մեր հոգսն ու ճգնում.
Նստած ենք մենք միշտ, և ասում, «Ա՜փսոս,
Որ ուշ ենք եկել և շուտ ենք գնում։»

83

Նա որ տէր դարձաւ գիտութեանց ամեն,
Դարձաւ աշխարհում մի լոյս մարդադրաւ,
Այս մութից դէպ դուրս ճամբայ չը ճարից,
Պատմեց մի հէքիաթ, և 'ի քուն մտաւ։

84

Եթէ պարծենաս շքեղ քո սարքով,
Եւ կամ այս կեանքով ունայն ու չնչին,
Հողմին մահճակից՝ վառել ես ճրագ,
Կամ տուն ես շինել հեղեղի ճամբին։

85

Ճարունակ սրտից խղճերի համար
Տանջում ես, մաշում կեանքդ պատուական,
Չը գիտես, որ քո ցաւերն են զուր,
Որոնց կարօտը քաշում ես այդքան։

86

Տօնն[1] եկաւ, և այժմ մեր բանը լաւ է.
Սաղին հին գինով կուժը կը լցնի.
Ծոմը—ցուկակապ և Նամազը[2]—սանձ՝
Տօնն այս էշերի գլխից կը հանի։

---

1 Ծոմի ամիսը վերջանալիս, մահմեդականները մեծ տօն են բռնում։ Այդ տօնն է այստեղ ակնարկուած։
Ծ. Թ.

2 Նամազ, պարտաւորիչ աղօթք է։

87

Մէկ եզ[1] կայ վերում, կոչուած Բազմաստեղ
Եւ մէկ եզ[2] էլ կայ թաքուն գետնի տակ.
Խելքիդ աչքը բաց, եզների մէջտեղ,
Տես իբար ընկած՝ մի բուռ աւանակ։

88

Զես ամաչում այդքան հրաման կատրելով,
Եւ դառնալով մարդկանց գլխին պատուհաս.
Ասենք ծայրից աշխարհն առար մինչ 'ի ծայր,
Էլ ինչ կանես թէ ոչ թողնես ու երթաս։

89

Վերջը քանի որ ոչնչութիւն է
Աշխարհը նանիր,
Խորհիր թէ չը կաս, բայց քանի որ կաս՝
Սրտաւրախ ապրիր։

90

Եթէ այս կեանքի գաղտնիքն ինչպէս կայ,
Մեր սիրտն հասկացաւ,
Աստծոյ խորհուրդներն էր մահից յետոյ
Կըմբռնէ դիւրաւ։

---

[1] Բազմաստեղին արաբերէն կոչւում է Փարվին։ Դա „Եզ" կամ Taurus համաստեղութիւնն է։

[2] Հին աստղաբաշխների մէջ այն կարծիքը կար, թէ երկիրը դրուած է մի եզի եղջիւրների վրայ, որը կանգնած է մի հսկայական ձկան մէջքին։ Ձուկն էլ անընդհատ լողում է մի անհուն ծովի մէջ։ Արևելքում էլ ընդունւում էր այն կարծիքը թէ եզը ժամանակ առ ժամանակ յոգնելով երկիրը շպրտում էր մի եղջիւրից միւսի վրայ.

Ծ. Թ.

Այսօր քանի դեռ ինքդ քեզ հետ ես
Ոչինչ չիմացար,
Ի՞նչ կը հասկանաս վաղը որ քեզնից
Գընացիր իսպառ։

91

Մինչև երբ արդեօք պէտք չարչարես
Մարմին ու հոգի,
Թէ պէտք գիզես ճերմակ արծաթ
Ու զեղին ոսկի։
Առաջ քան սաւչին մահուան կնիքով
Զրթունքդ ու ժպիտ,
Կեր սիրածիդ հետ, եթէ չես ուզում
Ուտէ թշնամիդ։

92

Դաւանանքն է իմ խմել միշտ գինի
Եւ լինել ուրախ,
Իսկ կրօնքըս՝ լինել անկրօնութիւնից
Եւ կրօնքից անկախ։
«Քաբէնդ[1] ինչ է», հարց տուի մի օր
Աշխարհի հարսին.
«Ուրախ սիրտն է քո», պատասխան տուաւ,
«Ամբողջ իմ քաբին»։

---

[1] Քաբէն կոչւում է այն [illegible] որ մի [illegible] է [illegible] իր մէջ [illegible] ուխտ բոժժանում [illegible]։

Ծ. Թ.

93

Երկիւղածութեամբ թէ օր ու գիշեր
Կըրես դու տանջանք,
Լաւ չէ նորանից, որ մէկ հատ սրտի
Բաշխես ըսփոփանք։
Մէկ ազատ մարդու թէ գերի շինես
Քո սրտով բարի,
Լաւ է նորանից, որ ազատ թողնես
Հազար հատ գերի։

94

Եթէ ցանկանաս հասնել սրբութեան
Մի աստիճանի,
Քեզանից զրկանք, որև է մարդու
Մի՛ թողնիր հասնի։
Մի՛ վախիր մահից, և մի՛ մտածիր
Ապրուստի մասին,
Քանզի անպայման կը հասնեն դոքա
Հասնելու ժամին։

95

Լաւ է լաւ անել թէ բարեկամի
Եւ թէ թշնամու.
Չի անի՞նա վատ, ով սովոր է միշտ
Բարիք գործելու։

Եթէ վատութիւն անես սիրողիդ
Կը դառնայ ոսոխ,
Իսկ թէ լաւութիւն անես թշնամուդ
Կը դառնայ սիրող։

96

Չեղաւ որ մի մարդ հասնէր աշխարհում
Մէկի վարդաթուշ,
Եւ ճակատագիրն այդ խեղճի սրտին
Չը զարկէր մի փուշ։
Սանրը, մինչև որ չըպատառուեցաւ.
Բազմաթիւ վէրքից,
Ձեռքը չը հասաւ մի գեղեցկուհու
Հէրքին բուրալից։

97

Ցաւիդ հետ սազուի՛ր—որքան էլ ծանր՝
Եւ ապրի՛ր անկախ.
Փառասիրութեան թո՛ղ հոգսն ու վարի՛ր
Դու ազատ կենցաղ։
Մի՛ նայիր բընաւ քեզանից բարձրին,
Եւ մի՛ տանջիր քեզ.
Այլ նայի՛ր քեզնից պակաս մի մարդու,
Որ ուրախ ապրես։

98

Լի՛ց թասըս, Սաղի. մէկ շունչ աւելի
Աշխարհում չըկանք:
Շատ էլ գոհ եղի՛ր թէ կեանքը մէկ շունչ
Ձօնէ քեզ բերկրանք.
Ինչ էլ որ ծընէ կեանքը քեզ համար,
Միշտ ուրախ եղի՛ր,
Քանզի ոչ ոքի սրտով չի լինի
Աշխարհն այս պատիր:

99

Որպէս տըղամարդ՝ հանգոյցը խզի՛ր
Կին ու զաւակի.
Արձակի՛ր 'ի բաց ինչքի և արեան
Կապեր յոգնակի:
Ինչ որ ունենաս՝ սըրգէլք կը դառնայ
Ժամերին քեզ համար.
Կապերըդ կտրի՛ր. կապուած չես կարող
Կտրել ճանապարհ:

100

Ճաշի՛ր դու Ներկան, պիտի չը մընայ
Միշտ հոգիդ քո հետ,
Այլ գաղտիքների քօղի հետում
Կորսուի անհետ:

Վայելի՛ր գինի, քանզի չը գիտես
Ո՛ւրկից եկար դու.
Եւ ուրախ ապրի՛ր, քանզի յայտնի չէ
Ո՛ւր ես գընալու:

101

Ո՜վ դու բաղկացած քառեակ տարերքից,
Էակ մարդկային,
Լսի՛ր դու հոգու աշխարհից եկած
Պատգամն այս մեկին.
Դու ես թէ հրեշտակ, կենդանի անբան,
Թէ մարդ կատարեալ—
Քեզնից է կախուած, դու այն ես, ինչ որ
Կամենաս դառնալ:

102

Ասում էր բադին, մահուան կսկիծով
Ձուկը գալարուն,
«Գընացած ջուրը կարող է դարձեալ
Յետ գալ մեր առուն»:
Սակայն բադն ասաց—«Երբ որ ես և դու
Եղանք խորոված,
Մեր մահից յետոյ աշխարհը թէ՛ ծով,
Թէ՛ միրաժ[1] պատած:

---

1 „Միրաժ" — օբերեւոյթական պատրանք, երբ չեղած տեղը ջուր է երեւում հեռուից:

Ծ. Թ.

103

Քանի որ մարդուն տալիս է այս վայրն
Երկու դռնանի,
Սոսկ ցաւ ու տանջանք, մինչև որ հոգին
Հանէ նա բռնի,
Երանի՜ նորան, որ այս աշխարհից
Կանուխ հեռացաւ.
Եւ հանգիստ է նա, որ այս կեանքի մէջ
Չէ ծնուել բնաւ։

104

Ո՛վ Անիւ երկնից, դու չես ճանաչում
Ո՛չ աղ և ո՛չ հաց.
Որպէս մի ձկան պահում ես ինձ միշտ
Ցկլոր ու սառած։
Ցկլորը գոնէ հագուստ է ստանում
Կնոջ ձախրակից.
Ճախրակը կընոջ լաւ է քան թէ քեզ,
Ո՛վ ճախրակ երկնից։

105

Կայիր դու երբ դեռ ուտել ու քնել
Քեզ բընաւ պէտք չէր.
Քեզ կարիքաւոր դարձրել են միայն,
Քո չորս ընկերներ.

Բայց յետ կստանան նոքա քեզանից
Ամեն մէկն՝ իր մաս,
Մինչև որ մնաս ինչպէս որ կայիր,
Այնպէս էլ դառնաս։

106

Այս երկինքն, ինչպէս դաւաթ է կապոյտ
Գլխիվայր ընկած.
Նորա մէջ թշուառ մի վիճակ ունի
Ամեն քանիմաց։
Տես շիշն ու բաժակ որպիսի ունին
Բարեկամութիւն,
Շուրթ շրթի դրած՝ այնինչ նոցա մէջ
Հոսում է արիւն։

107

Աշխարհն ուզածովդ վայելած սեպիր.
Ի՞նչ կանես յետոյ.
Կեանքի այս նամակն հաշուիր կարդացած,
Ի՞նչ է ի վերջոյ։
Հարիւր, ասենք թէ, տարի ապրեցիր
Սրտիդ իղձի պէս,
Այդ հարիւր տարին էլ ապրած հաշուիր,
Յետոյ ի՞նչ կանես։

108

Այս երկու, երեք տգէտը, որ են
Աշխարհի մէջ տէր,
Ցիմարութիւնից, իրենց են հաշւում
Միայն խելօքներ։
Ուրախ կաց, քանզի այնքան ուրախ են
Եւ այնքան տխմար,
Որ մարդկանց միջից, ով չէ աւանակ՝
Սեպում են քաֆար[1],—

109

Այս բարձրակառոյց երկնակամարի
Անիւն անիրաւ
Ոչ մի թշուառի բարկապը գործից
Չը բացեց բընաւ։
Որտեղ որ տեսաւ խոշտանգուած մի սիրտ,
Որ ունէր կսկիծ,
Մի ուրիշ կսկիծ, կսկիծի վերայ
Խարանեց նորից։

110

Քանի որ տակն ես այս անգութ անուի,
Եղիր անվեհեր.
Եւ գինի խմիր քանի որ ունիս
Ցաւեր ու հոգսեր։

1 Քաֆար նշանակում է անհաւատ։

Ծ. Թ.

Քանի որ ըսկիզբդ ու վախճանըդ չէ
Թէ ոչ հողեղէն,
Սեպիր թէ հողի վերայ չես կանգնած,
Այլ տակն ես արդէն։

111

Ո՜վ ճակատագիր, ճշմարիտն ասա,
Ի՞նչ եմ արել ես,
Որ ինձ հետտանջ վազէվազի մէջ
Զգել ես այսպէս։
Ինձ հաց չես շնորհում մինչև թաղից թաղ
Ինձ քաշ չես տալիս,
Ջուր չես պարգեւում, մինչև չես տանում
Ջուրը երեսիս։

112

Այս յաւերժապէս թաւալուող անուից
Անխօսացնելի,
Երկու մարդ միայն կարող են քաղել
Արդիւնք բաղձալի,
Կամ նա, որ գիտէ անթերի կերպով
Դորա վատն ու լաւ,
կամ նա, որ էընից և ողջ աշխարհից
Լուր չունի բընաւ։

113

Ով իմաստութիւն ունի ամբարած
Աշխարհի մասին,
Նորա կեանքի մէջ ցաւ ու ցնծութիւն
Կանցնեն շատ դիւրին։
Քանի որ կեանքի թէ լաւն ու թէ վատ
Պիտի վերջանան,
Կուզես՝ ցաւ եղիր դու ամբողջովին,
Եւ կուզես՝ դարման։

114

Ռէնդերին[1] միայն ծառայիր կեանքում
Քանի կարող ես,
Եւ հիմնայատակ կործանիր ամեն
Ծոմ աղօթք ու ծէս։
Ճշմարիտ խօսքը Խայյամից լսիր,
Աշխարհի վերայ,
Եղի՛ր հարբեցող, եղիր աւազակ
Եւ բարիք արա։

115

Եթէ գընալս իմ ձեռքիս լինէր
Չէի գընայ ես.
Եւ եթէ գալս, ինձնից հարցնէին՝
Չէի գայ նոյնպէս։

1 „Ռէնդ" այն մարդն է, որ [illegible] ազնիւ է։ Ծ. Թ.

Աւելի լաւ չէր, որ այս աւերծուած
Աշխարհն ամայի,
Չըգայի սկզբում, չերթայի յետոյ,
Ոչ էլ մընայի։

116

Մինչեւ երբ 'ի սէր ագահ տենչերիդ
Մարմինըդ տանջես.
Մինչեւ երբ չորս կողմն ամբողջ աշխարհի
Վազվզես այդպէս։
Գնացին ու կերթան, և ովքեր որ գան,
Կերթան շարունակ.
Ոչ մէկը կեանքում չապրած իր իղձով
Մի կարճ ժամանակ։

117

Քանի որ քո մէջ կայ ջիղ ու ոսկոր,
Եւ կամ թէ կեանքի փոքրագոյն նշան,
Ոտքըդ մի փորձիր դուրս դընել բընաւ
Սահմանուած գծից նախախնամութեան։
Վիզըդ մի ծուիր թշնամուդ առաջ
Եթէ լինի նա նոյն իսկ մի Ռոստամ[1].
Շընորհ մի խնդրիր մի բարեկամից
Թէ Հաթամը—Թէյ լինի նա անգամ։

1 Ռոստամ, պարսկական հին [illegible] հերոսն է։ Ծ. Թ.

118

Նախախնամութեան վարագոյրը թանձր
Ցետ քաշել մի վայր ցալդ չեղաւ հրնար,
Եւ ճակատագրի գաղտնիքը կարդալ
Ջեղաւ կարելի ոչ ոքի համար։
Ես խօթանասուն և երկու տարի
Խորհեցի խորին գիշեր ու ցերեկ,
Եւ սակայն ոչինչ չեղաւ ինձ յայտնի,
Եւ չըկարճացան հոգսերըս երբէք։

ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ

Աշխարհի անցաւորութիւնը

119

Իւրաքանչիւր մի կակաչ,
Որ դաշտերում դու տեսնես,
Մի արքայի արիւնից
Կարմիր ներկուեց դա այսպէս։
Մանիշակի ամէն թերթ,
Որ ծիլ քաշէ այս գետնից,
Խալ է եղել գեղանու
Ձըթունքների յարակից։

120

Երեկ գիշեր զարկեցի
Քարին քաշի մի սափոր.
Հարբած էի երբ այդ գործն
Արեցի ես յանցաւոր։
Իւր անլեզու բարբառով
Սափորն ասաց ինձ լուին,
«Քո պէս էի ես մի օր.
Դու էլ կընկնես իմ օրին»։

121

Ապարանքն այն, որ երկնի
    Բարձունքի դէմ մրցում էր,
Որի շէմքին Թագակիր
    Դրում էին գլուխներ՝
Ըրջեցի ես մրտախոհ
    Դահլիճներում անկրտուր.
Որմին տեսայ սոսկ մի բու,
    Որ ասում էր, «Ու՞ր է, ու՞ր։»

122

Ուրախութիւն մի՛ փնտրիր.
    Կեանքը մի շունչ է սնոտի,
Ամեն մասնիկը՝ հողից
    Քէյղօբադի[1], Ջէմշիդի[1]։
Ամբողջ իմաստն աշխարհի
    Եւ մեր կեանքի անկայուն,
Մի ցնորք է լոկ և մի շունչ,
    Սոսկ մի պատրանք՝ և մի քուն։

123

Ինձնից առաջ ու քեզնից
    Կային շատ կին ու շատ մարդ,
Որոնք եղան աշխարհի
    Իրենց օրուայ շուքն ու զարդ։

[1] Պարսկական առասպելական շրջանի նշանաւոր թագաւորներ։

Ճուտ եկ, չէ՞ որ շատ շուտով
    Մարմինըդ հող կը դառնայ,
Որ այլ մարմին քո հողից
    Կազմ ու սընունդ ըստանայ։

124

Նոճիակազմ մէկի հետ,
    —Թարմ քան վարդի մի կուտակ—
Ձեռքից մի՛ տայ վարդի փէշն
    Ու վարդագոյն քո բաժակ,
Նախ քան տեսնես, որ յանկարծ
    Մահ—բորենին տըմարդի
Պատռեց շապիկը կեանքիդ,
    Ինչպէս շապիկը վարդի։

125

Ջանքով կեանքից պահեցինք
    Մէկ շունչ միայն մեզ՝ վաստակ.
Ընկերներից էլ մընաց
    Սոսկ ցաւերի յիշատակ։
Անցեալ օրուայ մեր գինուց
    Չըկայ լորից առաւել,
Մինչև տեսնես մեր կեանքից
    Ո՞րքան է դեռ մընացել։

126

Անդառնալի այս ճամբով
Գնացին անթիւ ճամբորդներ,
Բայց մէկ հոգի յետ չեկաւ
Որ մեզ գաղտնիքը յայտնէր։
Այս պանդոկում, ըզգոյշ կա՛ց,
Քեզ պէտք եղած բաներից
Ոչինչ ետև չը թողնես,
Որ յետ չես գայ դու նորից։

127

Ամեն մի փուշ, որ ոտքի
Տակն է ընկած կենդանու,
Գէսն է դա մի շընաղի
Եւ յօնքը մի գեղանու։
Ամեն աղիւս, որ գլխին
Դրուած է մի էյվանի,
Թագաւորի գանգ է դա,
Կամ մատն է դա իշխանի։

128

Ահա ծագեց արշալոյս,
Քօղը ճեղքուեց գիշերի.
Վե՛ր կաց, բաժակն առաջ բեր,
Զգլի՛ր շղթան հոգսերի։

Գինի խմի՛ր, ո՛վ իմ սիրտ,
Շուտ կը բացուի լուսաշող
Երեսն արած դէպի մեզ,
Եւ մենք երես՝ դէպի հող։

129

Ուրախ եղի՛ր. հոգսը մեր
Սահման չունի բընաւին.
Կը գայ նոյն իսկ կործանում
Երկնից անխախտ աստղերին։
Եւ մի աղիւս, որ մի օր
Մարմնիդ հողից կը շինեն,
Այլոց համար կառուցած
Տան ճակատին կը դընեն։

130

Հազա՛ր ափսոս, որ ըսպառուեց
Գարունը նոր բարիքի,
Եւ վերջացաւ նամակն իսպառ
Երիտասարդ տարիքի։
Եւ այն թռչունն երանութեան
Մատղաշութիւն անուանուած,
Հազար ափսո՜ս, որ չիմացանք
Թէ ե՛րբ եկաւ, ե՛րբ գընաց։

131

Երէկ ես տեսայ, որ կաւէ գլխին
Զարկում էր ոտքով մի բրուտ վարպետ։
Կաւն ասաց նորան իր անձայն լեզուով,
«Քո պէս էի ես, լաւ վարուիր ինձ հետ։»

132

Ո՜վ սիրտ, քանի որ վիճակուած է քեզ
Միշտ արիւն դառնալ, փոխուիլ հանապազ...
Ո՜վ կեանք, մարմնիս մէջ ինչո՞ւ ես եկել,
Քանի որ վերջը դուրս պիտի գնաս։

133

Զայն եկաւ կանուխ մեր մէյխանէից[1],
Թէ ո՛վ խենթ, պաշտող դու գինանձաւի
Ելի՛ր, որ լցնենք բաժակը գինով,
Նախ քան մեր կեանքի բաժակը լցուի։

134

Ելի՛ր ու եկ, եկ մեր սրտի համար,
Պարզէ՛ր դժուարին մէկ խնդիրը մեր.
Մէկ գաւաթ գինի բեր անոյշ անենք,
Նախ քան մեր կաւից շինեն գաւաթներ։

[1] Մէյխանէ նշանակում է գինետուն։

Ն. Թ.

135

Քանի որ ոչ ոք վաղը չը գիտէ,
Ուրախ պահի՛ր այժմ սիրտըդ վշտակէզ.
Խմի՛ր, ո՛վ Լուսին, քանզի լուսինը
Շատ պիտի դառնայ ու չը գտնէ մեզ։

136

Այս կուժն էլ ինձ պէս սիրող է եղած,
Կապուած ու գերի մի կոյսի մազին.
Կանթը, որ նորա վզին տեսնում ես,
Մի թեւ է եղած սիրուհու վզին։

137

Նախ քան ինձ ու քեզ կար օր ու գիշեր,
Պարապ ու անգործ նստած չէր Աստուած։
Ըզգոյշ կա՛ց, ոտքըդ կամաց դի՛ր հողին,
Քանզի մի կոյսի դա բիբն է եղած։

138

Ամպն եկաւ նորից ու մարգը ցօղեց,
Եւ ինչպէս հիմա ապրել անգինի.
Այս մարգն է այսօր մեր զբօսավայր.
Մեր հողից բուսածն ո՞ւմը կը լինի։

139

Երբ ամպը գարնան ծաղկունքը լուաց,
Վեր կա՛ց ու վճռի՛ր բերել ինձ գինի.
Այս կանաչն, ուր դու զբօսնում ես այսօր,
Վաղը իմ եւ քո հողից կը բուսնի։

140

Տես, փէշը վարդի ճեղքուել է հովից,
Սոխակը վարդով դարձել խնդագին.
Նստիր վարդի տակ, որ շատ վարդ այսպէս
Բուսնել է գետնից, ու թափել գետին։

141

Վեր կա՛ց ու վանիր հոգսերըդ քեզնից,
Եւ կեանքըդ մի վայր վարիր ցնծալից։
Թէ կայուն լինէր աշխարհն անցաւոր,
Հերթը ինձ ու քեզ չէր հասնի այսօր։

142

Մինչև երբ հոգամ թէ ունիմ կամ ոչ,
Կամ այս կեանքն արդեօք ուրախ կանցկացնեմ.
Գաւաթըս լցրու, քանզի յայտնի չէ,
Շունչը որ առայ նորից կը հանեմ։

143

Մի գինետան մէջ մի ծեր մարդ տեսայ,
«Լուր չունե՞ս», հարցրի, «դու գնացածներից»։
«Խմի՛ր», ասաց ինձ, «որ մեր պէս շատեր»,
«Գնացին, ու մէկն էլ յետ չեկաւ նորից»։

144

Մի կուժ շինողի խանութ գնացի
Երեկ իրիկուն,
Եւ այնտեղ տեսայ երկու հազար կուժ
Անխօս ու խօսուն։

Իրենց գոյ լեզուով ասում էին ինձ
Նոքա փոխ առ փոխ,
«Ո՞ւր է կուժ շինողն, ո՞ւր է կուժ առնողն,
Եւ ո՞ւր կուժ ծախողն»։

145

Գիտես թէ ինչու աքլորը զարթնում
Վաղ առաւօտեան,
Եւ ամեն րոպէ բառնում է սուգի
Մի ողբ բարձրաձայն.
Ասում է, «Լոյսի հայելու մէջ պարզ
Ինձ ցոյց են տալիս,
«Որ կեանքից անցաւ մէկ գիշեր եւս,
Եւ դու լուր չունիս»։

146

Կանաչը, որ դու տեսնում ես բուսած
Առուի եզերքին,
Բուսած է կարծես հրեշտականման
Կոյսի շրթունքին։
Զգո՛յշ, կոպտութեամբ չը դնես ոտքըդ
Կանաչի վերայ,
Քանզի վարդ այտի հողից է ծլած
Ցօղունը նորա։

147

Մի օր այս մարմնից կերթայ քո և իմ
Անարատ հոգին,
Երկու կը դընեն աղիւս իմ և քո
Դամբանի գլխին.
Եւ՛ այլոց համար երբ յետոյ շինեն
Աղիւսից շիրիմ,
Կաղապարի մէջ կը լեցնեն մարդիկ
Հողը քո և իմ։

148

Սիրտ իմ, սեպիր թէ աշխարհից առաք
Դու ամեն բարիք,
Թէ զարդարեցին պարտէզն հաճոյքից
Կանաչն ու ծաղիկ.
Եւ սեպիր թէ այդ կանաչի վերայ,
Որպէս ցօղ պայծառ,
Նստար մի գիշեր, և առաւօտեան
Զքացար խպառ։

149

Այս քո կարճակեաց մարմինդ, ո՜վ Խայյամ,
Վրանի է նման.
Արքան է հոգին, և տունն է նորա
Վաղանց օթևան։

Փարրաշը[1] մահի, երթալու համար
Մի այլ իջևան՝
Վայր ձգեց վրրանն, ասելով «Ահա,
Վեր կացաւ Արքան»։

150

Այսօր մի բրուտի գործարան գընալ
Ծագեց իմ մտքիս.
Գնացի, տեսայ վարպետին կանգնած
Եւ աշխատելիս.
Ճինում էր, կերտում կուժերի համար
Նա կոկորդ ու կանթ,
Գրլուխն արքայի տրնանկի ձեռքում
Դրնելով աւանդ։

151

Քանի որ կեանքից տաշում են անդուլ
Գիշերն ու ցերեկ,
Որ քեզ հող դառնան ցերեկն ու գիշեր
Թոյլ մի տայ երբէք։
Քո ամեն ցերեկն ու գիշերն ամեն
Ուրախ անցկացրու,
Քանզի շատ կը գան գիշեր ու ցերեկ
Եւ չես լինի դու։

1 Փարրաշ նշանակում է ծառայ որ պաշտօնն է վրան [illegible] Ծ. Թ.
[illegible]

152

Այս քարվանսրան, այս աշխարհը հին
Բնակավայրը մեր,
Որին գոյնզգոյն ներկում են անդուլ
Ցերեկն ու գիշեր,
Մի մեծ խնջոյք է հարիւր Ջէմշիդեց[1]
Թողուած աւելցուկ,
Եւ մի դամբարան հարիւր Բահրամի[1]
Ցարդ եղած նեցուկ։

153

Ժամանակը քեզ չէ տալիս թէ ոչ
Հոգսեր՝ տխրակին,
Եւ մէկ էլ տեսար, որ թռաւ մարմնից
Քո մաքուր հոգին։
Սրտիդ փափագով կանաչի վերայ
Նստիր մի վայրկեան,
Նախ քան քո հողից կանաչը բուսնի,
Եւ նստեն վերան։

154

Հազա՜ր երանի, որ հանգստութեան
Մի վայր գտնուէր,
Կամ տեղ հասնելու բնոյթն ունենար
Ճանապարհը մեր։

[1] Ջէմշիտ ու Բահրամ հին պարսկական թագաւորներ են։ Ս. Թ.

Երանի՜, հարիւր հազար տարուց յետ,
Որ հողի սրտից
Յոյս ունենայինք կանաչի նման
Բուսնելու նորից։

155

Մինչև երբ խօսես աղօթք ու մզկիթ
Ու պաշտամունքից,
Գնա՛ գինետուն և այնտեղ հարբիր,
Ընկիր կարիքից․
Խմիր դու գինի, քանզի ո՛վ Խայյամ,
Կը լինի մի օր,
Որ քո աճիւնից մերթ շինեն գաւաթ,
Մերթ կուժ, մերթ սափոր։

156

Քանի որ այս կեանքն անցնում է գնում,
Թէ լաւ՝ և թէ վատ՝
Քանի որ հոգին թռչում է մարմնից
Թէ Բալխ՝ թէ Բաղդադ՝
Խմիր դու. ինձնից ու քեզնից յետոյ
Շատ ու շատ լուսին,
Առաջնից վերջին, կը գայ ու նորից
Վերջից առաջին։

157

Շատ օրեր, որ մենք չենք լինի ու գետ
Կը լինի աշխարհ,
Չի մնայ մեզնից աշխարհում անուն,
Նըշան ու նշխար։
Սրանից առաջ չը կայինք ու պէտք
Չը կար մի բանի,
Սրանից յետոյ, որ մենք չը լինենք,
Նոյնը կը լինի։

158

Սրտի, կանաչի ու վարդի համար
Վըտանգ եմ տեսնում,
Օգտուիր թէ չէ հող են դառնալու
Մի քանի օրում։
Ըշտապիր, այսօր մի գինի խըմիր
Ու քաղիր մի վարդ,
Մինչև յետ նայես վարդը հող դարձաւ,
Ու կանաչը՝ յարդ։

ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ

(Գինեձօն)

159

Ես կեանք վարել չեմ կարող
Եթէ չըտան ինձ գինի.
Առանց գինու կարող չեմ
Կըրել ես բեռն այս մարմնի։
Ծառան եմ ես այն ժամուայ
Երբ որ, Սաղի, ինձ ասես,
Թէ առ այս մէկ բաժակն էլ,
Եւ անկարող լինեմ ես։

160

Ասում են ինձ թէ հուրին
Մի բան է խիստ հաճելի,
Իսկ խաղողի ջուրն անուշ,
Ըստ իս, լաւն է աւելի։
Առ այս կանխիկն և ընդ միշտ
Ապառիկից ձեռք լուա.
Թմբուկի ձայնը հեռուից
Միայն քաղցրը կը թուայ։ p. 151 Allen

161

Քանի որ դեռ երկնքում
Ծագում են աստղ ու լուսին,
Ոչ ոք, ոչինչ չէ տեսել
Աւելի լաւ բան գինին։
Հասկանալի չէ բընաւ,
Նա որ ծախում է գինի,
Ի՞նչ է արդեօք գընելու,
Որ աւելի լաւ լինի։

162

Անիւն այս լուռ չի յայտնել
Մարդուն մէկ հատ առեղծուած,
Եւ ցարդ Այազ ու Մահմուդ[1]
Հազար ունի մահացրած։
Գինի խմէր, ոչ ոքի,
Երկրորդ մի կեանք չեն տալու.
Ով որ գընաց աշխարհից,
Նորից աշխարհ չի գալու։

163

Մարգարէին իսլամի
Ողջունեցէք իմ կողմից,
Ապա Նորան ասացէք
Պատկառանքով յարգալից.

[1] Մահմուդ Ղազնուին Պարսկաստանի թագաւորն էր և Այազ նրա սիրելի ծառան։ Ծ. Թ.

Ո՞վ Հաշէմեան նահապետ,
Ինչո՞ւ կրօնքով երկնատուր
Մաքուր է թանը թթու
Եւ զուտ գինին՝ անմաքուր։

164

Երբ ձեռք առնեմ ես բաժակն
Անուշ գինով զեղալից,
Խսպառ հարբեմ և ընկնեմ
Իմ չափազանց բերկրանքից,
Հազար հրաշք կը գնեմ
Ամեն էջում քաղցրալուր
Այս աւինով հուրի պէս,
Այս խօսքերով իբրև ջուր։

165

Գինի վճիտ ու անոյշ
Ուզում է սիրտս անդադար,
Ուզում է միշտ ականջն իմ
Լսել սըրինգ ու քընար.
Թէ մի բըրուտ իմ հողից
Մի ժամանակ կուժ շինի,
Լաւ է որ այդ կուժի մէջ
Լեցուն պահեն միշտ գինի։

166

Երբ մեռնեմ գինով լուացէք դուք ինձ.
Երգեցէք վերաս բաժակն ու գինին.
Թէ վերջին օրում ինձ գտնել ուզէք,
Մէյքադի[1] դըռան հողն է իմ փոշին։

167

Թէ սիրատանջ ես, տարին մինչև վերջ
Եղիր խենթ, անհոգ ու խմիր հինի.
Քանի որ յուրջ ենք՝ հոգս է ամեն բան,
Երբ հարբած՝ ինչ որ լինում է լինի։

168

Այսօր քանի որ դեռ ջահիլ եմ ես,
Գինի կը խըմեմ, որ սիրտըս բանայ,
Մի պարսաւէք ինձ թէ դառն է. քաղցր է.
Դառն է նա քանզի իմ ապրուստն է նա:

169

Աշխարհն հանգիստ վայր չէ նիստ ու կացի.
Լուրջը՝ խեղճ, այնտեղ տեղն է հարբածի։
Ցաւիդ բոցի վրայ ջուր ածա գինով,
Նախքան հող մտնես, ձեռքիդ՝ միայն հով։

1 Մէյքադէ պարսկերէն նշանակում է գինետուն։

Ծ. Թ.

170

Երբ տունկը կեանքիս արմատից խլուի,
Երբ գատուի ինձնից ամեն մի անդամ,
Երբ որ կուժ շինեն իմ կաւից մարդիկ,
Ու լցնեն գինով—կը կենդանանամ։

171

Տուր ինձ այն վճիտ և սուտակ գինուց,
Եւ արիւն քամող փըկիր ապակուց.
Այսօր գինուց զատ չունիմ մի ընկեր,
Որի ներսն այդքան անաշարտ լինէր։

172

Գինուն զոհեցինք սրբակեցութիւն.
Գինետան հողով օծուեցանք մաքուր,
Գուցէ գինետան մէջ գտնենք մի կեանք,
Որ դպրոցներում կորցրել ենք ՚իզուր։

173

Կարմիր գինին արիւնն է այս աշխարհի,
Աշխարհն էլ մեզ՝ արիւնախում թշնամի.
Այժմ ասացէք, ինչպէս արդեօք չը խմել
Սրտի արիւնն արիւնախում օխերմի։

174

Գինի խմեմ այնքան որ՝ հոտն անուշակ
Գայ իմ հողից, երբ որ գընամ հողի տակ.
Գայ իմ հողից, երբ որ գընամ հողի տակ.
Որ գինեսէր մէկն իմ հողիս երբ մօտ գայ
Գինու հոտից հարբէ ընկնէ անըզգայ։

175

Ասում են, «Աստուած կը տայ քեզ զղջում,
Ձես խըմի գինի».
Նա ինքը չի տայ, իսկ եթէ տայ էլ
Ես չեմ ընդունի։

176

Գինին, Սաղի, ընկերն է իմ
Վաղուց ի վեր.
Սովոր չեմ ես ցնծալ առանց
Որթի դստեր։
«Գինեխումներն», ասում են ինձ,
«Կրօնք չունին»։
Խըմում եմ ես, և իմ կրօնքըս
Ինքն է գինին։

177

Գինու զովեստով մէկ կեանք շարունակ
Բերանս է լեցուն.
Եւ շուրջըս ինչ որ տեսնում էք թափուած
Յատուկ է գինուն։
Ո՞վ մարդ բարեպաշտ,՝ քո վարպետն այստեղ
Թէ խելքն է ուշիմ,
Միամիտ եղիր, որ քո ուսուցիչն
Աշակերտն է իմ։

178

Գինի ես խըմում, միայն իմաստուն
Մարդկանց հետ խմիր,
Կամ մի ծիծաղկոտ, ու վարդանման
Կընոջ հետ ընտիր։
Մի խմիր շատ, շատ, մի խմիր անդուլ,
Մի՛ խմիր յայտնի,
Այլ խմիր քիչ, քիչ, երբեմըն խմիր,
Եւ խմիր գաղտնի։

179

Տո՛ւր ինձ, ո՛վ Սաղի, այն գինուց կարմիր
Իբրև ծիրանի,
Որ մօտ է հոգուց, հոգիս, ո՛վ Սաղի,
Շըթունքիս հասնի.
Ի՞ցէ թէ, Սաղի, հարբեմ ու դարձած
Իսպառ անտեղեակ,
Ազատուիմ ինձնից և ժամանակից,
Մի կարճ ժամանակ։

180

Գինի եմ խըմում բայց լուրջ է իմ պէս
Տիեզերքն արար,
Իմ գինի խըմելս անսովոր մի բան
Չէ նորա համար։

Ամենիմաստունն ընկղմեց գիտէր
Կը խմեմ գինի,
Եթէ չը խմեմ Նորա գիտութիւնն
Անճիշդ կը լինի։

181

Նախատում են ինձ թէ պակաս բան այս
Գինի խմիր դու,
Եւ կամ ինչպիսի պատճառանք ունիս
Այդպէս չանելու.
Դէմքը սիրուհուս, գինին վաղորդեան,
Ահա քեզ՝ պատճառ,
Իրաւամբ դատիր պատճառ կայ ուրիշ
Աւելի պայծառ։

182

Դու ինձ շարունակ կոչում ես անկրօն
Եւ գինի խմող.
Պատճառը դորա սակայն չէ այլ բան
Եթէ ոչ քո ոխ։
Չեմ ժխտում բնաւ, ինչ որ ասացիր,
Այդ բանը կամ ես,
Բայց արդար դատի՛ր, քեզ խօսք կը հանի
Որ այդպէս ասես։

183

Իմ ձեռքի պէս ձեռք, որ ցարդ բռնել է
Միշտ բաժակ ու շիշ.
Ափսոսելի է, որ այժմ բռնէ
Նա մի բան ուրիշ։
Դու չոր[1] կենցաղով մարդ ես մաքրակեաց,
Իսկ ես թաց[2] շուայտ,
Որ թացը երբէք բոցով բռընկէ
Չեմ լսել ես այդ։

184

Երբ հագիւ շիկնեց վաղ առաւօտեան
Լոյսը ծիրանի,
Պէտք է պատուիրել, որ առաջ բերեն
Կարմրաշող գինի։
Ճշմարտութիւնը ասում են մարդիկ
Մի բան է դառնին,
Պէտք է այդ փաստով, որ ճշմարտութիւն
Լինի և գինին։

185

Իմ հոգու համար սնունդ է գինին,
Եւ ույժ իմ մարմնի.
Գինու միջոցով յայտնւում են ինձ
Խորհրդներ գաղտնի.

1 Խիստ ուղղափառ մահմեդական պահեցողներին „չոր ուղղափառ" են կոչում հեգնանքով:
2 Թաց երեւոյթ խմող անձն. որը հակառակորդն է չորի և այս անունը է [illegible] գինի խմելուն: Ծ. Թ.

Այլ ես չեմ փնտռում ոչ ներկայ և ոչ
Հանդերձեալ աշխարհ,
Մէկ բաժակ գինին երկու աշխարհն էլ
Ունի ինձ համար։

186

Կեանքըդ մինչև երբ ինքնապաշտութեամբ
Պէտք է անց կենայ,
Եւ կամ թէ եղած, չեղածի հոգսով
Մաշուի անխընայ։
Խմիր դու. մի կեանք, որ մահ վերահաս
Ունի իր ետև
Լաւ է, որ քնով կամ արբեցութեամբ
Անցնի յարատև։

187

Մենք ենք այդ որ միշտ գընում ենք կանխիկ
Հին գինի և նոր,
Եւ երկու գարի ծախում ապառիկ
Աշխարհն անցաւոր.
Գիտես դու արդեօք, որ մահից յետոյ,
Ուր պիտի գընաս.
Տօւ բեր ինձ գինին, և ինքըդ գընա
Ուր որ ցանկանաս։

188

Քո վաղանց կեանքի հաշիւը քաշիր
Թէ խելօք ես դու,
Թէ ինչ ես բերել ըսկզբում, և վերջն
Ի՛նչ ես տանելու։
Ասում ես գինի չես խմում, քանզի
Մի օր կը մեռնես.
Կը մեռնես մի օր, թէ խմես գինի
Եւ թէ չը խըմես։

189

Ու՞ր է Բաղախշի սուտականըման
Ջըթունքը գողտրիկ.
Ու՛ր է իմ հոգոյս հանգիստը, և ուր
Գինին անուշիկ.
Ասում են գինին իսլամութեան մէջ
Սեպուեած է հարամ,
Դու խմիր գինի և հոգսը վանիր,
Ու՛ր է այժմ իսլամ։

190

Գինին ըստ կրօնի թէև անուանարկ՝
Է խիստ հաճելի,
Եւ մի գեղեցիկ Սաղու ձեռքի մէջ՝
Է եւ աւելի։

Արգիլուած է նա., զաննահամ է նա,
Բայց ինձ՝ գուրեկան.
Վաղուց է արդէն, որ սիրուած է միշտ
Արգիլուած մի բան։

191

Ո՜վ դու, որ ունիս քո շրթունքի մէջ
Կենաց ջուր թաքուն,
Թոյլ չը տաս թասի շրթունքն համբուրէ
Շրթունքըդ սիրուն։
Ես տըմարդ լինեմ եթէ չը խըմեմ
Արիւնը թունգի,
Նա ո՞վ է միթէ, որ քեզ հետ գրնէ
Շըրթունք շրթունքի։

192

Ո՜վ մեր քաղաքի սըրբազան Մօֆտին[1]
Չես կարող լինել դու մեր չափ անմեղ.
Եւ մենք, այս բոլոր հարբելով հանդերձ,
Քեզնից աւելի ըզգաստ ու լուրջ ենք։
Խըմում ենք մենք միշտ արիւնը որթի,
Եւ մարդկանց արիւն խըմում ես միշտ դու.
Անաչառ դատիր, արդեօք մեզանից
Ո՞րն է աւելի վատ արիւնարբու։

[1] Մօֆթի նշանակում է իրաւագէտ իսլամական օրէնքի։

Տ. Թ.

193

Գինի եմ խըմում և աջ ու ձախից
Նախատում են ինձ հակառակորդներ.
«Մեղք է», ասում են, «քանզի ոսոխն է
Գինին մեր կրօնի աստուածանուէր»։
Երբ ճանաչեցի ես գինուն ոըպէս
Մեր դաւանութեան անհաշտ թշնամի,
Ասուած է վկայ, կը խըմեմ այժմ միշտ,
Արիւնը խմել, վարձք է, ոխերմի։

ԲԱԲԱ ԹԱՀԷՐ

1

Լարն իմ տխուր քընարի
Գիսակն է քո բուրալից.
Ի՞նչ ես արդեօք պահանջում
Իմ տառապեալ վիճակից։
Դու որ ինձ հետ, սիրուհի՛ս,
Ընկեր լինել չես ուզում,
Ամեն գիշեր էլ ինչո՞ւ
Գալիս ես ինձ երազում։

2

Քեզնից անջատ՝ մէկ բոպէ
Չեղաւ իմ սիրտն անկսկիծ,
Իսկ քո պատկերն երբ տեսայ
Փախան ցաւերս իմ սրտից։
Սրտիս վշտերն աշխարհում
Թէ բաժանեն հաւասար,
Էլ ոչ մի սիրտ չի մընայ,
Որ չը լինի վշտահար։

3

Սրտի կսկիծ, սրտի ցաւ.
Ո՜հ, ինչ անլուր տառապանք.
Աչքերն յանցանք են գործում,
Սիրտն է կրում հետեւանք։
Եթէ դէմքեր հրապուրիչ
Աչքը բընաւ չը տեսնէր,
Խեղճ սիրտն ինչպէս կիմանար
Թէ կան արդեօ քչքնաղներ։

4

Հովը, որ իմ երեսիս
Փըչում է քո գիսակից,
Քան թէ սմբուլն անուշիկ
Թւում է ինձ բուրալից։
Իրանք երբ որ մի գիշեր
Մտքով միայն գրկեմ ես,
Անկողինն իմ վաղորդեան
Բուրմունք կը տայ վարդի պէս։

5

Մի սիրտ ունիմ, ես մի սիրտ,
Բընաւ խելքի չի գալիս.
Գլխին խրատ եմ կարդում,
Ոչ մի օգուտ չի տալիս։

Տանում, տալիս եմ քամուն,
Քամին տանում չէ նորան.
Կրակի վերայ եմ դընում,
Չը կայ ծուխի մի նըշան։

6

Մի սիրտ այրուած թիթեռնիկ
Չի գտնուի իմ նման.
Իմ պէս չըկայ աշխարհում
Մէկը խելքով ցիրուցան։
Մի բոյն ունի իւր համար
Ամեն մըջիւն ու սողուն,
Ես, խենթս եմ սոսկ, որ չունիմ
Մի աւերակ՝ իբրեւ տուն։

7

Աչքերըս թաց՝ իմ կրծքում
Կրակով լեցուն կայ մի բով.
Ուրախութեան բաժակն իմ
Լի է սրտիս արիւնով։
Երբ որ մեռնեմ քո բոյրից
Կրկին ես կեանք կստանամ,
Թէ իմ հոգի վերայով
Անցնել ուզես մէկ անգամ։

8

Ո՜վ սիրտ, ո՜վ սիրտ, մի՞թէ դու
Վագր ու առիւծ ես հզօր,
Վագր ու առիւծ՝ որ իմ դէմ
Կռուի մէջ ես ամեն օր։
Թէ ձեռքս ընկնես, կը թափեմ
Արիւնը քո կենսատու,
Սի՜րտ իմ, սի՜րտ իմ, որպէս զի
Տեսնեմ ի՞նչ գոյն ունիս դու։

9

Դարւիշ եմ ես ընչազուրկ,
Անունս է իմ ղալանդար[1],
Ո՛չ տուն ունիմ և ո՛չ տեղ,
Եւ ո՛չ խարխուլ ու դադար։
Երբ որ ցերեկ է գալիս՝
Ընկնում եմ դաշտ ու լեռներ,
Գլուխս դնում մի քարի՝
Երբ որ գալիս է գիշեր։

10

Երբ ներկայ չես, թո՛ղ ծաղիկ
Զը տայ ոչ մի բուրաստան,
Եւ թէ տայ էլ, ոչ մի մարդ
Չը հոտոտէ թո՛ղ նորան։

[1] Ղալանդար կոչւում է այն դարւիշը, որ իր [illegible]։ Ծ. Թ.

A "Qalandar" is a kind of dervish who disregards all appearances and [illegible]

Սիրտըս, նէթէ ժպտալու
Շրթունք բանայ առանց քեզ.
Իր արիւնից երեսն իր
Թո՛ղ չը լուայ մշտապէս։

11

Գարուն եկաւ, և մի սիրտ
Ունի ամեն մի կակաչ,
Ամեն մի վարդ՝ մի սոխակ,
Ամեն սոխակ մի աւաչ։

Չեմ յանդգնում ոտք դընել
Ես ծաղկազարդ մի պարտէզ,
Գուցէ լինի մէկն այնտեղ
Միրտն իմ սրտից՝ սիրակէզ։

12

Արծիւ էի, և դէպի որս
Սըլացայ ես համարձակ.
Մի սևաձեռն հզօր թևիս
Յանկարծ զարկեց մի սըլաք։
Գընա՛, անհոգ մի՛ արածիր
Դալար ափին դու գետի,
Ով որ անհոգ է ճարակում,
Յանկարծ գալիս է նետի։

13

Այս աշխարհի ցաւերն ամբողջ
Ինձ են միայն տուել կարծես,
Այդ ցաւերին դարման գտնել
Է հազուագիւտ էքսիրի[1] պէս
Ամէն մարդու սրտի ցաւին
Դեղ է ճարւում մի ժամանակ.
Իմ սիրտն է լոկ, որի համար
Ոչնչանալն է դեղ միակ։

14

Ե՜րանի նորանց որ քեզ են տեսնում
Ամէն ժամանակ,
Որոնք նստակցում ու խօսակցում են
Քեզ հետ շարունակ։
Եթէ, սիրու՛հիս, թոյլ չը տաս ինձ գալ
Երեսդ տեսնել,
Գէթ թամ ու գոնէ նրանց կը տեսնեմ
Որ քեզ են տեսել։

15

Եկէք ինձ աչքիս ու սրտիս ձեռքից
Եկէք, փրկեցէք։
Ինչ աչքըս տեսնէ, սիրտըս մոռանալ
Չէ ուզում երբէք։

[1] Էքսիր—արաբական բառ է և ըստ հին քիմիագէտների, դա այն դեղն է, որ որևէ մետաղի դիպչելիս՝ նրան ոսկի է դարձնում։

Ծ. Թ.

Կը շինեմ մի սուր, երկսայրի խանչալ
Եւ ծայրը՝ պողպատ,
Կը զարկեմ աչքիս, որ սիրտս դառնայ
Նորանից ազատ։

16

Չափազանց սիրուց գեղեցիկների
Սիրտըս դարձել է խենթ ու խելայեղ.
Բանում եմ գոցում իմ արտևանունքս
Եւ իմ աչքերից հոսում է հեղեղ։
Սիրով տառապող մարդու սիրտն ունի
Վառւող թաց փայտի թշւառ դրութիւն.
Նորա մէկ ծայրից բոց է բարձրանում,
Նորա միւս ծայրից թորում է արիւն։

ՁԱՆԱՁԱՆ

Ասլի

Նազանքիդ մէջ մեկուսնացած՝
Ինչպէս կոկոն, ե՞ւ գիտես,
Որ դռնից դուռ, քեզ փնտռելիս,
Կայ մէկն ընկած հովի պէս։

Արզօլ Ղանի

Ո՞վ դու էակ աննման,
Որ սիրտս առար ու տարար
Գէպ քո սիրած, և սակայն,
Ինձ անծանօթ մի աշխարհ.
Զէր գա, թէ ոչ շընորհիւ
Իմ չափազանց նախանձի,
Որ երբ ընդ միշտ հեռացար,
«Աստուած քեզ հետ», չ'ասացի։

Արու Համայիլ

Հարբած քեզնով՝ ազատ 'եմ ես
Ընդ միշտ գինուց և բաժակից.
Որչն եմ վարմիդ՝ և միշտ անկախ,
Ամեն որսորդ ու վանդակից։
Դու ես միայն իմ նպատակ
Թէ Քաաբի մէջ թէ կրատան.
Թէ ոչ երկու վայրիցն էլ ես
Ազատ եմ այժմ և յաւիտեան։

Աբու Սաիդ

Մի տանջիր մի սիրտ, որի մէջ դու ես
Հոգի կենսատու,
Եւ որի համար. յայտնի ու թաքուն
Պաշտելին ես դու։
Քո անգութ վարքից, շատ եմ վախենում,
Ա՜նվախ գեղանիս,
Որ սիրտըս յանկարծ արեան ծով դառնայ
Եւ մէջը լինիս։

Աբուլ Հասան

Սիրեցեալիս տեսնելու
Պէտք է իմ աչքն ինձ համար.
Իսկ թէ նորան չը տեսնէ,
Ինչի՞ է նա օգտակար։

Աբուլ Փարաջ

Քեզ հասնելու տենչանքով,
Քաղցրաշրթունքդ իմ սիրուն,
Ոչ օրն հանգիստ ունիմ ես,
Եւ ոչ գիշերն ունիմ քուն։
Քեզանից հեռու՝ աչքս ու սիրտս,
Ո՜վ իմ գոհար անարատ,
Ջրով լցուն ովկիան է,
Հրով լցուն անապատ։

Ազահի

Ոչ քեզ ծարաւից կարող եմ տեսնել
Տանջուելիս լռին,
Եւ ո՛չ էլ տեսնել շրթունքդ դըրած
Կուժի շրթունքին։

Ազէր

1

Զոհւեցայ ես քեզ համար,
Եւ այն է գինն իմ արեան,
Որ դու տեսնես և ասես —
«Սիրոյս զոհեց նա իրան»։

2

Իր արցունքից կուտակուած
Ջրում խեղդուեց ծովածիր,
Ով որ քեզնից ջուր խնդրեց
Յագեցնելու ծարաւն իր։

3

Մի ժամանակ կիմանաս
Իմ ցաւն, երբ որ յուսատաս
Նստես մէկի ճամբի վրայ,
Եւ վեր կենաս յուսահատ։

4

Նորա սիրով տանջուիմ ես,
Տանջէ նորան մի այլ սէր.
Ո՛չ ես ունիմ, ոչ նա՝ մեղք.
Սրտի գործն են այս գործեր։

5

Տարբերութիւնն, ա՛յո, մեծ է
Այս իմ ու քո պայքարի,
Դու ապակուն քար ես զարկում,
Իսկ ապակին՝ ես, քարի։

6

Ես մի վարդ տեսայ, որ հարիւր բերնից
Թափում էր ծիծաղ.
«Գուցէ», ասացի, «խնդութեան պատճառն
Այս մարգն է չքնաղ»։
Երբ յորդ արցունքով վարդենու ոստից
Մի սոխակ ասաց,
«Ո՛չ, ծիծաղելով ծաղրում է միայն
Նա իմ ողբն ու լաց»։

7

Գիշերն ասում եմ գուցէ ցերեկով
Ազատուիմ ցաւից,
Ցերեկն ըսպասում, որ գուցէ գիշերն
Ամոքէ կսկիծ։
Այս դժբախտ կեանքից անցան քառասուն
Երկար տարիներ,
Եւ գիշերը դեռ ցերեկ եմ փնտռում,
Ցերեկն էլ՝ գիշեր։

8

Քեզնից զատուելն, ո՛վ հոգեակ,
Թող չը լինի ինձ բաժին.
Եւ թող այդ հուրն հոգեկէզ
Զայրէ բընաւ իմ հոգին։
Ցերեկն, երբ ես քո մօտ եմ,
Գիշեր չը գայ թող երբէք.
Գիշերն, երբ դու ինձ մօտ ես,
Չը գայ բընաւ թող ցերեկ։

9

Որե ես դու, և նստելու
Ոչ որ կողքիդ չէ ընդունակ.
Ջէմշիդ[1] ես դու, և չէ կարող
Ոչ ոք կոտրել քո ըմպանակ[2]։
Ուրախ եղիր, Աստուած ուզեց
Բանալ քեզ դուռն իւր գթութեան.
Երբ որ Աստուած բանայ մի դուռ,
Ո՛վ է կարող փակել նորան։

Անլի

Ճանիթն իմ կիզող հառաչի
Գիշերն՝ երկինք կուզարկեմ,
Որ աստղն այրէ չարաբաստ
Ճակատագրիս այս դժխեմ։

1 2 Ջէմշէր, Պարսկաստանի [illegible] [illegible]
Ծ. Թ.

Ահմադ Միրզա

Երբ որ իղձն այրեց հոգիս ու մարմին,
Սիրուհիս հագիւ 'ի գութ շարժուեցաւ.
Եկաւ որ ածէ ջուր իմ կրակին,
Երբ մոխիրս արդէն տարել էր քամին։

Ամիր Խօսրով

Իմ խելքը տարաւ ոչ թէ բարեկամ
Եւ կամ ազգական,
Այլ այն հերարձակ և խոշորաչեայ
Գանգալքը տարան։
«Ի՞նչու», ասաց ինձ, «քո սիրտն այն կնոջ
Տուիր դու բռնաւ»։
Ա՜ստուած է վըկայ, որ ես չըտուի.
Ինքը գողացաւ։

Անվարի

1

Ո՜վ դու, որից, յագեցան
Միշտ օտարի տենչանքներ.
Ես միշտ ընկեր քո ցաւին՝
Իսկ դու, այլոց՝ միշտ ընկեր։
Զոյգ աչքերիս արցունքով
Գիրկըս լեցուն՝ քեզ համար,
Եւ դու, ա՛նգութ, թոյլ տուիր
Քեզ գիրկն առնէ մի օտար։

2

Երբ որ եկան ծաղիկներն
Ու պճնեցին ծաղկանոց,
Դեռ ես իրենց կոկոնում
Նազեր արին մի միջոց.
Բայց երբ որ աչք բանալով
Տեսան քո դէմքն աննման,
Թառամեցին ամօթից
Եւ ոտքիդ տակ թափուեցան։

3

Մինչև երբ երեսը արիւնով լուայ
Քո անգթութեամբ սիրտըս վիրալից.
Արիւնն երկնքից չէ տեղում. գըթա՛.
Ողորմի՛ր, սիրտը չէ բուսնում գետնից։

4

Քեզանից բացի սիրտըս ուրիշի
Չեմ տայ ես դիւրին.
Արժան չեմ ծախի ինչ որ ինձ այսքան
Արժեց թանկագին։
Հարիւր կեանք սրտիս մէկ տենչի համար
Կը սեպեմ սակաւ,
Եւ հարիւր տենչով չեմ փոխի մի սիրտ
Որ քեզ ցանկացաւ։

Աշէղ

1

Թէ քեզ համար չէ շինուած
Սրտիս օթեւակն այս շքեղ,
Ապա ինչո՞ւ պատերին
Կայ քո նըկարն ամեն տեղ։

2

Անապատում բուռն սիրոյ
Որոտ կորզե՛ց զայրալից,
Տարաւ իմ լուռ շրթունքի,
Շնորհառատ ամպերից։

3

Ողորմի՛ր, Աստուա՛ծ, սոխակի ցաւին,
Որ բոյն է շինել վարդենու վերայ.
Ինքը կաշկանդուած միշտ վարդի սիրով
Եւ փշից ազատ չէ վարդը նորա։

Առէֆի

1

Թէ նորա ոտքն համբուրել
Չէ ինձ համար կարելի,
Կը համբուրեմ ուր դպաւ
Ոտքը նորա սիրելի։

2

Լեղակը խալ չը ձգեց
Քնքոյշ մորթիդ ըսպիտակ,
Այլ ականջիդ ըստուերից
Դարձաւ այդտեղ կապուտակ։

Սաիբ

Ես եմ և դու՝ այս գիշեր,
Իմ կարօտեալ սիրուհին,
Տալիս ես ինձ անխընայ
Շրթունքը քո վարդային։
Դու, ո՜վ գիշեր, մի շտապիր
Եթէ սպառնայ բիւր վըտանգ.
Եւ դու, ո՜վ Այգ, մի ժպտար
Եթէ ունիս բիւր հրճուանք։

Բաբա Աֆզալ

1

Վատ է՝ մի ստոր մուրացկան
Յանկարծ դառնայ մեծատուն.
Նա հարբելով՝ չի գտնի
Բարեկամից թշնամուն։
Եթէ կուժի դուրսն ամբողջ
Գոհարներով զարդարես,
Նորա միջից կը հոսէ,
Ինչ մէջը կար նախապէս։

2

Ում որ նախանձես, նա մի օր գլխիդ
Իշխան կը դառնայ.
Եւ որ մարդու հետ գիջումով վարուես,
Քո գերին է նա։
Քանի կարող ես աշխատիր բռնել
Դու ձեռքն ամենի,
Քանզի քո բռնած ձեռքը կը տեսնես
Քեզ ձեռք կը բռնի։

Բաղը

«Բառերդ», ասացի, «կտրած են գլխիս,
Թէև սահում են մարգարտի նման».
«Բերնիս պէս», ասաց, «մի փոքրիկ բերնից,
Մինչև չը կտրեմ, ինչպէս դուրս կը գան»։

Բաղմի

Եղի՛ր, հոգեակը՛ս, բարեկամների
Ցաւին կարեկից,
Եւ անմեղ մի սիրտ, սիրոյդ նուիրած,
Թող չերթայ ձեռքից։
Սիրողի ձեռքից սիրտն ընդ միշտ խլել
Չէ դժուար մի բան,
Բայց երբ խլեցիր, պէտք է, սիրելի՛ս,
Պահպանել նորան։

Դաղի

Մեռնում եմ ես այս ցաւից
Որ իմ մօտից գնացիր.
Կողքիս նստել չուզեցար,
Շիրմիս վերայ գէթ նստիր։

Դավրիշ

Սիրուհուս ձեռքից թէ յանկարծ մի նետ
Ցատկէ ու մտնէ կուրծքըս վշտահար,
Նետը կուրծքիս մէջ եղէգ կը դառնայ
Եւ այդ եղէգից ես կուտեմ շըքար։

Շահեա

Սիրոյ ճամբին սիրեալիս
Գլուխըս դըրի վերջապէս.
Եւ դեռ քայլն է առաջին,
Որ այդ ճամբին առայ ես։

Զարի

1

Մինչ թէ չունիմ որ թռչեմ,
Ո՛վ իմ հոգեակ վարմակիր,
Մի նոր անգութ բանէր դա,
Որ վանդակս էլ կտրեցիր։

2

Նորա ճամբին չէ մաշուել
Իմ կեանքը դեռ վշտալից.
Ու՛մն է ապա այդ փուշին
Կարաւանի հետից։

Զիա-օղ-ղլին

Արժէքն հարցրի համբոյրի,
Պատասխանեց, «Հազար կեանք»։
Շնորհիւ սրտի բարեգութ
Զը գնահատեց այնքան թանկ։

Զոլալի

Զես դիջանի յիշել բընաւ
Սրտիս փուշ, փուշ այս կսկիծ,
Մինչև որ իմ հողից բուսած
Մի փուշ բռնէ քո փէշից։

Էլահի

Քեզանից հեռու՝ թող պարտէզը մեր
Նոր վարդ չը ծընի,
Մոռացայ ծիծաղն ինչպէս գոց շըթունք
Փակուած կոկոնի։
Արտասւում եմ ես ինչպէս ձեռքի մէջ
Մի բաժակ գեղուն.
Հառաչում եմ ես ինչպէս դատարկ կուժ
Դէմ դըրուած՝ քամուն։

Թաքիր

Ո՞ւր է սոխակն երգանոյշ,
Որ մի խոպոտ կաչաղակ,
Նստած վարդի թուփի վրայ՝
Ձայն է հանում այլանդակ։

Խաղանի

Կեանքս կը տամ ինձ դու
Շըթունքըդ տաս մէկ անգամ,
Քանզի գիտեմ, որ նոր կեանք
Քո շըթունքից կստանամ։

Խաջէ Մօին

Միշտ իւր սիրուհու պատկերն է յիշում
Անքուն պատանին.
Նազ ու հրապոյրով ըզբաղուած է միշտ
Սիրուած գեղանին։

Մենք մեղք կը գործենք և նա կը բաշխէ
Ներում ու բարիք.

Այն բանը կանէ, ով ինչի համար
Ունի արժանիք։

Խաջէ Շամս-օղ-ղլին

Վարդի բուրմունք ու գարուն,
Սոխակի երգ ու գինի,
Ամեն բան կայ, բայց դու, ո՛չ,
Ո՛վ իմ անոյշ գեղանի։
Ինձ ինչ հաճոյք դորանցից,
Ուրտեղ լինիս բացակայ.
Ի՞նչ գործ ունիմ դոցա հետ,
Ուրտեղ լինիս դու ներկայ։

Ծաչու

Հարցումս ամօթ չը լինի—
Տուր ինձ, խնդրեմ, պատասխան.
Թէ չ՚ես ուզում սիրահար,
Ինչո՞ւ ես դու սիրարժան։

Ծօղայի Գիլանի

Երջանիկ կեանքից զրկուելով ընկանք
Ցաւերի աշխարհ,
Ես, ՚ի սէր գինու, և իմ հայրս Ադամ՝
Ցորենի[1] համար։
Դրախտի թռչուն ենք, և ինչո՞ւ արդեօք
Զարմանալ պիտի,
Որ ես գընացի ջըրի ետեից,
Եւ Ադամ՝ կուտի։

Հալալի

Ոչ թէ նետով, այլ սրով
Կուզեմ որ ինձ ըսպանես,
Որ իմ մահուան րոպէին
Գոնէ մօտիկ լինիմ քեզ։

Հալէթի

Չեմ ըսպասում որ երբէք
Խոստումդ աձես ՚ի կատար.
Բերկրանքը սուտ խոստումիդ
Բաւ է արդէն ինձ համար։

[1] Մահմեդականների հիմնւած աւանդութիւնն է որ Ադամ ցորեն կերաւ, և այդ պատճառով արտաքսուեց դրախտից։

Ծ. Թ.

Հէյդար

Անոյշ շըթունք գեղանու
Եւ ակնաբուղխ կենաց ջուր,
Երկուսն էլ են կենսատու՝
Սակայն ո՞ւր այս՝ և այն՝ ուր։

Հէյդարէ Գուլէ

Մահուան ժամին. ըսպանողիս
Փէշը հազիւ ձեռք բերի,
Կեանքիս վերջին իմ ձեռքն ընկաւ
Իղձն իմ ամբողջ օրերի։

Հէջրի

1

Այրում ես ինձ, և նոյնպէս
Այրում է այլ մի կսկիծ,
Թէ մի զոյգէ մոխիրն իմ
Տանէ քամին քո դռնից։

2

Կը մեռնեմ ես եթէ չը տաս ինձ գինի,
Կամ մի վայրկեան թէ ցած դընես ըմպանակ։
Ում որ բաժակն իսպառ լեցուեց կը մեռնի
Ես կը մեռնեմ թէ դատարկուի իմ բաժակ։

Հօզնի

Չորս կողմն աչքիս իբրև յանկ
Կան փշեղէն թարթիչներ,
Որ քունը ներս չը մտնէ
Եւ դուրս չը գայ քո պատկեր։

Հօզուրի

Հիւսուած մէկ թել քո մազից
Կար պատանիս ծայրերում,
Դատաստանին՝ տրուեցաւ
Դորա շնորհիւ ինձ ներում։

Հօսէյն Խօնսարի

Փչում ես դու, սիրո՜ւն Հով,
Բուրմունքներով բերկրարար.
Ու՛մ տոքն, իբրև ուխտաւոր,
Համբուրեցիր ու եկար։
Այգ, ո՛ր թաղումն ես շրջել.
Ե՛կ ու պատմիր ականջիս,
Ակնապարար քո փոշին
Աչքիս ծանօթ է գալիս։

Ղաանի

1

Ի՞նչ հոգ է թէ ես զուրկ եմ գլխարկից,
Քանզի ակնահաճ երկինքն է ինձ թագ.
Երկրագունտն ամբողջ պետութիւնն է իմ,
Եւ դաշտ ու լեռներ՝ պալատս ընդարձակ։

Սիրեալիս առաջ մի խեղճ մուրացկան՝
Արքան եմ ազատ իմ ժամանակի.
Կարիք, հեծութիւն, ցաւեր ու վշտեր,
Ահա՛ զօրքն անթիւ՝ իմ մեծ բանակի։
Որպէս Ղալանդար՝ ես մեղք եմ գործում,
Եւ հետևանքից վախ չունիմ բնաւ,
Քանզի սիրահարն է իմ մեղքերի
Ամենողորմի գթութիւնն ամբաւ։
Թէ քո շրթունքից խնդրեցի համբոյր
Երբ որ իմ գլուխս անցել էր գինի,
Բաժակի շրթունքն, իմ ներման համար,
Թո՛ղ գութից առաջ բարեխօս լինի։
Դատաստանի օրն, երբ որ ամեն ոք
Իւր արածների հաշիւն է տալիս,
Գեղանիների գէսի գոյնը մութ
Ցոյց կը տայ կըշիռն իմ սև տետրակիս։
Բարեկամներս ինձ պարսաւում են միշտ
Թէ այս աշխարհում չը կայ քեզ պաշտպան.
Բարեկամներիս արևն է վըկայ,
Որ պաշտպանն է իմ հէնց ինքն այդ «Ջըկան»։

2.

Ես քեզ հետ դիտմամբ կռուել եմ ուզում
Ի սէր հաշտութեան,
Որպէս զի գուցէ գործըս համբոյրով
Ըստանայ վախճան։

Ղահամը Հանիչէ

Ոչ ոքի մօտ, իմ խանդիկ
Երբ որ անունդ հնչում չեմ,
Ի՛նչպէս ապա հարցնելով
Տունըդ պիտի ճանաչեմ։

Ղազալի

Ես ունէի մի շէն սիրտ,
Եւ քանդեցիր դու նորան,
Ու՛մ գանգատեմ, երբ քաղաքն
Ինքը քանդէ հէնց արքան։

Ղանէր

Ով որ բերէ շիրմիս վրայ
Այն իմ պաշտած աղջըկան,
Վարդի փունջով կը պատուէ
Մարտիրոսի գերեզման։

Ղէյրաթ

Ո՛վ դու, որիդ պատկերով
Հրճւում է միշտ իմ հոգին,
Չեղաւ որ քո շրթունքից
Ցաւերդ տաս իմ փափագին։
Ասենք, որ ինձ քո դռնից
Վռնտեցիր դու դժխեմ.
Է՛լ ինչ կանես, որ միայն
Քեզ յիշելով ուրախ եմ։

Ղօղսի

Ջնջում է նա մերթ ինձ մօտենալով
Հոգսերս իմ սրտից,
Եւ մերթ ինձանից հեռու մնալով
Տալիս է կսկիծ։
Արեգակնային յատկութիւն ունի
Լուսինս անթերի.
Ծլեցնում է ինքն, ինքն էլ չորացնում
Ամեն գալարի։

Մաշրաբ

Կարելի բան է մի կամուրջ շինել
Ովկիանի վերան,
Կարելի բան է գցել երկնքում
Աստղերի ճամբան.
Կը լինի կապել օձ ու կարիճի
Խայթը թունալի,
Բայց խպառ գցել բերանը մարդկանց՝
Այդ չէ կարելի։

Մաջդ

Բաժանուած քեզնից՝ մի հարցրու թէ ես
Ինչի եմ նըման.
Քո յիշատակներն հասցրել են ինձ
Դուռը խենթութեան։

Մոմի պէս կանգնած՝ և արտասունքն իմ
Թռնած մինչ, ՚ի ծունկ.
Թասի պէս նստած՝ և արիւնս հասած
Մինչև, ՚ի շրթունք։

Մաջիդ

Բերկրում ես քանզի բերկրանքն աշխարհի
Բաժինքն է սրտիդ,
Եւ դեռ չը գիտես թէ բերկրանքդ ունի
Դառնութեան օժիտ։
«Սիրտըս», ասացիր «ամբողջ աշխարհում
Ցաւ չունի բընաւ»,
Բայց իմ սիրտն ունիս, որ ունի ամբողջ
Մէկ աշխարհ ցաւ։

Մաջդ-օդ-Դին

Բոսորագոյն վարդն ու գինին
Քո խնջոյքում միացան.
Վարդի գինուց այնտեղ հանդէս
Սարքել ես դու ցնծութեան։
Գինի էր վարդն, ու հառաչիդ
Ցրտից սառեց նա այդպէս.
Վարդ էր գինին, ու հալուեցաւ
Քո նայուածքից հրրակէզ։

Մասիհ Քաշի

Դու մի զարմանար թէ մի երկու օր
Համբերում եմ ես հեռու քեզանից.
Ինչպէս կենդանի ծառից կտրուած
Կենդանի մի ճիւղ՝ դեռ չեմ գիտակից։

Մաքթաբի

Անոյժ է նա, որ քեզ համար
Երեկ գիշեր լցրեց գինի,
Ինչպէս անքուն մի պարտիզպան,
Որ բուրաստան ջըրած լինի։

Մէյլի

Հրճւում եմ ես քո նետից,
Սակայն ողբում անխըղնայ,
Որ քաղցրութիւնը նետիդ
Մի օտար մարդ չիմանայ։

Միր Ջէմալ

Թէ ձեռքըս երբէք գիսակիդ հասնի,
Ու դրօշմեմ համբոյր բերնիդ վարդային,
Գիշեր կը լեցնեմ ես աչքն ամենի,
Ու ոտքիդ առաջ կը զարկեմ քարին։

Միր Դամադ

Արդեօք ինչ չարիք պիտի գայ գլխիս.
Զարկում է սիրտըս թափով վայրենի,
Զը լինի, հոգեակ, որ քեզնից զատուիմ,
Եւ ուրիշ ինչ որ լինում է լինի։

Մօխթար

Առ կեանքս ու տուր համբոյրով
Ինձ նոր մի կեանք, ո՜վ հոգեակ,
Որ յետ տամ քեզ վերստին
Նոր համբոյրի փոխանակ։

Մօհթաշամ

Հոտ կը քաշեմ ու կասեմ
Ինչ վարդ որ տայ ինչ այգի,
Հոտեդ մեռնեմ ու ոտեդ,
Հոտն ես տալիս դու մէկի։

Մօնաէֆ

Ուռկան ձգէ դաշտի մէջ
Թէ իմ որսորդ նազելին,
Չէ կարելի շղթայով
Ջրում պահել ձկներին։

Մօշթաղ

1

Դու մի խաբուիր թէ նորա
Սէրը փայլէ գինու պէս.
Գինի է դա բաժակում
Սակայն արիւն՝ երբ խըմես։

2

Տանջանքս՝ անսահման, վշտերս՝ անհամար,
Եւ ես՝ միայնակ.
Ի՞նչ անեմ, Աստուած, քանզի տոկալու
Չեմ ես ընդունակ.

Կամ ոյժիս չափով հոգս ու տառապանք
Կշռիր ինձ համար,
Կամ հանդուրժելու ինձ ոյժ պարգեւիր,
Ցաւիս հաւասար։

Մօվլավի

1

«Չէ գտնւում», ասացին,
«Փնտռում ենք մենք շարունակ».
Բայց այն որ չէ գտնւում,
Այն է ուզածն իմ միակ։

2

«Ինչու»,ասաց ինձ, «աչքերդ իմ դէմքին
Պահում ես գամուած»,
Թաց են և ահա ինչու եմ պահում
Արևի դիմաց։

Նարգէս

Քո եռանդիդ սաստիկ թափին
Նախանձում եմ, ո՜վ իմ Հառաչ,
Որ սլացար արագ, արագ,
Հասար նորան ինձնից առաջ։

Նէղարի

Երբ այն թաղն երթաս, քո ոտքը գետին
Չը դընես այնտեղ,
Քանզի ճամբի հող այնտեղ կայ դարձած
Շատ հոգի անմեղ։

Նէջաթ

Գիշերը լաց ու կոծով
Մարդկանց քունն եմ խանգարում,
Նորա համար, որ ոչ ոք
Չը տեսնէ քեզ երազում։

Նէսայի

Ծ՛կ, որ չը մընաց իմ առատ լացից
Այնքան չոր գետին,
Որ երբ դու գընաս, ես կարող լինիմ
Հող տալ իմ գլխին։

Նէսքի

Հազա՜ր երանի այն գիշերներին,
Երբ սիրում էիր հէքեաթներ լսել.
Ես քեզ իմ սրտի ցաւն էի պատմում,
Եւ դու բոլորն այդ սեպում առասպել։

Նիքի

1

Եկար նախ քան լուրըդ գար,
Չքնաղիկ՛դ իմ խնդալից.
Ուզո՞ւմ էիր, որ մեռնեմ
Ես չափազանց հրճուանքից։

2

Յուսալով որ գէթ իմ ձեռքը բռնես,
Ես իմ այն օրին կը տամ երանի,
Երբ որ ծերութիւնս արած պատրուակ
Ոտքերըդ կընկնեմ, ո՜վ իմ պեղանի։

Շահի

Երբ որ ուզէ սիրուհին
Նազեր անել դիւթալից,
Սիրողն ինչպէս ինքն իրան
Հեռու պահէ վրտանգից։
Բարի խըրատը մարդկանց
Քամի է իմ ականջում,
Բայց մի քամի, որ սրտիս
Բոցն է միայն արծարծում։

Շահ Նազար

Կամ մենք թշնամու գլուխը կը փշրենք,
Կամ նա կը քաշէ մեզ կախաղանի.
Լաւ է մէկ հոգի պատւով մահացած,
Քան թէ անպատիւ հարիւր կենդանի։

Շահուղի

Սիրտս իւր գլխին տեսաւ տեղալիս
Հուրը ցաւերի,
Քո թաղում գրտաւ արիւնը թափուած՝
Հարիւր հազարի.
Քո մազերի մէջ փախաւ որ գուցէ
Գտնէ ապաստան,
Բայց այնտեղ կախուած մի երկու հազար
Տեսաւ իւր նման։

Շամս օղ Դին

Քանի որ առանց սիրուհուս դէմքի
Գալիս է գարուն,
Ի՞նչ սրտով հրճուիմ, կամ ինչի պէտք է
Ինձ ուրախութիւն։
Պարտէզում, ասա, գալարի տեղից
Թո՛ղ փշեր ծլեն,
Եւ ամպին ասա, թո՛ղ դաշտին տեղայ
Ջրի փոխարէն։

Շարաֆ

Ո՞ւր է գինի, որ քարով
Փշրեմ բախտի ապակին.
Բախտը քարով մինչև երբ
Ջարկէ պիտի մեր կժին։

Շարաֆ

Ես չեմ ցանկանում, որ նրա տանից
Զեփիւռը փչէ դէպի բուրաստան.
Վարդը, մի գուցէ բոյրեցը խըլէ,
Եւ մի օտար մարդ հոտոտէ նորան։

Շարաֆ Ջահան

Ըսպանում է ինձ ոխակալ սրով,
Եւ դորա համար չեմ ցաւում, սակայն՝
Ըսպանում է ինձ 'ի սէր մրցակցիս,
Եւ ինձ ըսպանողն այդ ցաւն է միայն։

Շափուր

Թաղն ու բնակարանն յիշեցի նորա,
Մարմանդը դաշտի երբ որ տեսայ ես,
Երբ աչքովս ընկաւ երեսը վարդի,
Մտքիս եկաւ մէկը վարդերես։

Շարաֆ-օղ-դին

Ահա եռեիցդ ընկնում, բարձրանում
Գալիս եմ արբշիռ,
Իսկ դու խորհեցիր թէ սիրտըս տարար
Եւ ազատուեցիր։

Շէհիդէ Ղօմի

Գընա զբօսնիր բուրաստանում,
Եւ ում կուզես, առ քեզ ընկեր.
Բայց երբ մի փուշ փէշդ բռնէ,
Այն ժամանակ ինձ միտքըդ բեր։

Շէյխ Ալի Նաղի

Փափագում եմ ես մատաղներ անել
Սիրածս աղջկայ ընքոյշ ոտքի տակ.
Ափսոս, որ միայն մէկ կեանք ունիմ ես,
Այն ինչ սրտիս մէջ՝ հազարի փափագ։

Տովքաթ

Շրթունքըդ կարմիր նըման է գինու,
Իսկ սիրտս՝ կարծես խորոված լինի.
Ապա եկ նստենք բարեկամաբար
Ինձնից՝ խորոված, ու քեզնից գինի։

Տօջա

Ինձ մօտ ես դու այս գիշեր,
Եւ մահն է սոսկ մի դարման,
Որով պիտի ազատուիմ
Ցաւից վաղուայ բաժանման։

Ջալալ

Նազի դասեր որքան տաս
Խումար աչքիդ գեղանի.
Այնքան սրտեր հրապուրէր,
Որ պահելու ճար լինի։

Ջալալի

Ծամերիդ վերայ թէպէտ և՝
Հող է ամեն գեղեցիկ,
Ափսոս է, բայց, որ հողին
Ոտքըդ դպչէ քնքուշիկ։

2

Ես մոմի պէս դիւրահալ
Դու, այգի պէս լուսաճեմ՝
Կայրուիմ քանի դու չըկաս,
Իսկ երբ որ գաս՝ կը մեռնեմ։

Ջամէրաֆ

Ով որ հաւատայ, թէ դու կարող ես
Պարգևել ներում,
Փոխ կառնէ յօժար ինչ որ յանցանք կայ
Երկու աշխարհում։
Ես մեղք կը գործեմ աւելի քան դու
Գիտես ողորմել,
Մի գուցէ սեպես ներումը պակաս
Գութիդ անվայել։

Ջամի

1

Այցելութեան ես եկել
Քո մահամերձ հիւանդին.
Հենց այդ իղձն էր, սիրուհիս,
Որ ինձ ձգեց անկողին։

2

Գիշերները՝ զուրկ քո դէմքի լուսնից,
Իմ թարթիչներից թափում եմ աստղեր,
Բայց այս իմ փայլուն աստղերով հանդերձ,
Մութն է ինձ համար ամեն մի գիշեր։

Ջաֆար

Ամեն գիշեր առանց քեզ
Մեռնում եմ ես, ու կրկին,
Առաւօտեան, քո բոյրով,
Կեանք է տալիս ինձ քամին։

Ռանէր

Զագդից քո սրտին հառաչը բռնաւ․
Մեր նետն այստեղ է, որ քարի դպաւ։

Ռանի

Թէ կարող լինի սիրտը հանդուրժել
Սիրոյ ցաւերին,
Նա մի ժամանակ գուցէ կը հասնէ
Իւր փափագներին։
Թէ սիրտ չը լինի, ուր պիտի հիմնէ
Սէրը հայրենիք․
Թէ սէր չը լինի, ինչ է ուրեմըն
Սրտի արժանիք։

Ռաֆիղ

Ոչ ոք սիրոյդ դիմանալ
Ինձնից բացի չի կարող,
Ոչ ոք բացի ինձանից,
Չի մշակի աղի հող։

Ես ամեն տեղ քո մասին
Վատ եմ խօսում անընդհատ,
Որ մի գուցէ սիրէ քեզ
Որն է մէկն ինձնից զատ։

Ռաֆիղ-օղ-ղլին

Ծակատագրի, երկնի դէմ
Իզուր կռիւ մի մղի,
Մի լար բախտի հարուածից
Իբրև քընար դառնացի։
Հողում ոսկի՝ ու ծովի
Անդունդներում մարգարիտ՝
Երբէք անգործ չեն թողնի․
Ջուր ես տանջում դու հողիդ․

Ռաշիդ

Թէև ծերացած՝ բայց եթէ բախտն ինձ
Կամենայ ժպտալ,
Ցնծութեան բոպէն ու ժամն հրճուանքի
Կը գան ինձ դարձեալ։
Քո երկար մազից ես մի լար շինած
Կը ձգեմ վզին,
Եւ անցած կեանքըս գիսակովդ ինձ յետ
Կը բերեմ կրկին։

Սաադ-օղ-ղլին

Հասակըդ միջակ՝ ո՛վ իմ նազելի,
Ո՛չ կարճ, ո՛չ երկար,
Ո՛չ ըզգաստ և ո՛չ հարբած լիովին՝
Աչքերըդ խումար։
Այն-քան այնպէս ես, որ պէտք է այնպէս,
Ո՜վ իմ գեղանի,
Քո պէս սիրուհի ո՛չ եղել է ցարդ,
Եւ ոչ կը լինի։

Սաբահի

Փէրիանազ դեռատին
Գընում էր դէպ ջրամբար.
«Ինչո՞ւ գընաս», ասացի,
«Այդքան հեռու ճանապարհ.
Վեր ա՛ռ աչքիս առուակից,
Եւ ծարաւիդ յագուրդ տո՛ւր»։
«Շրթունքս», ասաց, «այս անոյշ,
«Եւ այդպիսի աղի ջուր»։

Սաբէր

Գուրս եմ քաշում թէ յանկարծ
Նետըդ խըրոնած իմ սըտից,
Մաքրելն արած պատրուակ՝
Աչքս եմ խօթում ես նորից։

Սաբուրի

1

Շըթունքիդ առաջ տուի իմ հոգին,
Եւ ո՛ւմ մօտ պատմել կը լինի այս ցաւ,
Որ կենաց ջըրի աղբիւրի ափին,
Ծարաւն իմ մահուան պատճառը դարձաւ։

2

Սիրով տանջուողի վիճակն է ամեն
Անջատման գիշեր,
Ձը բընել բընաւ, ու տեսնել հազար
Չփոթ երազներ։

Սալման

Ուխտ կապեցի ու կոտրեցի ես այնքան,
Որ ուխտ ինձնից զանգատ ունի բանացի.
Երէկ ուխտով ես կոտրեցի բաժակն իմ,
Ուխտս էլ այսօր մէկ բաժակով կոտրեցի։

Սահբաի

Հազա՜ր ափսոս, որ բարիք
Ունին մարդիկ անբարի,
Եւ որ ունին թերիներ
Սարք ու ստացուածք անթերի։
Նա, որ չարժէր մի ստորին
Ըսպասաւոր լինելու,

Ընտուարաթիւ մարդ ու կին
Այսօր ունի սպասարկու։

Սաէլ

Երէկ, իմ հոգեակ, քո թամբից ընկար
Եւ մի թերութիւն չէ դա քեզ համար.
Դու վարդի թերթ ես, և հովն է քո ձին,
Հովից վարդի թերթն ընկնում է գետին

Սաֆի

1

Կուրծքիս այրող կսկիծն այս
Միայն նորան է յայտնի,
Որի սրտում ցցուել է
Փուշը մի թարմ կոկոնի։

2

Վարդի բուրմունքը խեղճին
Առաջնորդեց դէպ իրան,
Թէ ոչ, սոխակն ինչ գիտէր
Թէ ո՛րտեղ կայ բուրաստան:

3

Ծերութեանս օրում խլեց վերջապէս
Սիրտս մի խաղլուկ, մատղաշ գեղանի,
Ո՜վ ասաց արդեօք տղէտի խաղով
Չը գընայ ձեռքից սիրտն իմաստունի։

Սահաբի

1

Ում որ համնիս դու լաւ տես,
Քանզի չէ նա թէ ոչ լաւ.
Այդպէս նորան Նա՛ ստեղծեց,
Եւ այդպէս էլ կամեցաւ։
Դու թերութիւն մի սեպիր,
Թէ կարգ ու սարք չունիմ ես,
Գուցէ սիրէ Սիրելին,
Որ ես լինիմ հէնց այդպէս։

2

«Չըկայ», գոչում է տիեզերքն ամբողջ,
«Թէ ոչ մէկ Աստուած»,
Տըգէտը խորհում. թէ այս լաւ և այն
Սըխալ է արուած։
Եռում է գոռում ամբողջ էութեամբ
Ովկեանն ալէկոծ,
Իսկ փուշը սեպում թէ իր համար է
Այսքան քաշքշոց։

Սէյֆ

Խնդրեմ կատարես փափագը սրտիս,
Զեփիւռ դու սիրուն,
Գընաս իմ կողմից և տաս մի պատգամ
Իմ գեղեցկուհուն։

Ըզգոյշ կաց. Նորա զանգուրների մէջ
Մի սիրտ ունիմ ես,
Բարեւիր ինձնից եթէ գեռ նորան
Կենդանի գտնես։

Սէնայի

Ոչ այն բախտն ունիմ, որ ինձ սիրուհիս
Դառնայ կարեկից,
Ոչ այն խելքն ունիմ, որ հեռու կենամ
Սիրոյ վրտանգից,
Ոչ այն ձեռքն ունիմ, որ մղեմ կռիւ
Ճակատագրի դէմ,
Եւ ոչ ոտք ունիմ, որ ինձ փրկելով
Մէջտեղից փախչեմ։

Սօհէյլի

Իմ ըստուերից բացի չը կայ
Վշտիս օրում մէկն ինձ ընկեր.
Նա էլ սակայն չի դիմանայ
Երբ վրա հասնէ մութն իմ գիշեր։

Վալի

Դժուար է խիստ քեզ տեսնելուց յոյս կտրել
Եւ կամ տեսնել որ քեզ հասնէ մէկն օտար.
«Մեռիր մինչև որ ինձ հասնես», ասացիր,
Հեշտ է մեռնել, բայց քեզ հասնելն է դժուար։

Վահշի

Սրխալ խօսք է այն, թէ սրտից առ սիրտ
Հաղորդակցութեան մի լար կայ գաղտնի,
Սիրտըս քո սիրով արեան ծով դարձաւ,
Եւ քո սիրտը դեռ ոչ մի լուր չունի։

Քալիմ

1

Հանգիստ եմ սրտով, քանզի չը դարձայ
Բախտի սիրելին,
Ինչպէ՞ս է կարող — երբ որ վեր չառաւ —
Զարկել ինձ գետին։

2

Թեզանից անջատ՝ բախտի տառապանքն
Այլ ևըս չունի ինձ համար կսկիծ,
Ինչպէս որ կրակից ոչ մի վախ չունի
Մի ձուկ, երբ նորան դուրս բերեն ջրից։

Քէմալ

Ամեն գիշեր գընալով
Աճում է դէմքը լուսնի,
Ճիգ է թափում որ դառնայ
Նա քո նըման գեղանի.
Բայց տասչորսին տեսնելով
Գրաւիչ ոչ մի դիմագիծ
Չունի քոնից հաւասար,
Հալւում է նա այդ ցաւից։

Քէմալ Խամայիլ

Երկու սաթարայր գէսիդ շարժումից
Վարդը կըցաւէ այտիդ քնքուշիկ.
Տեղը մի զուցէ մընայ երեսիդ,
Երբ որ մատնացոյց անեն քեզ մարդիկ։

Օրֆի

1

Օտարի հետ գընում ես,
Եւ ինձ ասում «Եկ, դու՛ էլ»։
Շնորհակալ եմ, գընա դու,
Ոտքըս կարող չէ քայլել։

2

Տեսաւ թարմ օդ ու մարմանդ,
Փորձեց բանալ նա թեւեր,
Թէ մի արծիւ կար մօտիկ
Խղճուկ կաքաւն ինչ գիտէր։

3

Սիրուհուս առաջ, ով մահ, մի թողնիր
Ինձ ամօթալից,
Մի կորիր յոյսըս, այն իմ օրհնած
Անգին գոհարից։
Եկաւ սիրուհիս, ու կեանքս է գընում,
Աստուած իմ արդար.
Մէկ շունչ կեանք տուր այժմ, և վերջին օրն ինձ
Յարութիւն մի տար։

Փասաի

Սիրոյ դրոշմով խարանեցի
Քեզ, ով իմ սիրտ, անխոհեմ,
Որպէս զի երբ կորես ինձնից,
Այդ նըշանով քեզ գտնեմ։

Փարարի

Մեռնում եմ ահա անյուսութիւնից,
Բայց տես շրթունքիս՝ բերկրութեան ժպիտ,
Քանզի չարչարանքն իմ հոգեվարքի
Ցոյն իսպառ կտրեց յուսացողներիդ։

Փէյզանի

Փորձում է միշտ նազելիս
Տանել իմ սիրտն ու հոգին,
Իսկ երբ տանում՝ քըմահաճ
Դառնում է խիստ, չարաճճին։
«Դառն խօսք չ'ասես», խնդրեցի.
«Լռի՛ր, յիմա՛ր», ասաց նա,
«Երբ խօսքն հասնէ շրթունքիս,
Չէ որ պիտի քաղցրանայ»։

Փէրդովսի

Տիեզերքն ամբողջ եթէ գոյութիւնն
Ուրանան նորա,
Չի նստի փոշի նորին Մեծութեան
Քըղանցքի վերայ։

ՎԵՐՋ

ՆՈՅՆ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ԿՂԶԻՆԵՐԻ ԼՈՐԴԸ» Ուալտէր Սկոտի (սպառուած)
«ՊՈՄՊԷՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ» Լորդ Լիտտոնի (սպառուած)
«ԴԵՒ» Լերմոնտովի . . . („)
«ԼՃԻ ԼԷՅԴԻՆ» Ուալտէր Սկոտի (դիմել «Փարոս» տպարան)
«ԾՈՎԱՀԷՆԸ» Լորդ Բայրոնի . („ „ „)

ՊԱՏՐԱՍՏ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

«ԾՈՂՈՎԱԾՈՒ» Զանազան Եւրոպական գլուխ գործոց բանաստեղծութիւնների
«ՍԻՐԱՆՈ ԴԸ ԲԵՐԺՐԱՔ» Էդմոնդ Ռոստանի
«ՔԱՂՈՒԱԾՆԵՐ» Սաադուց.
«ՔԱՂՈՒԱԾՆԵՐ» Հաֆէզից.
«ՑԱՆԳԱՐԱՆ» Կազմուած հայերէն.

ՀՀ Ազգային գրադարան
NL0312473